 խաղ ու պարով ճեմն առնելով գայ մեր հետ :
 Պատարագի ժամէն յառաջ հասանք գեղ ,
 Ըստանցատուն չողանք՝ գտանք ոչ մեզ տեղ .
 Վանսի Պարսից արքայորդին հոն կուգայ ,
 Այլ մեզ պէս խեղճ ուղղորդին ո՞վ տեղ կուտայ :
 Բւստի ասի անդ ընկերացս շուտով ձի՛ ,
 երթանք խնդրել՝ չլինի գնանք վերջ հետի .
 Ըստարէրէլ տեսայ տուի անցագիր ,
 Եւ ուղեցի որ կատարէ մեր խնդիր :
 Պատասխանեց ամենեւին թէ ձեզ ձի ,
 Չեմ կարող տալ թէ տամ ինձ ցաւ հանդիպի .
 Բնդ հրամանաւ այլոց գոլով պարտէ որ ,
 Մեծիս հրաման յարգեմ ըշտապ ակնկոր :
 Արդ՝ հեռագիրն մի ժամ յառաջ բերաւ լուր ,
 Թէ ձի չվատնես՝ Պարսից մեծ խան գայ քեզ հիւր .
 Նորա համար այժմ երիվարք խմբովին ,
 Տեղ մը չգնալով պիտի սպասեն իշխանին :
 Ուրեմն սիրով անկեղծ խօսքերս յարգեցէ՛ք ,
 Ուրիշ միջոց մտածելով գնացէ՛ք .
 Խսկ եթէ ոչ երեք չորս օր Տիլիճան ,
 Սպասեցէ՛ք՝ որ վերջ ձգեմ ձեզ ճամբան :
 Մեծ կառապետ զայս ճառելէն ղկնի ,
 Կարեկցաբար գո՛գ թէ ի մէնջ ըստանի .
 Խանի գալու զբաղմունքով զբաղեր ,
 Ինքն և ծառայք գործոց մէջ յոյժ ճապաղեր :
 Ասոնց այսպէս իրարանցումն մինչ տեսի ,
 Յուսահատեալ ընկերօքս գիւղ գնացի .

Ո՞հ ինչ ցաւոտ վայրկեանք ելին մեր հանդէպ ,
Որ չեմ ուզեր դիպուածս մի մի առներ վէպ :

Բ. Պատարագի զանկագի ձայն առնելով ,
Չոգայ տուն Տեառն ցաւերս փրկչին յայտնելով .
Անհնարինքն ի մարդականէ ասի ես ,
Հնարաւոր են Տէր Յիսուս կարի քեզ :
Յաջողութիւն տո՛ւր աղաչեմ մեր ուղին ,
Եւ մի՛ թողուր կալ ի դրունս օտարին .
Մեր դէմ ետեալ երեքօրեայ պակաս չուն ,
Հասո՛ աւարտ՝ և արա մեզ գթութիւն :
Կիրակի էր ժողովրդոց բազմութիւն ,
Խումբ խումբ եկեր հաւաքուել են ժամատուն .
Դարձուցի աչքս իւրեանց վերայ նայեցայ ,
Կացուածս նոցին դիտելով շատ ցաւեցայ :
Հողերու մէջ ծունկի վերայ նստեր են ,
Դառն արտասուօք գետին անդամ կթրջեն .
Կուրծս ծեծելով կակծանաց հառաչանս ,
Արձակելով՝ փրկչին առնեն պաղատանս :
Ի նմանէ խնդրեն զներումն յանցանաց ,
Եւ յետ աստեացս՝ տո՛ւր մեզ ասեն փառս անանց .
Ահա՛ սապէս պարզ աղօթիւք ջերմեռանդ ,
Ողջ գիւղական եկեալ հայցուածս առնէր անդ :
Հէգ վշտակիրս եւս ասոնց հետ միացած ,
Հեծկլտանօք աղօթս առնեմ առ Աստուած .
Թէ լո՛ւր Տէր իմ ժողովելոցս նուազ ձայն ,
Եւ արա զմեզ արժան քո սուրբ գթութեան :
Տո՛ւր աղաչեմ մեզ Մարգարէր յաշխարհի ,
Առաքինի վարուք ապրիլ շատ տարի .
Ի վերջոյ մինչ մնաս բարի կենցաղոյս ,
Տալով զառուինք՝ չմերժես զմեզ Տէր Յիսուս :


Լո՛ւր Ողորմած ե կատարեա իմ սոցա ,
 Բարի խնդիրս՝ որ ձօնեցինք Քեզ ահա՛ .
 Ժառամ անսա՛ մաղթանաց քոյդ փոքր հօտին ,
 Մի՛ զանց առնելո՛ր զի քո եմք սուրբ արեան գին :
 Խնդրեմ՝ նաեւ յաջողութիւն մեր ուղին ,
 Շնորհեա՛ փութով՝ հասանեմք մեր փափաքին .
 Գնամք ի սուրբ Էջմիածին գահ Հայոց ,
 Միջոց մը հանդիստ օր անցուցեմք նորա ծոց :
 Գ. Ժամն աւարտուաւ որ օրհնեսէն զկնի ,
 Ժողովրդեան դարձայ զայս բան ծանուցի .
 Թէ երեկոյ հրամայեցէք շուտով ժամ ,
 Որ պիտի ձեզ բարոյական խրատ տամ :
 Զայս ասելով տէրտէրին հեա միատեղ ,
 Եկեղեցւոյ դուռն կղպելով կերթանք գեղ .
 Բարեպաշտի մի տուն նստած կերինք հաց ,
 Որ նոյն օր ճաշ պատրաստեր էր աղքատաց :
 Երկու տողով հիւրասիրիս հանդերձանք ,
 Բանասիրացն նուիրելու ունիմ կամք .
 Թորվան դուխ սեղանի լաթ պարզեր են ,
 Բոլոր բոլոր մարդիկ վրան բազմեր են :
 Ակնածութեամբ սպասեն որ Տասպեցին ,
 Հայր մեր խծաէ՛ որ նոր բարեւ տան հացին .
 Այս սեպհական սովորութիւն է Ազգին ,
 Առանց Հայր մեր չկիսեր զհաց սեղանին :
 Փառք յաւիտեանս ասելով զայն լմցայ ,
 Տեսինք տանտէրն օղին առաւ ձեռքն ահա՛ .
 Լեցոյց մի հատ՝ խմաւ նախ ինքն ջերմ սիրով ,
 Ժողովելոցս բարի եկիքն ասելով :
 Յետոյ զոյդ զոյդ իւրաքանչիւր բազմական ,
 Նոյն օրիէն մասնակցելով գոհացան .

Այժմ ամէն ոք կերակուրի սպասէ ,
 Ինչու օղին ակորժակներ բացեր է :
 Փութով համեղ ձաւրէ վռօշ տանտիկին ,
 Պնակներով ներկայացոյց մեր առջին ,
 Ախորժակով նոյն տաք վռօշն խմէինք ,
 Եւ եփողի մատաղ որդիքն օրհնէինք :
 Հայաստանցւոյն գո'գ թէ պահոցն այս վռօշ ,
 Պատուական է երբ մէջ նաեւ բրդեն լոջ* .
 Անոր համար Մուշ՝ Երեւան՝ Պայազիտ ,
 Վան՝ և Բաղէշ այս կերակուր շինեն միշտ :
 Վռօշէն ետք կարմիր լոպին յաջորդեց ,
 Սա մեկալին պէս ինձ անուշ չթուեց .
 Վաանորոյ ես սկսեցի ուտել բող ,
 Եւ զայն ուտող գինիին գէմ լինի դող :
 Բաղմականներ ինձ նայելով անոնք ալ ,
 Սկսեցին շօր** բողիկին բարեւ տալ .
 Բող ճաշելով խմենք վրան քաղցր գինին ,
 Զի գիտէ նա բառնալ զհոգ տրտմազին :
 Արդարեւ մեր սրտմաշական թախժութիւն ,
 Եբարձ ի մէնջ նոյայ գիւտի զօրութիւն ,
 Զափ գիտցողին անուշ լինի շատ անուշ ,
 Իսկ չարաչար գործածողն է խենդ . և անյուշ :
 Մեր խմբին մէջ չունէինք մեք այնպէս մէկ ,
 Որ գինիին տայր իւր պատիւն և արժէք .
 Այլ ամէն ոք չափ ճանաչէ իւր անձին ,
 Եւ զեխութեան չաշակերտեր բնաւին :
 Սեղանակից եղբարցս զընթացս մինչ աշեմ ,
 Անուշ լինի հազար անուշ կը ձայնեմ .

* Լաւաշ հաց :

** Աղի :

Տամ երանի՛ , այն խումբերուն որ մեզ պէս ,
 Պարզ խնդութեամբ զուարթանան ի հանդէս :
 Զիթով քլա՛ մեր ցնծութեան թագն եղաւ ,
 Երբ տանտիկին ամսէով մեր դէմ գրաւ ,
 Խոշոր խոշոր կտալով կամք հարցուցինք ,
 Զինքն գգուելով՝ և քաղցն ի մէնջ վանեցինք :
 Ահա՛ սապէս պարզ խորտիօք յաղեցանք ,
 Եւ սուրբ սրտիւ փառս տալով Տեառն գոհացանք .
 Պարտական է մարդ միշտ առ Տէր խնկարկու ,
 Մնալ , վասն զի հոգայ պէտս մեր լու ի լու :
 Պատարագիչն նոյն տան ի կեանս փոխելոյ ,
 Բաղկատարած ձեռօք խօսեց մի հոգոյ .
 Իսկ Հայրն մեր ինձ թողաւ բաժին՝ ասի զայն ,
 Պահպանիչով մը վերջ օրհնեցի բաղմական :
 Խօսքս դարձուցին առ հիւրընկալ տունուտէր ,
 Ասի բարիս քո բաղմազեղ առնէ Տէր .
 Դու որ այսչափ կարկառեցիր մարդոց հաց ,
 Թո՛ղ մէկին տասն պարգեւէ լնն փոխադարձ :
 Բարեաւ մնասն ասի նոցա դարձայ տեղս ,
 Դա՛ն ներկայ Գրիգոր Ռսկան ընկերներս .
 Որ նստել են միմեանց ահա՛ յանդիման ,
 Եւ կեանճայու կանչեն խաղեր Պարսկական :
 Զիս տեսին ոչ խաղ վերջ արին՝ նիրհեցինք ,
 Ապա զարթանք շէն բաւական ճեմեցինք .
 Կուղեմ հիմայ չորս հինգ տող բան վեր գիւղին ,
 Տեղեկութիւն տալ սոյն թերթիկս դիտողին :



ԳԼՈՒԽ ԺԱ.

Ա. Տիլիճանայ ստորագրութիւն : Բ. Ուսման անտարրե-
րութիւն՝ և ստաճարկութիւն առ Մայր Աթոռն վասն
հոգ տանելոյ ուսման : Գ. Շինութիւնք՝ հեռագիրն ելլն :
Դ. Մեր հարցական եղանակաւ քարոզ՝ ժողովրդոց ծա-
րաւն առ այն և քահանայի հիւրասիրութիւն :


Ա. Տիլիճան գիւղ ձորերու մէջ շիներ են ,
եւ չորս դեհէն լեռներ պարիսպ կապեր են .
Մար կաղամախ՝ կեայնեն՝ արտուծ և նոճին ,
Հովհար են Տիլիճանայ զաւակին ,
Խըր անունով ունի գետակ մի ահա՛ ,
Որ գողալով վաղէ ի գիրկ նա Կուրայ .
Սիմոնովկի սարից գայ հատ մի եւս ջուր ,
Որ շինիս տակ Տիլիճանին լինի հիւր :
Վաթսունի չափ զուտ Հայերէն գերդաստան ,
Գիւղաքաղաքս բնակութիւն արող կան .
Բաց ի Հայոց ուրիշ ազգաց ոչ մէկուն .
Գտանի աստ՝ ոչ ընտանի և ոչ տուն :
Լոկ յայլ դեհից քանի մը պանդուխտ խանութպան ,
Արհեստաւոր առտ աւասիկ մարդիկ կան .
Արհեստներն են՝ հիւս՝ հացագործ և դերձակ ,
Դարբին՝ պայտառ , գլիներան և փերեղակ :
Կարելի է մէկ երկու եւս սոցա պէս ,
Պարզ արհեստներ աչացդ լինին ի հանդէս .
Կրպակաց թիւ քսանէն քիչ մ՝ էվէլէ ,
Որ երթեկացն և դաւառին կբաւէ :
Շինիս մարդիկ ամենեքեան հողագործ
են , և ուրիշ արհեստներէ կան անփորձ .
Իննեւ տասան դարն Բաղայ օր կարծելով ,
Հին գրութեամբ հերկեն ղերկիրն քրախքով . . . :

Մեր ազգին զոյգ մը ժամատուն կայ Տիլիճան ,
 Մին շատ հին է՝ բայց միւս հերոս լմրցան .
 Մեք հոն էինք դեռ նորաշէն օծեալ չէր ,
 Այլ գալստեան Մաղկազարդին սպասէր :
 Մի քահանայ ունի սա գեղ՝ զոյգ մը դպիր ,
 Միւս մնացեալք ձայնից սոցին ունկնդիր .
 Կարգաւորեալ եկեղեցիք Հայ ազգին
 Տեսնողք՝ չկարեն հանդուրժել հոս բնաւին :
 Բ. Ո՞հ դեռ կայ ոչ գիւղաքաղաքս վարժարան ,
 Ուստի տղայք մինչ իրիկուն ման կուգան ,
 Մատաղ օրերն առանց ուսման ի զուր տեղ ,
 Ճան խաղալով անյուշանեն իւրեանց գեղ :
 Ծնողք սոյլն տգէտ գոյով յարգն ուսման ,
 Ջեն ճանաչեր՝ ուստի տղայք կան խոպան :
 Քաջալերող չկայ իրենց այս մասին ,
 Նորա համար տղայք կան նոյն վիճակին :
 Սուրբ Աթուին անժխտելի պարտքն է որ ,
 Իւր թեմից մէջ դպրոց բանայ փառաւոր .
 Հրաման հանէ ամէն քաղաք յաջորդաց ,
 Որ դպրոցներ բնաւ չձգեն ի ձեռաց :
 Բաջալերեն ուսումնական պատուելիք ,
 Որ անպատճառ կրթեն Հայոց ողջ որդիք .
 Թո՛ղ ուսանին՝ հասնեն ի ծայր գիտութեան ,
 Ի՞նչ թերեւս բարգաւաճի Հայաստան :
 Սահակ. Մեսրոպ. Եզնիկ. Մովսէս. Եղիշէ ,
 Դաւիթ անյաղթ՝ Կորին՝ Ղեւոնդ և Մամբրէ :
 Այլովք հանդերձ երբ դպրոցէն ծնանին ,
 Յայժամ տի Հայն հասանէ իւր փափաղին :
 Ասլա թէ ոչ առանց դպրոց ազգ Հայոց ,
 Յառաջ չերթար՝ և բուժել չի սրտի խոց .

Այլ մնայ միշտ ողորմելին խղճալի ,
 Ծաղր՝ և ծանախ օտար ազգաց յաշխարհի :
 Ուստի Հայ ազգն խնդրէ ի քէն սուրբ Աթոռ ,
 Որ դպրատունքդ ուսմամբ առնես փառաւոր .
 Զի սպասէ Մայր Ծնողէդ նա յուսով ,
 Որ իւր ցաւոց դարման տանես ըշտապով :
 Նա մանաւանդ օրինակաւդ քո բարի ,
 Պէտք է լինիս պարծանք Հայոց աշխարհի .
 Յառաջադէմ ժառանգաւոր մի դպրոց ,
 Պիտոյ է որ Մայր Աթոռոյդ բանաս ծոց :
 Նահանգներէդ ժողովէ ուշիմ աշակերտ ,
 Եւ բերել տուր քանի մ' ընտիր վարժապետ .
 Յանձնէ ազայք վարժապետաց խնամոց ,
 Որ հմտագոյն լինին յիմաստս սուրբ դրոց :
 Երովրական ծաղկեալ ազգաց սովեստներ ,
 Թո՛ղ յեղյեղեն յԱզամախօս բարբառ մեր .
 Ունին Հայեր նոցա ընտիր արհեստներ ,
 Եւ մշակեն զիւրեանց բերրի երկիրներ :
 Այսու պիտի պճնաղարդի Հայաստան ,
 Նա որ հասեր՝ այժմ ահա՛ կէտ կործանման .
 Վերջ քո ջանից և երա՞խտեաց փոխարէն ,
 Քեզ դովաբան ստանաս Ազգն համօրէն .
 Այսչափս առ այս հէրիքասցի մեք կրկին ,
 Ստորագրենք յիշման արժան բանք գիւղին :
 Գ. Արքունական քանի մը հսկայ շինութիւն ,
 Կան՝ որովք դեղ զգե՞նու նոր ցնծութիւն .
 Յուզին վերայ հնութեան հետք մի տեսի ,
 Եկեղեցի է թէ այլ չէ՞նք չգիտացի :
 Քիչ պարծանք չէ հեռագրալուրն այս գեղին ,
 Որ շինութեան դեռ լրացած չէ տարին .

Սուլաւ շատ ճոխ քաղաքաց հետ բանակցէ ,
 Եւ տէրութեան հրամանն փութով կրօնարդէ :
 Նկարագիրդ աստ կամիրտեմ Տիրիճան ,
 Մանտր մունտր բաներդ ի գիր առնուլ չէ արժան .
 Ահաւասիկ ժամ զարկեցին ես պիտի ,
 Երթամ տուն Տեառն՝ դի խօսք տուի քարոզի :
 Տե՛ս Ժողովուրդ որպէ՞ս կերթայ խմբովին ,
 Պէտք է լինիմ յառաջագէ՛մ ես նորին .
 Զայս խորհելով վերջ թուղթ գրիչ գրի ետ ,
 Հանդերձեցայ յեկեղեցին նոցա հետ :
 Դ. Ժամէն յետոյ ողջ Ժողովուրդ նստեցան ,
 Ըսպասեն սր հէք պանդխտիս լենն ձայն .
 Դարձայ նոցա սէրն արի ինձ առարկայ ,
 Քառորդի մը չափ նորա վերայ խօսեցայ :
 Ժողովրդեան խօսածս էին հարցական ,
 Ուստի փութով ձայնիս տային պատասխան .
 Զորս ամն անցաւ , որ եղել եմ վարդապետ ,
 Նոր տեսի հօտ մը՝ որ խօսէր պարզ նա իմ հետ :
 Ծեր ու պառաւ յինէն շատ բան հարցուցին ,
 Բացատրութիւն առեալ արեւս օրհնեցին .
 Քանի անգամ ուղեցի որ բանիս ոճ ,
 Համառօտել՝ բայց Ժողովուրդն կրկնեց ոչ :
 Զի ո՞ գիտէ քանի տարին մի անգամ ,
 Քարոզիչի ձայն կլսուէ սոցա ժամ .
 Նորա համար իմ օճիքէն բռներ են ,
 Երկար քարոզ բարոյական պահանջեն :
 Ինչ է իցէ ըստ ինդրանայ ես նոցա ,
 Երկու ժամու չափ պարզ խրատ խօսեցայ .
 Կարճ խօսելուս չկայր ուրիշ ինչ պատճառ ,
 Միայն նոցա հէք կացուածքն ինձ ցաւ կուտար .

Վասն զի խղճեր նստեր են մերկ նամ գեալին ,
 Աիրտ չի տուկար զանոնք սա կերպ գիտողին :
 Այն պատճառաւ սիրէի ես համառօտ ,
 Ընթացք բռնել՝ չլինի թէ ցուրտ նեղէ հօտ .
 Չէի գիտեր թէ նոքա ցուրտ չեն սեպեր ,
 Քանզի ամէնք խոշորակեաց են մեծցեր :
 Ի վերջ բանիս ծեր՝ պառաւ և երախայն ,
 Չամենեսեան օրհնեցի անդ միարան .
 Բաղմականացն մինչ օրհնութիւնս մատուցի ,
 Վազվազակի յետոյ խրատս կնքեցի :
 Ժամէն զկնի տէրտէրին հետ միատեղ ,
 Ճեմ առնելով ելեր կերթանք ահա՛ գեղ .
 Հրաւիրեց զիս երթալ ուտել պատառ մը հաց ,
 Կամակատար եղէ ըստ իւր բաղձանաց :
 Զոգանք իւր տուն նստանք սենեակ՝ միասին ,
 Տղայն բերաւ տաք տաք թէ յեր մեր առջին .
 Զոյգ զոյգ դաւաթ վայելելով հետ առ հետ ,
 Իսկ երրորդէն հրաժարելով կեցայ ետ :
 Թէ յէն զկնի արօրինք պարզ ընթրիս ,
 Ինչ որ առ ձեռն Տէրն շնորհեր էր մեզ բարիս .
 Կերինք զհաց՝ Պարգեւողէն գոհացանք ,
 Եւ խնդրեցինք որ ընդունէ մեր մաղթանք :
 Ըստ իւր կարեաց պատուեց զիս Տէր Յովհաննէս ,
 Շնորհակալ եմ ի նմանէ մեծապէս :
 Ապա վերջի բարեւ նմա մատուցի ,
 Խուցս երթալով կամք մրափմանս յարդեցի :



Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .

Ա. ՄԵԿԵԼԻ Լ ՏԻՎԻՃԱՆԱՅ : Ե զՆԱԼ Լ ՄԻՄՆՈՎԿԱՅ : Բ. ՍՈՒՐԱՊՐՈԹԻՒՆ ՄԻՄՆՈՎԿԱՅԻ Ե զՆԱԼ Լ ՉԱՐԽԵԼՈՒ : Գ. ՀԻՐԱՍԻՐՈԹԻՒՆ ԶԱՀԱՆԱՅԻՆ Ե ԽԵՂԱԳԻՐ ՂԻՂԻՆ : Դ. ԳՆԱԼՈՐՈՒՄ Ե ԱՍՏՈՐԱԳՐՈԹԻՒՆ ՍԵԼԱՆԱՅ ԾՈՒԼՆ :

Ա. ԸՆԿԵՂԱՅԱ ՀԵՌ ԵՐԶԱՐՈՒՄԻՆ ԵԼԱՆՔ ՎԵՐ ,
ՀԱՆԴԵՐՃԵԱԼ ԵՄՔ ԱԽԻՒԻ ԳՆԱՄՔ Լ ՀՈՒՆ ՄԵՐ .
ՏԻՎԻՃԱՆԷՆ ԵՐԵՔ ՀԱՌ ՃԻ ԶԱՐԵՅԻՆՔ ,
ԱՌԱՆԵՅ ԵՐԳԵԼՔ ՄԻՆՀ ԵՐԵԼԱՆ ԳՆԱՅԻՆՔ :
ԱՅՐԻԼ ՎԵՅՆ ԷՐ ԵՐԿՈՇԱՐԹԻ ՄՈՒԹՂՈՒՄԻՆ ,
ՏԻՎԻՃԱՆԱՅ ԽՈՒԻՆՔ ՀՐԱԹԵՂՈՒ ՄԵՐ ԵԼՈՒՄԻՆ .
ԱՅԺՄ ՈՂՂԱԿԻ ՀԵԾԵՐ ԿԵՐԹԱՆՔ ՕՐՈՒՄԿԼՈՒ ,
ԵՒ ՄՈՒԱԳԻՐ ԵՄՔ ՂԻՂԵՐՆ ԱՆԳ ՄԻՆԱԼՈՒ :
ՉՈՒՆ ԿՐԾԱՌԵՆՔ ՀԱՆԴԱՐՈՐԵՆ ԽՆԴԱԳԻՆ ,
ԵՒ ԿՐԻՄԱՅԻՆՔ ՎԱԳԻՒՔ ԿԱՅՄԱՌ ԳԵՌԱԿԻՆ .
ՈՐ ՔԱՄՈՒԱԾՈՅ ԼԵՐԱՆԵՅ ԵՐԳԵԱԼ ԳԱՅ ԳՆԱՅ ,
ԻՐ ԱՂՈՒ ԶԱՅՆ՝ ՄԱՐԴՈՅԱ ՎԻՂՈՒՄ ԳԱՒ ԿՐԱՌՆԱՅ :
ԵՐԵՔ ՎԵՐԱՌ ՆԱԽԻ ԵԿԻՆՔ ԹԷ ՈՂ ՄԵՔ ԱՀԱ՝ ,
ՏԵՍԻՆՔ ՄԵՐ ԳԷՄՆ ԵՐՃԱՆԱՅԱԾ ԿԱՄԷՆԿԱՅ .
ՍՈՅՆ ԳԵՂԱՅԻՔ ՌՈՒՍԱՍՏՈՒՄՆԷՆ ԳԱՂԹԱԿԱՆ ,
ԵԿԱԾ ԵՆ ԱՍՏՈՒՄ , Ե ԱՂԳԱՒ ԵՆ ՄԱՂԱԿԱՆ :
ԱՌ ԱՍԻ ԳԵՐԻՆ ՂԻՆԵՐ ԵՆ ՂԷՆ Ե ԱՆԱԿ ,
ԵՒ ՀՈՒՐՈՒՄԻՆ ԱՆԵՐՈՒՄՆԵՆ ԱՂԱՌ ԿԵԱՆՔ .
ԻՐԵԿԱՆԵՅ ՆԱՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵԱՅ ԱՂԳ ԿԱՐԾԵՄ ԹԷ ,
ԵՐԿՐԱԳՆԴԻՍ ՉՐՇԱԿԱՅՆԵՐՆ Է Ե ՀԷ :
ԿԱՄԷՆԿԱՅ ԳԻՂ ԹՈՂԻՆՔ ԻՐ ԽԵՂՆ՝ ԱՌԵԱԼ ՄԵՐ
ՉԻ՝ ԵԼԱՆԵՄՔ ՄԻՄՆՈՎԿԻ ԳԱՌԻՎԵՐ .
ԵՐԿՈՒ ՈՒՍԱՌՔ ՎԱՐԵՆԻ ԽՈՒՆԻՔ ԼԵՐԱՆԵՅ ԱԽԻՐԱՒ ,
ԽՐԱՐ՝ ՎԵՐԱՅ ԳԻՂԱՅԵՐ ԵՆ ԽԻՐԱՒ ԱՌ ԽԻՐԱՒ :

Ուզղորդ մի երբոր նայէ վայրիցս տեսարան ,
 Կմնայ անշուշտ Յօրինողին գոհարան .
 Արդ՝ այս կէտիս մեր խումբ չմնաց անտարբեր ,
 Պարտքն զգալով ուղարկեց փառս իյեթեր :
 Հանդարտ և մեղմ սոցա շքի ներքեւէն ,
 Երթանք՝ և յար մնանք անաս արեւէն .
 Կամաց կամաց մինչ անտառին տեսինք ծայր ,
 Գո՛գ ընդ նմին կատարեցինք զտօր վայր :
 Խղճուկ ձիանց հատաւ շունչերն իրաւի ,
 Յայտ կողմ սորա պէս չիք դաժան՝ այլ ուղի .
 Հաղիւ ուրեմն Սիմոնովկայ արինք մուտ ,
 Հոն չըսպասեալ՝ ի Զպուխլու երթանք փոյթ :
 Բ. Սիմոնովկայ շիներեն բարձր լեռանց գիրկ ,
 Բայց ո՛ր օդուտ անյարմար է իւրեանց գիրք .
 Զի յուխսին տաք արեւին ենթակայ
 Լինի՝ և իւրն ասպնջական տունի չկայ :
 Իւր ողջ սարերն անտառներէ զրկուած ,
 Կան անհազուտաւ մերկ և աղքատ տնկուած .
 Ուստի ամառ շանթքն արեւու մինչ խաղառ ,
 Սոյն սա շինին կրօնանան չարաչար :
 Նաեւ ձմեռն նեղէ գիւղին սաստիկ ցուրտ ,
 Խժգժօրէն , և երբէք չի աներ դուլթ .
 Բայց սա կայ որ տոկայ ցրտին շինական ,
 Քանզի է նա աղղաւ բնիկ Մալական :
 Հիւսիսային բեւեռի տակ սոցա ցեղ ,
 Սառնամանիք՝ բուք տեսեր են հազար հեղ .
 Անոր համար ՚ի նոցանէ ամէն ոք ,
 Սառնամանեաց խտուրթենէն կայ անհոգ :
 Զմեռ ատեն տեսեր եմ ես Մալական ,
 Մուշտակն հաղած՝ տառիկեր հանդիստ ձեան վրան .

Այսպէս նաեւ իւրեանց ձիերն իրենց պէս ,
Տուրս թող կուտան երբ որ տանեն գէն ու տէս :
Գո՛գ թէ հարիւր տան չափ նորեկ գաղթական ,
Այժմ գեղիս գիրկն պատսպարող մարդիկ կան .
Մեծն ու պզտիկ աշխատութեան բարեկամ ,
Գողով՝ ուստի հարստանան ամէ տմ :
Սխմնովկայն մնաց ի մէնջ բացակայ ,
Զի Զպուխլուն մեզ հրաւէր կկարդայ ,
Ստիպեալ եմք երթալ վութով ի սոյն գեղ ,
Վասն զի քաղց մեզ և մեր ձիանք ձգեր նեղ :
Անոր համար կանապարենք հապճեպով ,
Որ մեր և մեր գրաստներաց բառնամք սով .
Մի ժամէն ետք ողջունեցինք Զպուխլու ,
Որ Սեւանայ ծովէն չէր նա շատ հեռու :
Գ. Գեղի տէրտէր մեզ հրաւիրեց իրենց տուն ,
Զկրկնեցինք ոչ՝ մեր հիւրընկալ սիրելւոյն .
Զողանք իւր տուն ես , Գրիգոր և Ռսկան ,
Միրով ամէնքս նստանք հանգիստ վեր թորվան :
Ուստի՞ էք դու հարցուց յինէն տէր Մինաս ,
Եւ կամ ներկայս ո՞ւր միտք գրած կը գնաս .
Երկու խօսքով նորա հարցման պտտասխան ,
Ուղեցի տալ՝ որ չմնայ մէջ վարանման :
Ասի նմա քաղաքաւ եմ վանեցի ,
Անունս Ղեւոնդ՝ մականունս է Տոսպեցի .
Այժմ ի Պօլսոյ սա եղբարց հետ միատեղ ,
Հանդերձեալ եմք դնալ ի սուրբ Իջման տեղ :
Յայսմանէ զատ մի՛ հարցաներ ուրիշ բան ,
Զի այս կէտիս չեմ կարող տալ պատասխան .
Ողջ մնացինք ետ գառնալէս զկնի ,
Մեր նստատակն մերկանամ քեզ լի ու լի :

Թէ յաջողեց Տէրն այն մեծ դործն աղդային ,
 Ոչ միայն քեզ՝ այլ և ճառեմ աշխարհին .
 Մի՛ արասցէ թէ որ մնաց անկատար ,
 Այժմ՝ չսերվի՛ր՝ չես ցաւեր վերջ չարաչար :
 Ճիշտ պատմութեանս համոզուեցաւ քահանայն ,
 Քանզի էր այր մտացի և խոհական .
 Խփեց բերան , առ այս նա ոչ հանաւ ճիկ ,
 Միայն մաղթեց՝ որ կատարէ փոյթ երկինք :
 Չգեց զրոյց՝ հող տարաւ նա սեղանին ,
 Եւ պատուեց մեղ բառ Տէրունեան սուրբ բանին .
 Արդ՝ կշտապինդ վայելելով իւրեան հաց ,
 Ասինք Տեառն տո՛ւր միոյն հարիւր փոխադարձ :
 Զպուխտէն դեռ չզատուած երկու տող ,
 Բանիւ ճառենք թիւ բնակչաց՝ դիրքն ու հող .
 Յիսունի մօտ Հայոց աղգէն դո՛ղ թէ տուն ,
 Բնակիչք կան՝ որ ունին աստ շինութիւն :
 Եկեղեցի մը ունի սա շէն մի տէրտէր ,
 Ժամ չերթալուս՝ չկարեմ պատմել իւր վասն էր .
 Գեղարքունի լերներու գիրկ արձակ տեղ ,
 Յարեւմտեան լճի դեհէն կայ այս գեղ :
 Նայէ ազատ ծովուն վերայ սա սիրով ,
 Հեզիկ ալեաց խաղ՝ պարն յաւէտ դիտելով .
 Հող երկրին է բաւականին բարբեր ,
 Եւ չի ձգեր անվարձ կտրիճ մշակներ :

Գ. Զպուխտայ հրաժեշտ յետին մեր տալով ,
 Գնամք ի տես Օրտակուայ փութալով .
 Մինչ երեկոյ Գեղամայ ծովն իւր երես ,
 Ծիծաղադէմ պատկերացուց ի մեղ տես :
 Ծարառն ի մէջ՝ ախորժանօք իւր պաղ ջուր ,
 Խմելով իւր սրտին կմարէ տապ և հուր .

Ուստի ով ոք անց դարձ անէ իւր քովէն ,
 Ամենեւին չի չարչարուեր ծարաւէն :
 Յօժար սրտիւ լճիս վերայ երկու տող ,
 Տեղեկութիւն կուզեմ դրել և ներքող .
 Թէ և դրածս պիտի լինի համառօտ ,
 Վասն զի ծովու շրջապատն ինձ չէ ծանօթ :
 Արեւմտեան դեհին միայն ես գիտակ ,
 Ուստի տեսածս ի գիր առնում համարձակ .
 Սեւան լճի ողջ շրջապատ գրեթէ ,
 Մի ձիաւոր չորս օր հազիւ պտտէ :
 Երկարութիւն արեւելքին ձգելով ,
 Հիւսիս հարաւ լայնութեան են ջատագով .
 Դեղարքունի և այլ սարի շղթայներ ,
 Իբրեւ պարիսպ աղու Սեւան պարփակեր :
 Հարաւային արեւմտեան դեհն է որ ,
 Այս շղթայէն ապրի ազատ՝ փառաւոր .
 Աստի է որ գտեր Հրազտան* իւր ճամբայ ,
 Եւ նազ ի նազ գիմէ ի գիրկն Երասխայ :
 Շատ գիւղերայք միջնորդութեամբ Սեւանայ ,
 Ի վտակացն ոռոգանին Հրազտանայ .
 Սուաւ մարդիկ Նիգ և Կոտայք գաւառայ ,
 Մին ցանելով տասն առնեն տեղ փոխադարձ .
 Այս ծովն ամիս մի տեսակ ձուկ կրերէ ,
 Զիւրս շահելէն վերջ՝ Տիֆլիսն եւս առաքէ :
 Արդ՝ մի միայն պակասութիւնն Սեւանայ ,
 Այն է՝ որ իւր վերայ բնաւ նաւ չկայ .
 Նաւուց փոխան ունի քանի հատ լօթկայ** ,
 Որ ձկնորս ոք տարեալ իւրեան ձուկ որսայ :

* Այս գետին այժմ՝ զանկի եւս ասեն :

** Մակոյէ :

Կարճ ի կարճոյ անուշ լծիս տեղագիր ,
 Բանասիրաց համար ահա՛ առի գիր .
 Ուրեմն փետրիկ փոխէ՛ ընթացքդ քոյդ բանի ,
 Ծաղկոցածորն ցոյց մեղ թէ ո՛ւր կանկանի .

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Ա. Ստորագրութիւն Ծաղկոցածոր գաւառին : Բ. Օրտակու
 լու ժամանել՝ գնալ յեկեղեցին և ողորմելի մերկութիւն
 նորին : Գ. Թիւ քահանայից , ժամասացութիւն դարաց ,
 չիրխք գեղջն և հողագործք : Դ. Պանդխտութեան վնաս
 ոմանց գաւառաց՝ ծառապուրկ վիճակ գիւղին , հիւրա-
 սէր երիցժոխան և այլն :

Ա. Արարատայ գաւառներէն մին է սա ,
 Որոյ սահման կից է վայրիցն Գեղամայ .
 Մեւան ծովու արեւմտեան կողմանէ ,
 Բաժին առեալ մինչ Քրքպուլաք կտանէ :
 Մէյտան՝ Գիւթան՝ Չմանգուլն և Արագած ,
 Իբրեւ պարիսպ Ծաղկոցածորն են պատած .
 Արեւելեան գեհէն միայն անհող կայ ,
 Ձի սարի տեղն տեսնայ միշտ լիճն Գեղամայ :
 Իւր մէջն ունի քառասունէն աւելի
 Գիւղեր՝ որոց մեծ մասն Հայոց պատկանի .
 Միտս իմ եկեալ գիւղորէից անուանց շարք ,
 Յիշենք՝ չլինի մոռնալ տայ մեղ ժամանակ :
 Յամաքարերդ , Ծաղկունք Փշնի՝ Դգմաշէն ,
 Կաղսին , Սոլակ՝ Գոմածոր և հին Աղթէն .
 Ելինովկայ՝ Չըբչըբ՝ Շահրէղ՝ Օրտակու ,
 Քարվանսարայ՝ Թաքչարբի և Չախմախլու :
 Պապաքիշին՝ Սօխիֆանտալ՝ Մեւքի գեղ ,
 Ա՛ռ Աղփարան նաեւ Եայկչին միատեղ .

Սոցա անուն ես սերտելով գրեցի ,
 Իսկ չգիտցածներս այլ ուղղորդի թողուցի :
 Կուզէի որ այս գաւառին տեղն ի տեղ ,
 Ամէն ինչ բան ստորագրել ցեղ առ ցեղ .
 Աւա՛ղ , գրիչս աստ կաշկանդի տկամայ ,
 Ձի գրելու երբէք մի՛ծոյ չունի նա . . . :

Բ. Ժամ ինն կիսուն որջունեցինք Օրստակու ,
 Եւ մտադիր եմք գիշերն հոս մնալու .
 Երկցիտիսան ուէս Ղուկաս սիրելին ,
 Ասպնջական հանդիսացաւ մեր խմբին :
 Եկեղեցւոյ զանգակներու ախորժ ձայն ,
 Տեսուն ի պաշտօն հրաւիրէր փոյթ գիւղական ,
 Մեք եւս սոցա հետ գնացինք միարան ,
 Եւ տօնեցինք նախատօնակն Աւետման :
 Փափաղէի ժողովրդեան քիչ մը խրատ
 Խօսիլ՝ սախայն յոգնած էի նոյն օր շատ .
 Խեղճ ժողովուրդն ո՞հ անխրատ դարձուցի ,
 Եւ այս արածս եղեւ ինձ յոյժ ցաւ սրտի :
 Փոքր ի շատէ նկարագիր սոյն գիւղին ,
 Առնուլ ի գիր՝ պարտ համարիմ իմն անձին .
 Նախ և առաջ Տիրոջ տունէն բսկսենք ,
 Եւ միւս բաներ չղթայաչար հետ կցենք :
 Հին քարուկիր եկեղեցի մի է սա ,
 Մե՛ղք , չինութեան ճիշտ թուական չիմացայ .
 Լուսամուտներ քիչ լինելուն գրեթէ՛ ,
 Խաւարն ի ներս իշխելու մուտ գտեր է :
 Եկեղեցւոյն մի խորան կայ ողբալի ,
 Որ տեսնողի աչքունքն արեամբ կանէ ի .
 Փայտեայ խաչկալ մ՝ է միմիայն իրեն զարդ .
 Խեղճ գիւղացին գիտեմ՝ պարծի նովաւ շատ :

Թերթա՞ ընթերցող Ձմիւռնւոյն թո՛ղ չկարծէ ,
 Ձի սյապիսիք հաղար զուռուշ կշինէ .
 Պօլոյ պէս չիք հոս կերպասեայ հանդերձանք ,
 Այլ բամբակեայ են իւր շապիկ և շուրջառք :
 Գ. Տեսաւն ի պաշտօն գտի ներկայ չորս տէրտէր ,
 Իսկ դպրաց խումբն երկու տասն եւս լեցուն էր .
 Մինչ խառի խուռն սուրբ շարական երգէին ,
 Գիտնականի մը գորովն ու ծաղրն շարժէին :
 Գորով որ նոյնք բոլոր տղէտ են մեծցեր ,
 Եւ վարժիչի դիմաց երբէք չեն նստեր .
 Վասնորոյ այժմ ուղածին պէս ամէն ոք ,
 Երգէ՝ և ոչ մէկէ մը լսէ նա բողոք :
 Իսկ ծաղր՝ որով ոմանք երգեն յաւէտ ցացր ,
 Եւ ոմանք եւս պահնորդի պէս պոռան բարձր .
 Անոր համար մեր ներդաշնակ շարական ,
 Աստ քաղցրութիւն իւր մերկացեր ամենայն :
 Երանի՛ , թէ կշմիածին հեղ մի աչք ,
 Դարձուցանէր և նկատէր սոյն տեղուանք .
 Ես յուսամ որ դիտելէն վերջ՝ նա պիտի ,
 Կարեկցարար հոգ տանելու ստիպուի . . . :
 Ժամէն դինի գեղի չորս կողմն պտտայ ,
 Հնութեանց հետս աշելով բան չտեսայ .
 Գերեզմանոց կայր քանի մեծ խաչաքար ,
 Որոց տէրեր անուանի գոլ մեղ ցոյց տայր :
 Ի մէջ սոցա տեսի մի հայ նահատակ ,
 Որ ի սէր Տեսաւն թափեր արեան իւր կայլակ .
 Մութ լինելուն արձանագիրն չկարդացի ,
 Ձի գիտնայի՝ երբ ետ հրաժեշտ աշխարհի :
 Օրտակու գեղ ու թսունի մօտ գերդաստան ,
 Մեր հայ աղգէն գո՛գ թէ կեցող անձինք կան .

Մեւան ծովուն արեւմտեան կողմին կից ,
 Շինեալ են գեղն՝ և տունքն են ողջ աղիւսից :
 Աղբիւր չունին փոխան նորա ծովու ջուր ,
 Խմէ նատողն՝ թէ ինքն և թէ հաւ՝ ճեառ խր .
 Մեծ մասն գեղին հողաղործ են արհեստիւ ,
 Բայց որչափ են լուծք և բանող չգիտցայ թիւ :
 Քրտնեւով հերկեն զերկիրն անընդհատ ,
 Եւ Բնութիւն վարձատրէ նոցա շատ .
 Այսպիսաբար ամենայն ոք մնայ գեղ ,
 Եւ սիրել չի պանդուխտ գնալ յօտար տեղ :
 Երանի՛ թէ Սերաստիայ՝ Մուշն ու վան ,
 Մոցա նման օտար երկրի չբաղձան .
 Մնան իրենց հայրենեաց գիրկն աշխատեն ,
 Եւ ընտանեաց հետ հանգիստ կեանս անցուցեն :
 Ծլին՝ ծաղկին մատաղ թողամբք և որդով ,
 Թէ համբերեն կշահուին անշուշտ Աստուծով .
 Յայն ժամանակ պիտի դժբախտ Հայաստան ,
 Յոյս ունենայ կրկին անգամ նորոգման :
 Ծառաստանէն զուրկ է կեցեր Օրտակլու ,
 Եւ միւս գեղերն եւս սորա պէս գիտցիր դու .
 Զկարծես սոքա մրդի համար հոգս անեն ,
 Ոչ ուզածներն երեւանայ միշտ բերեն :
 Համառօտենք Օրտակլուայ պատմութիւն ,
 Ընթերցողաց չլինի առթենք տաղտկութիւն .
 Դառնամք ուրեմն երկրփոխան եղբօր տուն ,
 Քիչ մի հանգչենք՝ իցէ՞ մառնանք յոգնութիւն :
 Բաց ի մէնջ մի քանի հատ եւս ճամբորդներ ,
 Եկեր են աստ՝ որ լոյս փոխեն հոս գիշեր .
 Վանայ երկրեն Աստուածածնի գեղական ,
 Վանուց անուամբ՝ նուիրակ են սոյն սահման :

Երեկոյն ընկերութեամբ միարան ,
 Հաց ուտելու նստանք ամէնքս ի սեղան .
 Ճերմակ լաւաշ հետ կաղամբեայ թթուին ,
 Վայելելով խրկեցինք փառս Անեղին :
 Օրհնեցինք եւս ոէս Դուկաս տանուտէր ,
 Որ մեզ ամէնքս հիւրընկալեալ արար սէր .
 Հիւրասիրիս վարձատրեա՛ լիօրէն ,
 Մարդասէր Տէ՛ր , քո բազմառատ պարգեւէն :
 Օրհնեա՛ զինքն իւր զերդաստանօք հաւասար ,
 Պահեա՛ անփորձ իւր կալն ու արտն՝ կով, ոչխար .
 Փրկիչ Յիսուս մեղաւորիս խնդրեմ ձայն
 Լո՛ւր՝ ե՛կայո՛ զհիւրասէրն անսասան :
 Բազմապատկեա՛ թիւ սոցա Դու Հայաստան ,
 Որ մեզ նման խեղճ ուղղորդներ չվշտանան .
 Փառք Աստուծոյ իրր Արրահամ Հայկայ տուն ,
 Սովոր է միշտ սեղան կաղմել նքթելոյն :
 Հացէն զինի նստանք կարգաւ եղբարցս հետ ,
 Մինչեւ ժամ չորան խօսակցեցանք սիրով սերտ .
 Վերջապէս քուն մեր զրուցի թել կտրեց ,
 Բոլորս մէկէն խոր նիրհման մէջն ընկղմեց :
 Շուտ արթնցանք արշալոյս նոր ծագեր դեռ ,
 Հանգերձեալ եմք պիտի գնամք Քանաքեռ .
 Մեզ յանձնեցինք մեր Արարչի սուրբ կամաց ,
 Որ պահպանէ յամենայն կերպ փորձանաց :



Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Ա. Գնալ 'ի կոտայք գաւառ , և անտի 'ի Քանաքեռ :
Բ. Երթալ յԵրեւան և անտի 'ի սուրբ Էջմիածին : Գ .
Մեր նկատմամբ կաթողիկոսի դիրք , Նորին հարցմունք
և մեր պատասխան : Դ . Մերթումն կարեւոր խնդրա-
նացս՝ առ մեզ սպառնալիք , և մխիթարել զմեզ հարց :

Ա. Վերջի ողջոյն մեզ հիւրընկալ Հայ գիւղին ,
Տալով դիմենք 'ի դիրկս կոտայք գաւառին .
Բայց սա այժմիկ թուրքաց ձայնիւ Քրքպուլաք ,
կոչուի , և իւր ծայրն է Գիւթան լեռան տակ :
Մինչ Երեւան արեւմտեան կողմանէ ,
Դրեթէ իւր երկարութիւն տարածէ .
Երեսունի չափ ունի նա պատրաստի ,
Հայ գիւղօրայք , որք բնակին յիւր գրկի :
Ի սոցանէ քանիներն են մեզ ծանօթ ,
Յիշենք , անցնինք իւրեանց անուն համառօտ .
Իսկ անոնց որ չդիտենք անուն ահամայ
Կլենք՝ մեզ ոք այս մասին թող չբարկանայ ,
Դեօյքքիլիսայ՝ Էլառ՝ Մհուր՝ Սահապի ,
Կամրէզ՝ Առիճ՝ Քրքպուլաք և Պրցապի .
Առնենք 'ի դիր Արամուս և Էլիսաւան ,
Նաեւ Զրվէժ՝ Թաղայդեղ և Զարդստան :
Մեծ սլարծանք է այս գաւառին Քանաքեռ ,
Որ հին փառաց իւր բեկորներ պահէ դեռ .
Ճոխ Երեւան եւս կոտայից պատկանի ,
Որ մին է նա ծաղկեալ շինիցն աշխարհի :
Մինչ արեւակն իւր լոյս երեսն ամիտիէր ,
Եւ աստեղաց նախահրաւէր նոր փայլէր .

Նոյն միջոցին ասպնջական մեր խմբին ,
 Հանդիսացաւ Հայ Քանաքեռ բարեղին :
 Հոն Առաքել երկոյնիտիսան եղբօր տուն ,
 Հիւր մնացինք եղբարցս հետ նոյն իրիկուն .
 Մեզ կշտապինդ կերակրեց ջերմ սիրով ,
 Զխոնջն մեր վանեց իւր այգւոյ քաղցր գինիով :
 Կերանք զընթրիս՝ մատուցինք վառս Արարչին ,
 Եւ օրհնեցինք մեր հիւրընկալ սիրելին .
 Քաղցր զրուցով մի քանի ժամ անցուցինք ,
 Յետոյ պառկանք խառար լուսի փոխեցինք :
 Բ. Արշալուսի հետ գրեթէ միաբան ,
 Կազմուեր ենք պիտի դնանք երեւան .
 Տէրն յուսալով սկիզբն արինք նոր ուղին ,
 Մտանք քաղաք՝ տեսինք ճաճանչն արեգին :
 Մի քանի ժամ հաղիւ կացինք երեւան ,
 Ինչո՞ւ ընկերքս կառք մի բռներ կղնան
 Լճմիածին, ընկերացայ ես նոցա ,
 Զկատարելով կարեւոր գործս վարագայ :
 Վերադարձին թողի զնոսա այժմ սրտնեղ ,
 Նստելով կառք երթամք ի սուրբ իջման տեղ .
 Սրտնեղութեանս պատճառ ուրիշ բան կայ ոչ ,
 Լոկ ընկերքս են որ բռներ են ճամբի սրտ :
 Զատանց ահա՛ կաթուղիկէք Աթուին ,
 Պարզ և վճիտ աչացս հանդէպ երեւին .
 Նոյն սուրբ դմբէթս տեսնալուս պէս սրտիս ցաւ ,
 Փութով դնաց ի բաց քովէս հեռացաւ :
 Փրկչի խաչիւ տեսնադրեմ զիմ երես ,
 Ինչպէս նաեւ Գրիգոր Ռսկան ընկերներս .
 Ապրիլն ութ էր չորեքշաբթի ժամ իննին ,
 Լցոյց Գթած մեր սուրբ կարօտ լիովին :

Ձի հասուց մեղ մեր Մայր Աթոռն աննման ,
Որոյ ընկեր կայ ոչ յաշխարհ ամենայն .

Ձի իւր շինման ճարտարապետն է Յիսուս ,
Այլ մի՛ պարծիր Հռոմ կեցի՛ր դու մի կոյս :
Ետուն զմեզ Ղազարապատ այն սենեակ ,
Որ երեք ամ առաջ պառկեր էի տակ .
Ընկերացս հետ այժմ նստեր ենք միասին ,
Եւ կրտսեմք հիւրընկալի ակնարկին :

Գ. Մեր դալու լուր բշտապ նորա միջոցաւ ,
Կաթողիկոս վեհափառին ծանուցաւ .

Երես չհանած պահանջեց նախ ի մէջ թուղթ :
Երկիւղախառն հանիք մարդոյն տունք փոյթ :
Նա թուղթ տարաւ ես՝ Գրիգոր և Ռսկան ,
Յաւերու մէջ ընկզմեցանք միարան . . .

Քառորդէ մ՝ ետք շաթրքն եկաւ կանչեց մեզ ,
Թէ հրամեցէք Կաթողիկոս կողմէ ձեզ :

Քով գնացինք ընկերացս հետ միասին ,

Ձեռք պագնելով ոտքի կեցանք իւր առջին .

Խոժոռ դիմք հարցուց մեզ անդ վեհափառ ,

Ո՛ւստի դայք դուք՝ ի՞նչ է դալուն ձեր պատճառ :

Խեղճ ընկերներս ակիւբերան լուեցին ,

Պատասխանել ինձ նուաստիս ձգեցին .

Հանդարտօրէն ետու հարցման պատասխան ,

Թէ մանրամասն ճառէ նամակս ամենայն :

Աւ վեհափառդ զիս Մուրատեան խրկեր է ,

Եւ հաստատուն յուսով ի քէն կ խնդրէ .

Որ իւրոյ հարց կալուածներուն հոգ տանես ,

Պարսից ձեռքէն ազատելու ճար նայես :

Ստորագրեալ մահսերէ մը զատ ուրիշ բան ,

Զուղեր ի քէն , առ՛ւր նա իւրն է բաւական .

Վիպենն անդ թէ մեք գիտեմք այս վայրեայ ,
 Երբեմն լեալ են տէր ցեղապետք Մուրատեանց :
 Հրամայեա՛ տէ՛ր Նախնուանայ յաջորդին ,
 Որ հոգ տանէ վերոյիշեալ մահաէրին ,
 Թո՛ղ ժողովէ նոյն կողմի ողջ ծերունիք ,
 Եւ զարնել տայ հանրադրին շատ կնիք :
 Եւ առաքէ առ վեհափառդ առանց ձայն ,
 Որ չլինի թէ զգայ գաղտն Գեալպալան .
 Մի՛ արօցէ թէ որ լաւ անպատճառ .
 Կաշառս տալով խոչ կլինի չարաչար :
 Տո՛ւր նուաստիս առեալ տանեմ ի Պօլիս ,
 Որ ակնապիշ կաշէ գնալս բանտարիս .
 Զայս առնելովդ Մուրատեան տոհմ պարտական ,
 Կացուցանես քեզ օրհներդու յախտեան . :

Դ . Մեր հայցուածին կաթուղիկոս դէմ կեցաւ ,
 Եւ Մուրատեանց պաշտպանութիւն զլացաւ .
 Թուսիոյ զակօն բռնեց իւր պատճառ ,
 Թէ կալուածքներ ձեռք բերելն է անհնար :
 Ասաց ունինք էջմիածնայ շատ գիւղեր ,
 Եւ հաստատուն վաւերութեւդք ի ձեռս մեր .
 Բայց սակայն այժմ նոյն գիւղերայքն օտարներ ,
 Տիրապետեալ ուտեն վանից կալուածներ ,
 Հոս տաան տարի իւր ապրանաց եթէ ոք ,
 Տէր չմնայ՝ այլ չի լսուեր իւր բողոք .
 Դոցա վերայ անցեր երկար ժամանակ ,
 Եւ ձեռք բերելն է շատ խելքիս հակառակ :
 Մեր մահտեսի Մաղաք աղան կանոնից ,
 Զգուրով տեղեակ զուր տեղ լինի իւր փողից .
 Ինչ պէտք էր որ ձեզ երեքիդ նա այնքան ,
 Ծախս առնելով ուղարկէր աստ ընդունայն :

Այլ ես այսու ամենայնիւ Նախըման ,
 Թուղթ մի գրեմ , որ չդատէ զիս Մուրատեան .
 Եւ իրեն եւս սուրբ զատիկէն զկնի ,
 Գործն ո՛ւր հասնէ խմաց կուտամ մի առմի :
 Բայց դուք վաղիւ պէտք է դնաք անպատճառ ,
 Դացէ՛ք որ ձեզ չվշտանամ չարաչար .
 Ահա՛ այսպէս խօսքն աւարտէր վեհափառ ,
 Պէտք է յարդեմք խոր բուռն հրաման չձգեմք վար :
 Տխուր երես վեհարանէն մեկնելով ,
 Դարձանք սենեակ ցաւերու մէջ մղուելով .
 Իրաւացի գանգատանօք քանի մը հարց ,
 Սրտիս վշտերն անդ մերկացայ աչքս ի լաց :
 Սփոփելով նոքա պանդուխտս ասին թէ ,
 Համբեր՛ր վաղ քեզ օր աւերուաց կծագէ .
 Զի վեհափառ չունի դքէն խէթ սրտի ,
 Մի՛ երկնչիր՝ վաղ քոյդ բուժէ խոց սրտի :
 Մեր ամենիս գլուխն եկեր մեք գիտենք ,
 Անոր համար քեզ յուսադրեալ սփոփենք .
 Երեւի թէ սրանեղութիւն Հայրապետ ,
 Դատ նեղել է՝ որ ձեզ արեւ դատափետ :
 Ունկ մատուցի փորձառու հարց խրատին ,
 Եւ յանձնեցին զիս մարդասէր Յիսուսին .
 Ընկողմեցանք ընկերացս հետ առանց հաց ,
 Իցէ՞ Փրկիչն տեսնայ մեր վիշտն անէ այց :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե .

Ա. Մարդասիրական գործով վեհափառին և քաջալերութիւն նորա առ նուաստս ելլն : Բ. Տաճկաստանցի Հայոց մասին կաթուղիկոսի հետ մեր խօսակցութիւն , Գ. օգտակար առաջարկութեամբ խնդիր իմ ինմանէ և բացասական նորին : Դ. Դիրք վանուց և ճարտարասկերտ նորին :

Ա. Ըստոյդ վաղիւ մեզ վեհափառ տարաւ քով ,
 Շատ բան հարցուց Պօլսէն անուշ խօսքերով .
 Համեստ ձայնիւ տայինք հարցմանց պատասխան ,
 Եւ տեղն ի տեղ բացատրէինք զամենայն :
 Խօսք մեզ դարձուց՝ ասաց տղայս զատիկ դուն ,
 Աթուռն արա՛ , բայց ընկերներդ խրկէ տուն .
 Զատկէն յետոյ դքեզ Պօլլիս կուղարկեմ ,
 Ինչ որ պէտք է նամակ առ այս պատրաստեմ :
 Այսուհետեւ քանի աստ ես ամէն հեղ ,
 Վեհարանէն դուրս հաց չուտես ուրիշ տեղ .
 Այլ երեկոյ և առաւօտ անպատճառ ,
 Վարդապետաց հետն ե՛կ հաց կե՛ր հաւատար :
 Թէյի ատէն եւս չանցուցես լե՛ր ներկայ ,
 Խմիր տաք տաք որչափ հոգիդ սիրէ նա .
 Մխիթարեալ վեհարանէն դարձայ տեղս ,
 Ճանապարհի պատրաստեցի ընկերներս :
 Վեհափառի պատուէր նոցա ծանուցի ,
 Յուսադրելով նոյն օր յուղի հանեցի .
 Վերջին բարեւ տալով հիքոյս աւասիկ ,
 Ուրախութեամբ դարձան իրենց հայրենիք :
 Երեկոյեան բաբունիքն ինձ աչքըւսի ,
 Եկին՝ և ես ներկայ դէպքերս պատմեցի .

Լուեալ յինէն չափէն աւել խնդացին ,
 Եւ դահ սրտիւ Յաջողդին փառս տունն :
 Նոյն օրհնութեանց արդ. ես կացի՞ անտարբեր ,
 Ո՛չ՝ քանի՛ փառս առաքելի անդ յեթեր .
 Վասնզի թշուառ սիրտս խոցուած կալեմէր ,
 Յաջող բախտիւս ապաքինեաց կարող ճէր :
 Այժմ՝ չորս բոլորս եկեր լեցուեր ցնծութիւն ,
 Եւ հալածուեր երեկոյեան դառնութիւն .
 Երախտապարս սրտիւ ուստի պարտ է որ ,
 Օրհնեմ դովեմ զիմ կենարար Թաղաւոր :

Բ. Օր քանի հեղ կաթուղիկոս սրբազան ,
 Մարդ խրկելով զիս կտանէր վեհարան ,
 Գով դնարով աջն առնելէս զկնի ,
 Հրամայէր ինձ թէ՛ նիստ յոտից կանգներ մի՛ :
 Որդիական անկեղծ յարդանքս իւր տալով ,
 Նստեմ հանդէպ ինքեան աղնիւ աթռուով .
 Մեր պատմութեան ծայրն ըսկսի նոյն միջոց ,
 Ճառեմ զարարս տաճկաստանցի Աղգայնոց :
 Թէ ո՞նց նոքա նոր կանոնօք Պատրիարդ ,
 Դրին՝ և ճիկ չհանին երբէք ամիրայք .
 Չերիցվոխանս հաստատեցին քուէով ,
 Ինչպէս նաեւ վարչութիւն իւր ճիւղերով :
 Եկեղեցեաց Թաղականներ կարդեցին ,
 Մէ-Բէ-Է-Է տխուրասակիրք հանեցին .
 Չայն բաղմութեան այսօր յարդի է Պօլիս ,
 Եւ ինքնակոչն է՝ որ ասէ վայ բախտիս :
 Անցան՝ դնացին Չեր տեսած այն բռուն օրեր ,
 Որ աղքատին բռնանային դռողներ .
 Հիմայ անոնց պարապ մնացած աթոռներ ,
 Բազմին փառօք Աղգին բարիս խորհողներ :

Գ. Խօսքս չաւարտած վեհափառէն խնդրեցի ,
 Թէ վարչութիւն սուրբ օրհնութեանդ ականունի .
 Ուրեմն մնայ Ձեզ վեհափառ արքազան ,
 Որհնել զնոսա Ձեր կոնդակաւ հայրական :
 Քաջալերեա՛ նովաւ խողովք՝ Պատրիարք ,
 Որ Աղգայնոց դատեր տեսնան շարունակ .
 Նա մանաւանդ գաւառներուն տանեն հող ,
 Ձի խողովէն զատ ուրիշ տէր չունին ոք :
 Երբ վարչութեան դործի մը համար հանրագիր՝
 Կրեն՝ խօսեա՛ որ նոցա դործ տեսնան ժիր .
 Չլինի եթէ ունկի ետեւ ձգեն զայն ,
 Ապա տան փոյթ գոհացուցիչ պատասխան :
 Աղգային մասն ինքեանք շուտով թո՛ղ տեսնան ,
 Իսկ պետական Բարձրագոյն դուռն իմաց տան .
 Այսպիսաբար եթէ նայեն գաւառներ ,
 Համառօտուին զրկեալ Հայու աղէտներ :
 Նոքա որք այժմ ակամայից Հոռմայ ,
 Դիրկ գիւմեր են՝ դառնան գիտեմ աներկբայ .
 Անմիջապէս պատուի պիտի այն ուռկան ,
 Եւ ճիզլիթաց ձգելով Զանս ընդունայն :
 Այսու նաեւ Ամերգայի պատուելիք ,
 Որք ընտանեօք յաճախեն մերս հայրենիք .
 Իբր առաքեալք՝ Քրիստոսասէր Հայ ազգին ,
 Որ ծունր կրկներ փրկչին ձեռամբ թաղէին :
 Դիտեմ այո՛ նոյնք եւս պիտի յետս կասին ,
 Դառնան ունայն անդրէն՝ ո՛ւրկից Հայս եկին .
 Այն ժամանակ միսիսնարք խմբովին ,
 Յուսահատեալ մեզ կձգեն գլխովին :
 Ա՛խ՝ արասցէ նոր վարչութիւն թէ անհող ,
 Ա՛նայ՝ չլէ ճշեալ Հայու միշտ՝ բողոք .

Եւ թէ չառնէ զրկողոց ճիշտ դատաստան ,
 Գիտցած լեր Տէ՛ր՝ Հայ չի մնար Հայաստան :
 Ուրեմն խնդրէ վեհափառէդ Տոսպեցին ,
 Որ պսակիչ լինիս իւր սուրբ փափագին .
 Վերոյգրեալ նիւթոց յարմար մի կոնդակ ,
 Փութով խրկէ առ Ժողովն և Պատրիարդ :
 Որք զիւրեանց պարտա ճանաչելով խեղճ Հայուն ,
 Խնամա տանեն՝ և տէր լինին զրկելոյն .
 Զի Հայ նաւի ղեկավարքն են՝ թո՛ղ նայեն ,
 Որ ալետանջ նաւն ի ծովուն չընկղմեն :
 Նաւաստեաց հետ թո՛ղ միանան խելք խելքի ,
 Ցան՝ իցէ՛ մերս մերձ ի մահ նաւն աղատի .
 Վստահ եմ ես կաղատուի երբ վարչութիւն ,
 Իւր սուրբ պաշտօն ի գործ դնէ աննկուն :
 Ի՞նչ օգուտ որ կաթուղիկոս սրբազան ,
 Մեր խնդրանաց բացասական տուաւ ձայն .
 Մեզ ասաց թէ Պատրիարդին՝ վարչութեան ,
 Դիր խրկեցի՝ և դեռ չառի պատասխան :
 Այժմ՝ նամակիս փոխադարձին սպասեմ ,
 Առնելուս պէս՝ ասածդ կոնդակն կուղարկեմ .
 Աստուած կեանք տայ ասելով ձայնս կտրեցի ,
 Եւ առ այս նիւթ ուրիշ հեղ խօսք չբացի :
 Դ. Համառօտիւ նկարագիր սուրբ Գահին ,
 Կուզեմ անել սոյն սա տետրիկս դիտողին .
 Որ կարդալով հմուտ լինի քիչ ու շատ ,
 Թէ ո՛ր կողմն է մեր Մայր Աթոռն փառազարդ :
 Կամ ո՛վ եղաւ նորա նախկին հիմնադիր ,
 Եւ նոյն միջոցն ո՛վ էր Հայոց թագակիր .
 Այլովք հանդերձ ի դիր առնենք անձանձիր ,
 Որ բնթերցող դիս ձգէ կալ անբասիր :

ԼՅմիածինն է յԱրարատ նահանգի ,
 Եւ շինեալ կայ ի գիրկ Կոտայք գաւառի .
 Գլակայ պէս գիրք իւր ոչ է լեռնային ,
 Եւ ոչ նաեւ Մեծոփայ պէս ձորային :
 Այլ դաշտային գիրք մի ունի ընդարձակ ,
 Յորս են ի մէջ հարիւրաւոր գիւղորայք .
 Որոց մեծ մասն բնակչաց որք կան ի նոսա ,
 Են ճեռք և թուք քաջ գիւցազնին մեր Հայկայ :
 Արշակունեաց Վաղարշապատ քաղաքի ,
 Բեկորոց մերձ՝ կերտեալ կայ ուխտս նազելի .
 Անդ՝ ո՛ւր երբեմն ահեղարկուն մեր Տրդատ ,
 Կապեալ զթաղ փեսայի պէս կայր զուարթ :
 Իւր հոյակապ նախարարօք սքանչելի ,
 Յաթուռ բազմեալ իշխէր Հայոցս աշխարհի .
 Որոյ ահէն Յոյն՝ Պարսիկ՝ Վիրք և Ալան ,
 Ակնածելով դաշն կռէին հաշտութեան :
 Զարտարապետն տիեզերաց Տէր Յիսուս ,
 Խաւարեալ տանս Հայկայ խնամեալ ծագեց լոյս .
 Առ Տրդատաւ ոսկի ուռամբ յերկնից էջ՝
 Վաղարշապատ արքայանիստ քաղքին մէջ :
 Եկեղեցեաց շինման ձեւերն մի առ մի ,
 Ապսպրեց բազմերախտ Հօր Գրիգորի .
 Նաեւ փրկչին պատուէր փութով կատարէր ,
 Եւ շինութիւն Մայր Աթոռին աւարտէր :
 Երկրիս վրան չկայ Աթոռ մ՝ իւր նման ,
 Որ Տէրն լինի ճարտարապետ իւր շինման .
 Թող համարձակ պարծենայ Հայն այս մասին ,
 Տո՛ւք զիրաւունս Յոյնք և Լատինք ասածին .
 Հեռաքրքիրս խրկենք առ հին պատմագիրս . .
 Ամիոփ ոճով դրենք զորպէսն սուրբ Գահիս :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ .

Ա. Եկեղեցին ո՛ւր լինին՝ պարթեւ զանգակատան հիմ-
նադիրք : Բ. Եկեղեցւոյ ստորագրութիւն և ունաց կա-
թողիկոսաց դործք : Գ. Թանկագին զարդք Աթոռին՝
Միմէոն և Ղուկաս կաթողիկոսաց դործք :

Ա. Եկեղեցին վանուց կեդրոն կայ շինած :
Եւ իւր տանիք չորս դմբեթով զարդարուած .
Նիւթ տաճարին է տոկուն քար տաշածու ,
Որ ձին՝ բուքէն չկրեր երկիւղ դիտցի՛ր դու :
Զանգակատան նման պարթեւ շէնք խկի ,
Դեռ կենացս մէջ ուրիշ մի վանք չտեսի .
Բանի դար է անցեր վրան գիտես թէ ,
Վարպետ մէջէն նոր աւարտեալ ելեր է :
Աղբակեցի աէր փլիպպոս հայրապետ ,
Տեառն Մովսէսի յաջորդ և սուրբ աշակերտ .
Որոյ նման անձնանուէր կարծեմ թէ ,
Կաթողիկոս Աղգին մէջ քիչ տեսուեր է :
Սա սուրբ Աթոռն նորոգելէն զկնի ,
Զանգակատունս շինէ կէսէն աւելի .
Բայց ո՞ր օգուտ նոյն միջոցի Պարսից խան ,
Հայրապետին եղեր արգելք և խափան :
Թող չի տուեր Երանելոյն՝ նոյն դաժան ,
Հասնել յաւարտ իւր ձեռնարկած շինութեան .
Ի չար դիւէն շարժեալ կացեր հակառակ ,
Եւ բարի Հօրն՝ ի զուր հաներ սուրբ փափագ :
Աւա՛ղ , նա իւր կարօտ չառած վախճանի ,
Զգե՛րով նոյն մեծ դործ թերի յաշխարհի . .
Չուեց առ Տէր՝ ըստ իւր դործոցն արժանի ,
Անուղ պատկա ընդ յաջորդացն Թադէի :

Արդ՝ յեա սարին ընտրեցաւ մեզ դիտապետ ,
 Զուղայեցի Յակոբ արհի հայրապետ .
 Սա ձեռնարկեալ զանդակատան այն թերին ,
 Հասոյց աւարտ և ետ պսակ խաչ դիխին ,
 Այս մեծ գործով զոյգ հայրապետք միասին ,
 Փառս ձօնեցին՝ արդարեւ Մայր Աթոռին .
 Եւ իրենց ալ պայծառ անուն մէջ Ազգին ,
 Մինչեւ հիմայ՝ սովաւ անմահ պահեցին :
 Զանդակատան ներքեւ հանգչին ի տապան ,
 Զոյգ Աղեքսանդր կաթողիկոսք միարան .
 Մերձ են սոցա Քանիէլ և վեհ ներսէս ,
 Հիւր դեսպան մի՝ և կարպեցի Յովհաննէս :
 Միտս բերելով ժամանակի սղութիւն ,
 Պիտի խիւժ՝ զանդակատան պատմութիւն ,
 Չէ լոկ նորա՝ այլ դիպուածոց սուրբ Գահին ,
 Չգրեմ՝ ինչ բան՝ ներեցէ՛ք ինձ այս մասին :
 Ոչ թէ կամաւ՝ կուղէի ես լիովին ,
 Պարագայիւք գրել ըստ իմ փափագին .
 Բայց ո՞ր օգուտ թէ գրէի մի առ մի ,
 Հերքման գրքոյն՝ օրինակելս ձգէի :

* Այս գիրք Մատթէոս կաթողիկոսն նոր հեղինակեր էր Այվազդարի Գարրիէլ վարդապետի յօրինած քրիստոնէականին դէմ, և անոր մէջ իրր ընդդէմ Հայաստանեաց եկեղեցւոյ դաւանութեան կէտեր նշմարելով քննադատութեան առեալ էր . բայց ոչ իրրեւ ներող քննադատ՝ այլ կշտամբանօք արձակելով ի վերայ յետին աստիճան նուաստացուցեր էր Այվազդարւոյ հեղինակութիւն : Ինձ թուի թէ ի կրից չարժեալ գրեալ էր , բայց ո՞ գիտէ՞ գուցէ իրաւունք ունէր այնպէս գրելու . զի ես Այվազդարւոյ հեղինակութիւն դեռ չտեսի : Ահա՛ այս գրքիս ընդօրինակութեան համար էր , որ Էջմիածնի ստորագրութիւն համառօտ առնել որոշեցի :

Բ. Մայր Աթոռի եկեղեցին վերն հասի ,
 Թէ չիներ են վանուց կեդրոն ուղղակի .
 Չորս սեանց վերայ իւր ամրապինդ կամարներ ,
 Տոկուն քարով ճարտար ձեռքէ են դարձեր ,
 Քառակուսի է ձեւ սրբոյ Տաճարին ,
 Չափ չառնելովս՝ չկարեմ ասել ճիշտ նորին .
 Բայց որչափ որ մինչեւ հիմայ Հայաստան ,
 վանք տեսեր եմ , այս մեծ է քան զամենայն :
 Իւչքիլիսոյ համար տեսնողք պատմեն թէ ,
 Նա է միայն՝ որ այս ուխտէն բաւ մեծ է .
 Այս այն վանքն է՝ որոյ հանդէպ մեր Տրդատ ,
 Մեծ բազմութեամբ մկրտուեր է յիվրատ :
 Իջման տեղն է եկեղեցւոյ ճիշտ կեդրոն ,
 Որ մեծարի ճոխ հանդիսիւ նորա տօն .
 Մի գեղեցիկ գմբէթ ունի յիւր վերայ ,
 Որոյ տեսնող գիտեմ անշուշտ գուարթանայ :
 Եղիազար կաթողիկոս Անթափցին ,
 Հեղինակ է իջման տեղաց գմբէթին .
 Զի նախ քան զինքն չկար գմբէթ ի վերայ ,
 Հիմնարկութեան պատճառ սորին լեալ է նա :
 Աստուածատուր կաթողիկոս յեա սորին ,
 Երբ նստաւ գահ՝ նախկին քակեց գլխովին .
 Նոր ի նորոյ մարմարոնեայս հրաշակերտ ,
 Ի պատիւ Տեառն կերտել յուսաւ սիրով սերտ :
 Իսկ Աբրահամ կաթողիկոս Խօշապցին ,
 Պինդ վանդակաւ գմբէթս պատեց նաղելին .
 Որ այս և այն անպատրաստից չլինին հուպ ,
 Լոկ ժամարարն երբ պատարագն առնէ սուրբ :
 Իջման տեղէն զատ հինգ հատ եւս կայ խորան ,
 Յորս ի քաւել մեզ զենանի Տէր Արքայն .

Մաղիմայ պէս հոս ամէն օր չէ օրէն ,
 Պատարագել լայլ շարաթ հեղ մը ընդ ամէն :
 Աւագ խորան է լայնարձակ աննման ,
 Հատ մի սլայծառ ունի խաչկալ յիւր վրան .
 Մեծ յիշատակ ճոխ Զմիւռնւոյ քաղաքին ,
 Զանիւք իւրեանց Սիմէոնի քաջ դիտին :
 Դասերուն մէջ մի մի խորան կայ սիրուն ,
 Որք Խօշապցւոյն անմահ պահեն յար անուն .
 Պօլոյ նման սեղանք զարդիւք խճողուն ,
 Չեն հոս ինչո՞ւ սիրեն յատուկ պարզութիւն :
 Հիւսիս հարաւ եկեղեցւոյ որմերով ,
 Մի մի խորան կայ սրբատաշ դմբէթով .
 Եղիազար Անթաիցուն է գործ ձեռաց ,
 Որովք մնաց անուն իսպառ անմուաց :

Գ. Մայր Աթոռի հարուստ զարդերն մի առ մի ,
 Աստանօր չեմ ուզեր առնուլ ի դրի :
 Ապա թէ ոչ մի մեծ մատեան պիտոյ է ,
 Որ կատարեալ ամէն բան մարդ գիր առնէ :
 Յոյժ թանկագին ոսկիահիւս նոր շուրջառք ,
 Տեսի , կան շատ սկիհ՝ մասունք և բուրվառք .
 Այն հատընտիր անօթեղէնք տաճարին ,
 Ըստոյդ աչկունք կշրտեցնեն աշողին :
 Գրիչ ձգի՛ր՝ անցի՛ր ուրիշ պատմութեան ,
 Զի կարեն ոչ ստորագրել զամենայն .
 Իսկ անոնք որ մանրամասին կցանկան ,
 Շահխաթունեան Յօհան արհւոյն թո՛ղ կարդան :
 Աստուածատուր կաթուղիկոս իւր օրով ,
 Եկեղեցին ծաղկել տուեր ներկերով .
 Իւր յիշատակ դմբէթի մէջ դրեր է ,
 Մնալ վկայ ասպագայիցս ձգեր է :

Երեւանցի տէր Սիմէոն հայրապետ ,
 Հայոց մեծաց անձնանուէր հօտապետ .
 Սա եւս Գահին ողջմառութեան ջանադիր ,
 Լեալ է նաեւ տպարանին հիմնադիր ,
 Տաճարին և աւանդատանց տանիրքներ ,
 Եկեղեցւոյ սիւնք և վանից պարիսպներ .
 Նորոգելով առթեր է փառս Աթոռին ,
 Որ այժմ տեսնողք կուտան հողւոյն զողորմին :
 Յաջորդ սորին ընտիր Ղուկաս Կարնեցին ,
 Նա եւս օգուտ քիչ չի բերեր սուրբ Գահին .
 Զի չորս կուսէն մաշուած որմունք տաճարին ,
 Դուրսէն ներսէն սա եւս կերտել վերստին :
 Երեւելի պատկերահան Յովնաթան ,
 Կանչեր է քով սոյն վեհափառ սրբազան .
 Զեռամբ նորին շինել տուեր շատ պատկեր ,
 Որ իւր պէսն այժմ քիչ կայ վարպետ յԱղգըս մեր ,
 Նորոգեր եւս երկու հին սիւնք տաճարին ,
 Որ ժամանակն մաշեր էր նոյնք գլխովին .
 Զիւր անուն՝ և նուիրտառաց միասին ,
 Ի գիր դրոշմեր՝ որ չճշտանաք ընաւին :
 Դասերուն կից երկու հօտ եւս մատուռ կայ ,
 Որ սուրբ Գահին անօթք պահեն ի նոսա .
 Նոցա վերայ մի մի հատ դուռն սատափեայ ,
 Յակոր աղա Ապուշեխցուն կան ընծայ :
 Հերիքասցի սուրբ տաճարի տեղողիր ,
 Քիչ մի դրսի բաներն երթանք՝ առնեմք դիր :
 Ամիրովի ոճիս պատճառս դիտէ ընթերցող ,
 Ուրեմն պանդուխտ հէք Տոպեցւոյս ներէ թո՛ղ :

ԳԼՈՒԽ ԺԷ.

Ա. Արտաքին տեսք վանուց : զեհարան և Սինօթ : Բ.
Թանգարան և Ոսումնարան : Թիւ մանկանց և կար-
գադրութիւն նոցին : Գ. Հարաւ կուսէ շինութիւնք . սե-
ղանատունք և միաբանութեան սենեակք և այլն :

Ա. վերն յիշեցի սուրբ Աթոռին համար թէ ,
Եկեղեցւոյ տեղ ճիշտ վանուց կեդրոն է .
Իւր կից չունի այլ շինութիւն՝ ինքն միայն ,
կայ և լինի այժմ աչաց մեր յանդիման :
Իւր չորս կողմէն մարգ՝ տունկ՝ ծաղկունք և ծառեր ,
Անյագ սիրով զինք ո՞րպէս են պարփակեր .
Մինչ մեղմիկ հով նոցա դլուխ կշոյէ ,
Միաբանաց հոտ զովարար կբուրէ :
Ըստոյգ ինչ մարդ որ վայելէ հոտ սոցա ,
Անշուշտ գիտեմ պիտի փրկին միշտ փառս տայ .
Եկեղեցւոյ արեւմտեան կողմանէն ,
Մի աղբիւր կայ , որ պահպանէ զայս ամէն .
Ապա թէ ոչ տաք արեգին անպատճառ ,
Թառամելով չորանային չարաչար :
Արեւմտեան կողմն է նաեւ վեհաճրան ,
Ուր կնստէ Կաթուղիկոս սրբազան .
Խոր շինութիւն է քարուկիր տաշածու ,
Բայց ճաշակաւ Պարսից կերտեալ գիտցի՛ր դու :
Շինող նորին է տէր Ղազար Զահկեցին ,
Եւ այս պատմածս արձանագիրք ծանուցին .
Մի երեսէն սուրբ Իջման տեղն յար դիտէ ,
Իսկ միւս դեհից դրախտն հաղէպ ելանէ ,
Դրախտին մէջ վտակ մի կայ գնայուն ,
Որ Քանքանի օտոյցեր է մականունն .

Սորա վերայ մի ջրանիւ շինած կայ ,
 Որ հանապազ շատրավանաց ջուր կուտայ :
 Վեհարանի սենեկաց զարդք՝ պաճուճանք ,
 Մեր գովեստէն գերի վերոյ կտեսնանք .
 Չեմ կարեր ես ըստ արժանւոյն մի առ մի ,
 Զորպէս նոցա գծագրել ի գրի :
 Վասն այսորիկ խօսքիս ընթացքն ակամայ ,
 Պիտի փոխեմ , բայց ոք ինձ թող չվշտանայ .
 Քանզի հիւր եմ՝ մի ըստ միովէ դիտեմ ոչ ,
 Եւ է բնութիւն ինձ կարճ բանից յարդել զոճ :
 Պարտիզին մէջ արեւմտեան կողմանէն ,
 Մեծ սինօթին կայ կերտած յարկ նորաշէն .
 Շաբաթ մի հեղ սինօթականք ժողովին ,
 Աստ ակմբեալ պրփրոյ միասին :
 Դաւառներէն եկեալ խնդիրք մի առ մի ,
 Վճռահատեալ լուծեն ամէնքն ըստ կարգի .
 Ռուսիոյ կայսեր պատկեր դրած կայ ,
 Հոն ներս մտնող պէտք է կարծէ կայսր ներկայ ,
 Դատողք դատեալք ըստ կանոնի Ռուսաց ,
 Նոյն յարկի մէջ պէտք է մնան գլուխ բաց ,
 Վարդապետացն է մի միայն ներելի ,
 Վեղար գլուխ մնալ այնպէս ի միջի :
 Վեհարանին խիստ դրացի ուրիշ մի ,
 Շինութիւն կայ՝ ո՛ւր գանձապահ կնստի .
 Ողջ կալուածոց և դաւառաց եկամուտ ,
 Սորա շիմէն պարտէ մի հեղ անեն մուտ :
 Բայց ի՞նչ օգուտ Ազգին գոց է այս հաշիւ ,
 Տարին քանի տարւոյն կլինի չգիտեր թիւ .
 Գանձապետն է հայր թաղէոս Զինական ,
 Այր հիւրատէր՝ և բաւ չափու գիտնական :

Բ. Վեհարանէն չղատուած երթանք թանգարան,
 Տեսնանք մեր սուրբ հարց սովերներն ամենայն,
 Թէ որպիսի՞ հանգստութեան կան միջի,
 Յապակազարդ գրադարանի ըստ ազգի:
 Երեք հազար ձեռագրէն աւելի,
 Մայր Աթոռն այժմ ունի գրեանք պատրաստի.
 Սորա նման ճոխ թանգարան ինձ թախ,
 Ո՛չ վենետիկ՝ և ո՛չ Սաղիմ գտանի:
 Ըստ բաւելոյն ունի նաեւ տապալիր,
 Հայ և օտար լեզուաւ ամէնք հատընտիր,
 Թանգարանի շինման պատճառ և պաշտպան,
 Է հանգուցեալ Շահխաթունեան սրբաղան:
 Զկնի նորին Շահնազարեան բարունին,
 Որ է ներկայս դէտ Շամախու վիճակին.
 Նոր եռանդով այժմ պահպանէ թանգարան,
 Ուսումնասէր հայր վրդանէս Մանուկեան:
 Վեհարանի դռնէն լինիք դուրս կրկին,
 Ստորագրենք ուրիշ շէնքեր սուրբ Գահին.
 Յարեւելեան դեհէն վանուց կայ դպրոց,
 Ո՛ւր մնան խումբ ժառանգաւոր տղայոց:
 Յիսուսի չափ դիչերթիք աշակերտ,
 Աստ ուսանին՝ որ վերջ լինին վարդապետ.
 Մեր լեզուէն զատ՝ աւանդեն եւս Ռուսաց,
 Բայց ոչ կամաւ՝ դո՛ւք թէ հարկէն ստիպուած:
 Գառնակերեան տէր Գրիգոր վարդապետ,
 Հայր է սանուց՝ այլ ուսուցչաց նաեւ պետ.
 Դպրոցական կարգադրութեան տանէ հոգ,
 Սինօթէն զատ իշխել չկարէ վրան ոք:
 Ակնարկութեամբ նորին տղայք կարդ ի կարդ,
 Յեկեղեցին չուեն ժամու ժամանակ,

Անտի առաւ սեղանատուն իջանեն ,
 Միաբանաց հետ միաբան ճաշ առնեն :
 Հացէն զկնի վերադառնան վարժարան ,
 Եւ պարապի անդ ամէն ոք իւր ուսման ,
 Ննջարանից մէջն երեկոյ զատ մահիճ ,
 Խորաքանչիւր տղայն հանգիստ առնէ նինջ :
 Բայց ի՞նչ օգուտ յառաջադէմ և աշխոյժ ,
 Տղայ քիչ կայ՝ մեծ մասն են խեղճ և ապուշ .
 Այս է ահա՛ ճիշտ տեսութիւն դպրոցին ,
 Զոր համառօտ ի գիր էառ Տոսպեցին :

Գ. Շտեմարան և տպարան սուրբ դահլին ,
 Զոյգ միասին բաժին լեալ են հարաւին .
 Առաջնոյն տակ պէտք է գիտնաս խոհարան ,
 Իսկ երկրորդին վերայ է ճոխ թանգարան :
 Ողջոյն նոյն շէնքն են քարուկիր պատուական ,
 Զորս ստեղծեցին դար դար քանի մը սրբազան .
 Վանքին երկու դուռը կբացուի հարաւ կոյս ,
 Մին կհանէ Ղաղարապատ՝ միւս դուրս :
 Այս կողմն կայ եւս երկու ընտիր ճաշարան ,
 Որ մին միւսէն են տոկուն և անմահ :
 Մէկ ձմեռուան համար յատուկ շիներ են ,
 Եւ երկրորդի մէջ տօթ առէն հաց կուտեն :
 Մինչդեռ բազմին ողջ միաբանք դէմ դիմաց ,
 Եւ վայելեն պարզեւս փրկչին լուսկաց .
 Յայնժամ հոս թէ պատահի մի այցելու ,
 Զայս դրութիւն պիտի գովէ լու ի լու :
 Այս շինից մէջ լոկ միաբանք չեն միայն ,
 Նստողք ի ճաշ՝ այլ ուխտաւորքն ամենայն :
 Զուղայեցի Աղեքսանդրին է նախկին ,
 Իսկ միւս վերջին՝ շիներ Ղուկաս կարնեցին :

Դառնանք դէպ ի հիւսիսային կողմն վանուց ,
 Որ կան անդրէն միաբան հարց մի մի խուց .
 Բոլոր շինուածքն են քարուկիր միայարկ ,
 Եւ մեր գրչէն վեր են նոցա հանդերձանք :
 Բայց ի՞նչ օգուտ դէճ լինելուն աղաղաւ ,
 Խեղճ միաբանք վիշտ կրեն մէջ ոչ սակաւ .
 Լոկ սրբազանք այս ցաւերէն կան անվիշտ ,
 Քանզի նոքա վերնայարկ տեղ օթին միշտ :
 Բաւ է ելնենք միաբանաց թաղէն դուրս ,
 Ղազարապատ գրենք որ կայ հարաւ կոյս .
 Երկու տող եւս նորա վերայ խօսինք բան ,
 Բայց կարճ ոճիս թող ընթերցողք չվշտանան :
 Զի ժամանակս չներեր գրել մի առ մի ,
 Եւ չեմ լինիր տէր իրաւանց ուրիշի .
 Այս իրաւունքն է սուրբ Գահի բարունեաց ,
 Թէ կամք անեն՝ յինէն գրեն գերազանց ,
 Եթէ փոքր ինչ ի բաց ձգեն ընդունայն ,
 Պարապութիւն , և սէր տան սուրբ ընթերցման .
 Այն ժամանակ ըստոյդ պիտի շատ ընտիր ,
 Մեզ կարդալու բանս յօրինեն անձանձիր :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը .

Ա. Ղազարապատի ստորագրութիւն . Բ. Միաբան հարց
 որքանութիւն : Գ. Աթոռէն դուրս շինութիւնք , հան-
 դուցեալ հայրապետք Գայիանէի վանուց , լինն և ան-
 տառ , և Ղազարապատ քաղաք և այլն :

Ա. Ղազարապատ զոյգ յարկեաց շէնք մի գոլով ,
 Քաանի չափ վեր վար սենեակ կայ թուով .
 Սոյն շէնքն Ղազար կաթուղիկոս շիներ է ,
 Ուստի անուն Ղազարապատ տրուեր է :

Գաւառներէն խումբ խումբ եկող ուխտաւորք ,
 Աստ բնակին մինչեւ լեալ են ուղեւորք .
 Հիւրընկալի պաշտօնիւ մի վարդապետ ,
 Հոս նստելով զհիւրս խնամէ հետ առ հետ :
 Ամատունի հայր եղիշէն մեր օրով ,
 Մնայր այսրէն հիւրընկալի մակդիրով .
 Բայց ո՞ր օգուտ հիւանդութեան աղաղաւ ,
 Հանուաւ , և տեղն հայր Յակոբոս կացուցաւ :
 Շինիս միջէն ջուրմը դիմէ լիճն անընդհատ ,
 Այն որ կերտեց արին Ներսէս բազմերախտ .
 Ղազարապատ շէնքին վրայ սա չափ բան ,
 Ընթերցողին համարիմ ես բաւական :
 Միայն կուղեմ միաբան հարց մի առ մի ,
 կարգաւ գրել զանունս ի սոյն տետրակի .
 Որ կարգացողք հասկնան թէ քանի հատ ,
 Բաբունի կան ի Մայր Աթոռն Այրարատ :
 Բ . Առաջին է տէր Մատթէոս հայրապետ ,
 Հայոց մեծաց ընդհանրական հովուապետ .
 Որ բազմելով ի դահ մեծին Թադէի ,
 Օտարաց դէմն՝ զայն պաշտպանէ ըստ կարի :
 «Յետ նորա տէր Ղուկաս արհի սրբազան ,
 Որ փոխեցաւ շարթուս ի կեանս անվախճան .
 Հանդիսատես եղէ թաղման մեծ արհւղյն ,
 Ո՛հ , ո՞նց պատեր ուղարկաւորք տխրութիւն :
 Աթոռ սորա մահուան վերայ լայ պիտի ,
 Ինչու էր նա այր դովութեան արժանի .
 Այս խօսքս քանի մ' եղբարց քովէն լսելով ,
 Արժան տեսայ անցուցանել ընդ գրով : »
 Գէորգ արհի եպիսկոպոս Բղնունի ,
 Սա մտկանուումբ ճգնաւոր եւս յորժորժի .

Եղիազար եպիսկոպոս փառաշին,
 Պետ լուսարար է և անդամ սինոթի:
 Յորեանց տոհմէն տէր Գրիգոր սրբազան,
 Սինոթի մէջ սա եւս նստի բաղմական.
 Մկրտիչեան Գէորգ արհի սրբազան,
 Սուրբ Գահին մէջ ի հնուց է միաբան:
 Ծերունազարդ Յովսէփ բարուն Բժիշկեան,
 Ի սյր ընտիր՝ և երաժիշտ քաղցրաբան.
 Վարդապետեան տէր Յարութիւն վարդապետ,
 Ժամ օրհնողի պաշտօն վարէ հոգւով սերտ:
 Սուրբ Յովհաննու անուամբ երեք բարունի,
 Ելին հանդէպս Էջմիածին պատրաստի.
 Մին Մշոյ է և ինքն իսպառ ծերունի,
 Երկրորդն զարմ է քահանայի և որդի:
 Իսկ երրորդն է Արշարունին ծախսարար,
 Որ անուանի դրչաց պէտք է կարգենք շար.
 Տէր Գասրաբեան ուսումնական Սարգիս հայր,
 Սա եւս բազմի սուրբ սինոթի հարանց պար:
 Հայր Թադէոս Չիւնական է դանձապետ,
 Կայ բարուն մի Բաղիշեցի կարապետ.
 Հայր Ռաֆառէլ զուարճախօս վարդապետ,
 Սուրբ Գահին մէջ է պաշտօնիս դոմապետ:
 Լուսաւորչի անուամբ հինգ հատ Գրիգոր,
 Վարդապետաց հանդիպեցայ սուրբ Աթոռ.
 Արգ՝ առաջին տնտեսներուն հրամայէ,
 Եւ ինքն արդար Դաւիթ մակաիր կկրէ:
 Երկրորդն է հայր Աղափիրեան բարունին,
 Որ իւր հանճար բերէ պարծանք Աթոռին.
 Եւրոպական քանի մը լեզուաց ծանօթ սա,
 Իւր պէս հմուտ կարծեմ սուրբ Գահն թէ չկայ:

Իսկ մնացեալքն են Մուշեղեան և Ալլաասեան ,
 Գառնակերեանցն եւս յիշելով լրանան .
 Շտեմարան կռուովարէ հայր Ադամ ,
 Եւ եղբարց հաց պատրաստել տայ բարեհամ :
 Յակոբ անուամբ երեք բաբուն դէմն ելին ,
 Ագուկեցին , Հիւրընկալ և Սիւնեցին .
 Մուշ Տարօնոյ Սահակ անուն վարդապետ ,
 Է սա Դուկաս հանգուցելոյն աշակերտ :
 Արիստակէս և վրդանէս նոր բաբունք ,
 Են վեհափառ հայրապետի ձեռնասունք .
 Ամատունի հայր Եղիշէն հոս պիտի ,
 Յիշեմ որ վեր գրեալ հարց թիւն լիանի :
 Վեհափառէն մինչեւ վերջի արեղայն ,
 Երեք իննեակ թուով ահա՛ լրացան .
 Ի սոցանէ զատ շատ բաբունք յԱթուէն ,
 Այժմ վիճակներ խրկուած են սինոպէն :
 Ոմն առաջնորդ՝ և ոմն դործովք սուրբ Գահին ,
 Քաղաքաց մէջ՝ կամ թէ վանքերն զբաղին .
 Մեք ներկայ հարց միայն զանունս գրեցինք ,
 Բացակայիցն՝ որ չեմ ծանօթ լռեցինք :
 Գ. Քիչ մը եւս Գահին արտաքին տեսքն առնենք դիր ,
 Եւ աւարտենք սուրբ Աթոռի տեղադիր .
 Արդ՝ մեծ ուխտիս արեւելեան ճիշտ գեհէն ,
 Կայ Շողակաթ սուրբ ուխտ՝ և կոյս Հոխիսիմէն :
 Գոյիանէն հարաւակոյմն անկանի ,
 Որոյ միջոց զայդ արտավար չէ հեռի .
 Սոյն վանքերուն կան այժմ մի մի վանահայր ,
 Որք յորջորջին Գէորգ՝ Սանգեան՝ և Դաղար :
 Դայիանէ վանուց ուխտի սուրբ դատիւթ ,
 Հանգուցեալ են Դուկաս՝ Մինաս՝ և Դաւիթ .

Մեծ Սիմէոն՝ Յակոբ՝ Յովսէփ՝ և Դաղար ,
 Կաթուղիկոսք մեր աւասիկ շար առ շար :
 Եղբ՝ Փիլիպպոս՝ Եղիազար Անթաիցին ,
 Խրեանց օրով ուխտս նորովեալ շինեցին .
 Տաճար վանուցս է սրբատաշ ամուր քար ,
 Բայց ժամասաց քիչ դուով մէջ՝ չէ պայծառ :
 Ուխտիս կից է մեծագործ լիճն ու անտառ ,
 Զորս շիներ է հանդուցեալ մեծ վեհախառ .
 Մոքօք անմահ մնայ Ներսէս հինդերրորդ ,
 Մեղք , որ չունի այժմ իւր անուան նախանձորդ :
 Աստ է նաեւ հասարակաց դամբարան ,
 Ուր կան ի քուն շատ կղեր և միաբան .
 Նպիսկոպոսք՝ ճոխ վարդապետք հատընտիր ,
 Որոց մինն է մեր Առաքել պատմադիր :
 Ինչպէս նաեւ Եփրեմ արհի հայրապետ ,
 Որ մեր օրով եկաց Աղգին հովուապետ .
 Յայս հարց մէջն է իւր ոսկերաց պահարան ,
 Որոյ վերայ կայ այժմ դմբէթ պատուական :
 Հիւսիսային կողմանէ սուրբ Աթուին ,
 Վաղարշապաան երանէ դէմը տխրադին .
 Այն ուղեւորն թէ որ ունի սիրտ Հայու ,
 Առանց լալու ամա չլիներ այցելու :
 Զի սա երբեմն Արշակունեաց օրորան ,
 Գողով առնէր սէգ Տրդաան իւր պահապան .
 Նախանձելի լեալ էր նովաւ աշխարհի ,
 Լսողք տային Աղգիս Հայոց երանի :
 Յարեւմտեան դեհէն է դաշտ ընդարձակ ,
 Ուր տեսանին հարիւրաւոր գիւղօրայք .
 Յորոց մեծ մասն նստին որդիք Թորգոմայ ,
 Իսկ մնացեալն Պարսից հանդ չին ճեաք հիմայ :

Նոր մի շուկայ շինեն յայս կողմ՝ դեռ ճարտար ,
 Մէջն աշխատի , և է գրիւք յոյժ պայծառ .
 Մատթէոսի մեծի արհւոյն այս պարծանք ,
 Եկայք առանց դէմ կենալուն ձօնենք՝ տանք :
 Գրիչ կնքէ՝ աստ Աթոռի տեղագիր՝
 Ամբոփ ոճով մեր ուղին վէպն ա՛ռ ի գիր .
 Ճշտութեան միշտ կա՛յ դու պաշտպան՝ և միտ գիր ,
 Ապա թէ ո՛չ տե՛ս չես մնար անբասիր :



ԾԱՆԱԳԱՐՅՈՐԴՈՒԹԻՒՆ

ՅԷ.ԶՄԻԱԾՆԷ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԺԹ.

Ա. Քողուլ գէջմիածին և զնալ յերեւան : Բ. Յովհաննէսեանց եղբարց հիւրասիրութիւն և այլն : Գ. Բարեժաղթութիւն իմ առ Տէր՝ վասն վարձատրութեան նոցին . և այլոց նոյնպիսեաց :

Ա. Յետ Յարութեան կաթուղիկոս սրբազան ,
Կեզ հրամայեց որ չիպիտի երթամ վան .
Այլ գէպ ուղիղ դառնամ կրկին ի Բիւզանդ .
Եւ զիւր նամակս տանեմ՝ յանձնեմ աստ և անդ :
Քանզի ասէ՝ թէ բաց ի քէն չունիմ ոք ,
Հաւատարիմ՝ յայս դործ դու ես յոյժ բարւոք :
Իւր հրամանաց ճիկ հանի ոչ ակամայ ,
Հնազանդեցայ , չլինի թէ ինձ բռնանայ .
Ուստի փութով պատրաստութեան ձեռք զարկի ,
Որ ժամ յառաջ չուն ըսկսենք շեշտակի :
Վեհափառէն ինձ տան և հինգ հատ Ժողովն ,
Ճանապարհի համար հաղիւ տրուաւ ձօն .
Ժոխ Հայրապետն իւր սեւ բախդ լայր իրր աղքատ ,
Զայն աեօի ո՛չ խնդրէս ելի յաւտհատ :
Խեղճ Տոպեկցին սաքօք ոչ թէ ի Պօլիս ,
Գնալ կարէ . այլ հաղիւ հաղ ի Տիփլիս .

Միւս պոսկատորդն տառի անտի ճարելով ,
 Պէտք է գնաց մինչ ի Բիւզանդն Աստուծով :
 Զսրեքչարթի նախաճաշէն զկնի ,
 Վերջի համրոյր սրբոյ Գահին մատուցի .
 Եւս հարց տեղւոյն հրաժարականս անդ տալով ,
 Ճամբայ ելայ յոյս իմ յԱստուած դնելով :
 Ինձ ի պատիւ վեհափառ տէր վանքէն կառք ,
 Մինչ յերեւան տալով՝ յայտնեմ իմն յարգանք .
 Մեր մանար մունար մէջ դնելուն պէս իսկոյն ,
 Զիանց կայտուիլն տեսնուեցաւ ընդ հարթ չուն :
 Պղտիկ փեսենց պարոն Գրիգոր սիրելին ,
 Ճանապարհին ընկեր էր ինձ այս հեղին .
 Յիշմիածին եկեր էր սա ի վանայ ,
 Այժմ հիւքոյս հետ մինչ ի Պոլիս տի գնայ :
 Հանդերձեցայ ճոխ յերեւան հետ սորա ,
 Կացի վեցն օր անդ ես դործովք վարագայ .
 Զողայ՝ տեսի պարոն վասիլ պարմանին ,
 Եւ ասի՝ որ հաւաքէ մեր Արծուոյ գին :
 Նաեւս ի սէր մեր խրիմեան մեծի Հօր ,
 Բաժանորդաց գինս ձեռք բերաւ անդանօր .
 Լոկ երկու մարդ խրեանց բաժին հաստուցին ,
 Թէ մեք Արծուոյն չեմք բաժանորդ ժխտեցին :
 Բ. Յովհանէսեանց յարգի եղբարց գերդաստան ,
 Հիւրասիրեց մեզ մինչ էինք յերեւան .
 Ընկերիս հետ օր երեք հեղ նոցա հաց ,
 Վայելէինք հետ դիւրամարս խորակաց :
 Սոցա վերայ անուշ գինին մերթ ընդ մերթ ,
 Կենաց համար կպարպուէր սիրով սերտ .
 Պարոն Դէորդ նոյն օրհնեալ տան անգրանիկ ,
 Բաղմականացս ուրսխութեան էր կնիք :

Մա ազգային գողտրիկ երգեր քաղցրաճայն ,
 երգէր՝ որովք ուրախ լինէր բազմական .
 Ամէն տաղի վերջ նաեւս մի շարական ,
 Ըստ պատշաճին պիտի ասէր անխափան :
 Կենաց գինիք երբ յաճախէր ես նոցա ,
 Աղաչէի՝ որ շնեղեն մեզ անխնայ .
 Շնորհակալ եմք մեր խնդրուածս յարդեցին ,
 Ինձ ընկերիս իբրեւ անփորձ ներեցին :
 (Ձի Տաճկի Հայն Ռուսաստանցւոց պէսն խկի ,
 Որչափ ջանայ՝ գինի խմել կարել չի ,
 Պատճառ՝ սորա հարստութեան մէջ գողով ,
 Առ տուրն աղէկ՝ ունին ռուպլի եւս յոլով :
 Բարբարոս ֆիւրա չկայ իրենց կեղեքիչ ,
 Եւ մեռեր է բերդ Հասան* խան քայքայիչ .
 Նորա համար Երեւանայ քաղցր գինին ,
 Խմեն այսպէս խաղ ու պարով խնդաղին :
 Իսկ Տաճկաստան որ նեղութեան կայ միջի ,
 Անգութ ֆրտաց ձեռք մատնուէր իրր գերի .
 Ինչ որ ուղեն նոյն դաժաներ տան պիտի ,
 Թող տո՛ւր գինին՝ շատեր կարօտ են հացի :
 Կարելի է որ չի գիտեր Տէրութիւն ,
 Վերոյիշեալ գաղան ֆրտաց գէշութիւն .
 Ապա թէ ոչ ես յուսով եմ որ իսկոյն ,
 Տակն ու վերայ պիտի անէ նոցա տուն :
 Ինչո՛ւ իրեն արդար կամայ հակառակ ,
 Կլինին ատոնք՝ և չուղեր մէկ ժամանակ .

* Հասան խան Պարսկից կողմանէն Երեւանայ վերջի
 ամբարիշտ և անգութ սարտարն էր՝ զոր Ռուսք Երեւա-
 նայ բերդի պաշարման բռնեցին , այս գաղան շատ չա-
 րիքներ խաղցել է մեր խեղճ ու անտէր Ազգի դմին :

Նա կուգէ որ Հայ՝ Յոյն՝ Քիւրա՝ Թուրք՝ Ասորին ,
 Երբեւ եղբայր սիրով միմեանց հետն ապրին :)
 Շնորհիւ սոցա զո՛ր ամէն օր ուրախ սիրտ ,
 Կեանս վարելով ընկերիս հետ կանք անվիշտ .
 Ուստի ես ալ նոցա՝ բարեաց փոխարէն ,
 Զյետադայ բանս մաղթեցի յԱրարչէն :

Գ. Սոքա որք մեղ յանուն քո սուրբ ընկալան ,
 Եւ շահելով սխտիւցին քան զորժանն .
 Ըստ հաւատոց իւրեանց հասո՛ւ՝ Բաղմադո՛ւթ ,
 Տասնասրատիկ վարձատրութիւնդ փոյթ ընդ փոյթ :
 Ամենասուրբ Աջովդ պահեա՛ հայրական ,
 Յովհաննէսեանց նորափթիթ գերդաստան .
 Յաւերժացին որդւոց որդի գարուց դար ,
 Խնդրեմ՝ Տէր իմ նեղ օր նոցա ցոյց մի՛ տար :
 Օրհնեա՛ նոցա գաշխատութիւն և զգործ ,
 Ազքատութիւն թո՛ղ իւրեանց շէն չանէ փորձ .
 Քո սուրբ սիրովդ պահեա՛ զեղբայրս հնգեոին ,
 Մինչեւ պարարտ խոր ծերութիւն միասին :
 Մինն սոյն եղբարց արդոյ աղա Հայրապետ ,
 Որ բարեկամէ նա վաղուց հիգոյս հետ .
 Այժմ՝ կայ Պօլիս վաճառական անուանի ,
 Անքուն աչքովդ լե՛ր Դու նմա հովանի :
 Պանդուխտ վայրի չձգեա զնա ի ձեռաց ,
 Եւ պահեա՛ զինքն յամենայն կերպ փորձանոց .
 Յաջողութիւն տո՛ւր ընդարձակ իւր գործոց ,
 Մեծ արդիւնքով յիւր հայրենեաց դարձո՛ւր ծոց :
 Յինքնէ մեծ մէկալ եղբայր Մկրտիչ ,
 Ագնիւ աղան՝ որ միտք ունի մեղ հետ մինչ ,
 Ի Ռիւզանդին գալ՝ և լինիլ գործակից ,
 Եղբոր՝ հայցեմ պահեա՛ զայն եւս վտանդից :

Գէորգ՝ Յակոբ՝ Մկրտիչ՝ և Հայրապետ ,
 Սիրով պահեա՛ , եւս և Սահակ սոցա հեա .
 Խնչպէս նաեւ իրենց բոլոր պարագայք ,
 Զոր արկածից ժտեմ պահեա անվտանգ :
 Թո՛ղ օրինակ լինին բարի ուրիշին ,
 Լալով ի Քէն զայս աղերսէ Տոպեցին .
 Առ հիւրընկալ շնորհակալեացս այսչափ բան ,
 Իբրեւ արձան թո՛ղ մնայ աստ յաւիտեան :
 Եղեազարեանց պարոն վասիլ սիրելին ,
 Եւ Զաքարեանց արգոյ իւան պարմանին .
 Որք հմուտ են լեզուաց՝ և բաւ ազգասէր ,
 Օրհնեա՛ զնոսա սուրբ օրհնութեաբդ խնդրեմ Տէ՛ր
 Օրհնեա՛ նաեւ սոցա նման որչափ կան ,
 Ազդին բարիս ցանկացողներն ամենայն .
 Հոս տեղ պիտի զիկ փոխել տամ իմ գրչին ,
 Որ առնէ գիր գիրս երեւան քաղաքին :

Գ Լ Ո Ւ Խ Ի .

Ա. Երեւանայ ստորագրութիւն . դիրք տեղւոյն և այլն :
 Բ. Բերք . կրպակք . եկեղեցիք . և այլն : Գ. Բերդ . կի-
 մայն . և Շահրիարցւոց դէպք :

Ա. Է շէնս այսմիկ ի ծոց կոտայք դաւառին ,
 Մե՛ղք՝ որ սկիզբն մեղ պատմագիրք չատային .
 Անուն սորա յարձանագիրս Գեղարդայ ,
 Վեց դար յառաջ յիշատակող գիտեմ կայ :
 Անկից անդին երբ է շնուեր չեմ տեղեակ ,
 Լռենք , մինչեւ ի լոյս հանէ ժամանակ .
 Արարատեան լայնածաւալ դաշտին գիրկ ,
 Շիներ են սա և ունի դիրք գեղեցիկ :

Արեւելեան դէհէն ունի լիճ Սեւան ,
 Ծաղկոցածորն իւր գեղերօքն ամենայն .
 Իսկ Մայր Աթոռն յարեւմտեան կողմն սորա ,
 Երկու ժամ գո՛գ հաղիւ թէ կայ բացակայ :
 Հարաւէն իւր փախչի Արաքս տրտմազին ,
 Որ մին է սա հին վտակաց դրախտին ,
 Երթայ Մուղան՝ անդ միանայ ընդ մեծ Կուր ,
 Նովաւ հանդերձ ի ծովն Կասպից գնան հիւր -
 Արեւելեան Հիւսիս դէհէն Հրազտան ,
 Գոռալով գայ , և քաղաքէս տայ հորդան .
 Սորա վերայ մեր Հայ վիրդերն Արովեան ,
 Ունի դրուատ՝ որ կարդալու է արժան :
 Մագիստրոսի վանք՝ որ Բջնի անուանի ,
 Երեւանայ սա եւս հիւսիսն անկանի .
 Էր սա երբեմն պայծառ Աթոռ նաղելի ,
 Աւա՛ղ , ներկայս բուք բնակին ի միջի . . . :

Բ . Ունի քաղաքս բաւ պարտեզ և այգեատան ,
 Եւ պտղատու ծառք սորին են դանազուն .
 Արդ իւնաւորն ամէնէն շատն է խաղող ,
 Որ աննախանձ ձօնէ բնակչաց բերրի հող :
 Իսկ գիւղերէն լինի բամպակ բազմաթիւ ,
 Բրինձ՝ սուսամ , սեխ՝ և ձմրուկ շատ ազնիւ .
 Նա մանաւանդ մաքուր ցորեան պիտանի ,
 Որոյ նման քիչ տեղ գո՛գ թէ գտանի :
 Հայ ու Պարսիկ են բնակիչք քաղաքին ,
 Բայց չեմ տեղեակ նոցա սաոյգ գումարին .
 Հազարի մօտ տեսակ տեսակ խանութպան ,
 Երեւի թէ ներկայումս կան յերեւան :
 Մեր Ազգ ունի հոս տեղ հինգ հատ ժամատուն ,
 Որ ակմբեալ մէջ ձօնեն փառս Աստուծոյն .

Բողոքին եւս կաթողիկէ կան շինած ,
 Եւ գլուխներ Տիրոջ խաչիս պտակած .
 Աւագութիւն սուրբ Սարգսին տրուեր է ,
 Զի առաջնորդն երեւանայ անդ նստէ :
 Հոս է նաեւ ուսումնարան քաղաքին ,
 Բայց բնակիչք դեռ ուսմանց յարգ չըզգացին .
 Երեւանցիք գլխացէ՛ք ձեր զաւակներ ,
 Եւ մի՛ մնաք մինչեւ խաղառ անտարբեր :
 Շաղորդարան մեր ունի լաւ տեսարան ,
 Զի Զանկիկն գլուխ գնացս ման ի ման .
 Սա կերտեր է տէր Ստեփաննոս մեծ արհին ,
 Ար է ի կարգ ճոխ շինից այս քաղաքին :

Գ . Բերդի մէջ կայ Ռուսաց մի ժամատուն ,
 Նոր քարուկիր , և շինուածովք յոյժ սիրուն .
 Եւ մեծ մզկիթ մի ի Պարսից մնացած ,
 Ար ներկայիս մէջ վաւօդ են լեցուցած :
 Երբեմն յայս բերդ անագորոյն Հասան խան ,
 Ո՛հ , շատ Հայու թափեր զարկն ընդունայն .
 Կարդա՛ դու վէրք Հայաստանի անուամբ գիրք :
 Գազան խանիս տե՛ս թէ ո՞րքան են չարիք :
 Մեր Գանիէլ կաթողիկոս ի սոյն բերդ ,
 Մինչ մարտնչէր Ռուս մարտիւ Պարսից հետ .
 Վախճանեցաւ իբր ի բանտի ծերունին ,
 Կարօտ մնալով էջմիածնայ սուրբ Գահին :
 Երեւանայ կլիմայն է ամառ տաք ,
 Իսկ ձմեռան ցուրտն է կարի դժնդակ .
 Ողորմելի է այս քաղաքն սոյն մասին ,
 Ռուսի անխորձք պատահելով վնասին :
 Միանդամ ես նոյեմբերին* հոս գիտայ ,

* 1860ին այս ճամբորդութիւն տեղի ունեցաւ վախայ

Այնպէս տատիկ ձիւն՝ բուքի դեռ չհանդիարայ -
 վարդապետաց հետ Պօղոսի խան նստած ,
 ծուրտի ձեռքէն տե՛ս ինչպէս ենք կծկուած :
 Նեղ մնալով խեղճ կապտտիկա** ծախեցի ,
 Որոյ նման , այլ չեմ կարեր ճարել ձի .
 Հոգ չէ բերան ակուայ չունէր՝ և աչք խւր ,
 Թոռ սատկելու օր շատ լալէն լեալ էր կոյր :
 Այս քաղաքէն մեր ազգէն շատ հարուստ կան ,
 Որոյ մինն է Յ. Ս. անուամբ ոմն իշխան .
 Ունի կալուածք ու քանի գեղ սեպհական ,
 Եւ կրտսանայ ի նոցանէ նա շատ բան :
 Խեղճ Շահրիար գիւղացւոյ հետ երբեմն սա ,
 Ըստ սլատմութեանս որ ինձ ասին բռնանայ .
 Տասն ու հինգ տուն ճարահատեալ ի նոսա ,
 Ռուս ազգի ծէսն կընդունեն ակամայ :
 Թէ և յետոյ զարարս խրեանց զղջալով ,
 Առ մեզ գալու փորձ փորձեցին ջերմ յուսով .
 Սակայն կանոն խիստ տէրութեան չարաչար ,

ի սուրբ Էջմիածին , ընդ տէր Մկրտիչ արք եպիսկոպոսի
 Խրիսեան Կ . Պօլոյ ներկայիս Ամենապատիւ սրբազան
 Պատրիարքի , ընդ Գերապատիւ Երեմիա արհւոյն . ընդ
 հոգեւոյս տէր Իգնատիոսի Արք եպիսկոպոսի առաջնորդին
 վանայ . և ընդ այլ վարդապետաց և ժողովրդոց . զորս
 յատկապէս Մատթէոս վեհափառ Կաթողիկոս հրաւի-
 րանօք կանչեր էր . Թէ՛ սրբազան Պատրիարք և Թէ՛
 Իգնատիոս եպիսկոպոս :

** Եթէ ընթերցատէր Հայ հասարակութիւն ներկայ
 հրատարակութեամբս զիս քաջալերեց . մտադիր եմ քիչ
 միջոցէն զկնի սորա անուամբ երկու հազար տան չափ
 գրեալ հետաքրքիր համբորդութիւն ևս հրատարակել :

Յրգել՝ թէ ձեզ Հայ ապրելու չկայ ճար :
Ահա՛ սապէս դատուան ի մէնջ ողբալիք ,
Բռնաւորայն էր չգլթացին քար աղիք .
Տէր մինչ առնես դու քո արդար դատաստան ,
Այսպիսիք քեզ կարո՞ղ են սալ պատասխան :

Գ Լ Ո Ւ Խ Ի Ա .

Ա. Մասիս լերի տառագրութիւն կայն : Բ. Նոյի գոհ :
Է. ցուիւ կենդանեաց կայն : Գ. Դէպք Արդաւազայ :
Դ. Զոհեղեղի ժխտողք , Զգօն Սուրբ Յակոբայ ջանք , Է.
վերջին չարժն Մասիս լերին :

Ա. Է սա ի մէջ Արարատեան նահանգի ,
Գրիւք ահեղ՝ և կազմութեամբ փառացի .
Ձեռն Անեղին Հայոցս աշխարհ որչափ կան ,
Պարթեւ լերինք՝ զայս ետ նոցա սէգ իշխան :
Ազատ Մասիս Հայ աղգին է տօնելի ,
Որ պահեր ցարդ մեր հարց անուն կենդանի .
Արմայիսեան Ամասիա նահապետ ,
Իւր անունով սարիս Մասիս կանչել ետ :
Նուիրական այն հսկայ սարն ալեւոր ,
Տեսէ՛ք ինչպէ՞ս ունի նա դիրք փառաւոր .
Հարիւրաւոր տարիներով ձիւն գլխէն ,
Զի պակասեր և ինքն բարձր է ամպերէն :
Նոյի եղերէ սա երբեմն խանձարուր ,
Եւ տապանաւ զինքն ընդունել ի գիրկս իւր .
Լեալ է սա նոյն վտանգերոց մխիթար ,
Որք ծովու մէջ տառապէին՝ անդադար :
Սա բարերար է ճիշտ նոր մերս մարդկութեան ,
Ինչու եղեւ բուն ծփերոյն սողաստան :

երբ ծովածուփը տարա կատար գրկեցին ,
 «Այսուհետեւ պատժէն զերծանք» դռեցին :
 Ամէնք մէկէն Մայր տապանէն դուրս ելան ,
 Մարդ՝ անասուն՝ սողուն՝ թռչուն՝ և դազան .
 Չայն ցնծութեան ամենայն շունչ խմբովին ,
 երախտապարտ լեալ տային փառս փրկողին :
 Հոս արդար Նոյ՝ զոհ մատուց սուրբ Արարչին ,
 Մաղթելով որ դարձեալ չպատժէ աշխարհին .
 «Գիտես՝ ասէ , մեր միտքն ի խնամս կայ չարին ,
 «Խնդրեմ որ զայս պատժ չկրկնես մեր սեռին : »
 փոյթ Բարերարն ընդունելով նորա զոհ ,
 «Հաշտ եմ ընդ քեզ՝ տապ չունիմ ձեզ հետ ո՛ր .
 «Իմ հաշտութեանս ձեւմ տհա՛ ձեզ նշան ,
 «Յերկնից կամարն սա գեղանի ծխածան :
 «Երբ տամ անձրեւ ձեր մարդաց և դաշտերուն ,
 «Ամպերէն բարձր սա տի տեսուի շատ սիրուն .
 «Այն ժամանակ ուխտս՝ որ ձեզ հետ յիշելով ,
 «Չեմ քնջեր մարդ՝ կացէ՛ք ուրեմն անխորով : »
 երբ որ ապրեալքն Տեառն հետ զայս գաշն կնքեցին ,
 Բերկրեալ ի սիրտ իւր սուրբ Անուն օրհնեցին .
 Կատարեցին անդ մեծ հանդէս ցնծութեան ,
 Նոյ իւրայնովք՝ սողուն՝ թռչուն և անբան :
 Ապա տուին վերջի համբոյր տապանին ,
 Այն որ եղեւ մէկ տարի մայր ամենին .
 Ասպնջական լեռնէն ի վար խնդաղին ,
 Իջան խումբ խումբ՝ ըստ հրամանի Անեղին :
 Մոնչելով առիւծն վաղեց խիտ անտառ ,
 Արջն՝ խողն ի շամբն՝ և նապաստակն իրեն . քար ,
 Արագած շատ տեղ պատարաստեց այծեմին ,
 Որ վերջ որսով առն գաւնայ Հոյ պարմանին :

Քիչ տաք երկիր սիրելով մինչ Հնդկաստան ,
 Ու բազիկ հոն աճապարեց անխափան .
 Ի գիրկս ամպնոց չողան թռչունք գոյն զգոյն ,
 Ճալըղելով օրհնեն զանմահ բնութիւն :
 Օճ սողալով մտաւ իւր բուն՝ որ ոչխար ,
 Չինի թէ իւր գլուխ ճղմէ չարաչար .
 Ողնին դնաց Նոյի անկած նոր այգին ,
 Որ փափագով կամք հարցուցի խաղողին :
 Մեղուն փութաց ի խումբս ծաղկանց իւր քնքուշ ,
 Հիւթս ծծէ որ վերջ չինէ մեղ մեղր անուշ .
 Սակա ձմերան աշխատատէր ժիր մըլին ,
 Պատրաստեցաւ պարէն գիղել իրեն բուն :
 Այսպէս ահա՝ ըստ հրամանի գլծած Հօր ,
 Ողջ կենդանիքն ի դործ մտան անդանօր .
 Իսկ անասունք եղ՝ ձին՝ էջ՝ այծն խմբովին ,
 Տեղ չերթալով մեղ հետ ապրել ուխտեցին :
 Նոյ չողեց որ այս սուրբ վայրէն հեռանալ ,
 Հապա մինչ մահ համբերելով աստ մնալ .
 Ուստի անկեց ի կող Մասեաց մի այգի ,
 Շէն կերտեց հոն , և անուանեց Ակոռի :
 Վերջ իւր այգւոյ գինին խմաւ՝ զովացաւ ,
 Խոնջ և վաստակ երանելին մոռացաւ .
 Անխորձ գողով գինիէն՝ մերկ պառկեցաւ ,
 Քամ զինք ծաղրեց՝ և անխիղի հանդիպաւ :
 Բայց մեր Յարեթ՝ Սեմայ հետ հօր մերկութիւն ,
 Ծածկելուն սակա՝ առին բաղում օրհնութիւն .
 Բաւական է վերջ տանք այս մեծ պատմութեան ,
 Մասիսին այլ գէպքեր ճառենք եթէ կան :
 Դ. Մեր Արդաւադտ Արաաշէսի սէր տղան ,
 Հօր անէծքով յայս լեռ մնաց յաւիտեան :

Կապեր են քաջք զինքն ամրապինդ շղթայով ,
 Որ տիեզերք մնան խաղաղ՝ ապահով :
 Նորա շղթայքն կրծենն այժմ շունք կատաղի ,
 Որ խղերով ելնայ վերջ տայ աշխարհի .
 Բայց երբ դարբին իւր կռանին հանէ ձայն ,
 Կամրապնդի Արտաւազոտայ հաստ շղթայն :
 Կիրակի օր բան չբանելով եւս դարձեալ ,
 Պիտի ծեծեր դարբին երեք հեղ իւր սալ .
 Այս առասպել Գերթողահօրն օրով դեռ ,
 Դեղ ու քաղաք խօսէին մեր մամլիկներ :

Դ. Եղան սմանք ժամանակէ մը զկնի ,
 Որք ասացին թէ ջրհեղեղ եղել չի .
 Անոր համար սուրբ հայրապետն Մծբնայ ,
 Մինչեւ Մատիս աշխատելով կոնայ :
 Կողէ անձամբ սարի դլուին ելանել ,
 Եւ տապանէն մատ մ' առնելով վար լծնել .
 Չհամազուտղաց զայն ցուցանել ի նշան ,
 Որ չլինի թէ մնան ի մէջ կործանման :
 Դէմ դնելով յԱւագ Մատիան ճեպէ վեր ,
 Իյէ՛ , տեսնայ Մայր տապան անդ անհամբեր .
 Բայց յողնելով երբ քնանայ ծերունին ,
 Ելեալ դիտէ զինքն յատորոտ մեծ լերին :
 Այս դաժան չափ փորձէ ձերուկն երեք հեղ .
 Կարթնայ ոչ զինքն տեսննէ նախկին տեղ .
 Ճարահատեալ խնդրէ լալօք յԱրարչէն ,
 Որ տայ ինքեան մասն ինչ Նոյեան տապանէն :
 Կըսէ Աստուած պաղատանայ Զգօնին ,
 Փութով ուղած խրկէ ձեռամբ հրեշտակին .
 Ասէ հրեղէն Յակոբայ « ա՛ռ պարզ եւս սուրբ ,
 Զի չուրիւ Տէր որ առ ծնողդ լինիս հուպ » :

Մեծ բերկրանք տուեալ նշխար տապանին ,
 վերադարձաւ առ հօտն իւր՝ որ ի Մծբին .
 Անոնք որ դէպս ջրհեղեղին ժխտէին ,
 փայտ տեսնալով տաճներ յետս կոչէին :
 Անդ ո՛ւր հրեշտակն երեւեցաւ Զդճին ,
 Հայք պատուելով մի մենաստան կառուցին .
 Յանուն մեծի հայրապետին Մծբնայ ,
 Դնելով մասն ինչ տապանէն ի նմա :
 Կրօնաւորօք լեցուաւ իսկոյն մենաստան ,
 Հռչակեցաւ իւր անուն ողջ Հայաստան .
 Բայց ինչ օգուտ ահագին շարժն մեր օրով ,
 Ակառոյ հետ ամիրոփեց սա ընդ հողով :
 Հոս պատմութիւնդ նուիրականդ իմ Մասիս ,
 Կնքեմ պիտի՝ բայց խնդրեմ որ չդատես զիս .
 Երկու տող եւս Արագածայ վերայ բան ,
 Պէտք է գրեմ՝ որ կայ քեզ միշտ յանդիման :

Գ Լ Ո Ւ Խ Ի Բ .

Ա. Արագած լերին ստորագրութիւն : Բ. Թաղուէլ զե-
 րեւան և դնալ ի Քանաքեռ և տեղադիր նորին : Գ.
 Քանաքեռի զիւցաղներ :

Ա. Մասիսէն զատ սորա նման պարթեւ լեռ ,
 Աչք Տոսպեցոյն Հայոց սահման չտեսին զեռ .
 Լայնատարած ունի սա դիրք փարեղի ,
 Զինքն դիտողին դրաւէ զուշն իրաւի :
 Տեսէ՛ք ինչպէս ծալ ծալ ամպեր դեղեցիկ ,
 Իւր գիրկն եղած պահ կանցուցեն հանդարտիկ :
 Ծծեն պաղ ջուր Արագածայ վտակաց ,
 Ու վերջ դաշտից ամեն մարդարիւս անձրեւաց :

Պայծառ մայիս ձօներ սմա լի ու լի ,
 Կերպ կերպ ծաղկունս առաւօտեան շաղօք լի .
 Զով զեփիւռէն՝ տե՛ս թէ ո՞րպէս ծածանին ,
 Կակաջ՝ լալան՝ և գիներբուկ գեղանին :
 Պճնաղարդեր է սա համեստ հարսի պէս ,
 Գեղեցկացեր ելեր ահա՛ ի հանդէս .
 Շքեղութիւն ո՞վ կարող է թուել իւր ,
 Տե՛ս թէ որչա՞փ սիրահարք կան առ ինքն հիւր :
 Հարիւրաւոր վրանով հոս ճոխ մարդիկ ,
 Եկեր են զի վարեն կենցաղ երջանիկ .
 Բռնանալով սոցա շոք՝ լուն՝ և մթիկ ,
 Տուներ ձգած՝ աստ փախչեր են խղճալիք :
 Մոռացեր են տաղտուկ օգի նեղութիւն ,
 Եւ զեփիւռէն դտեր են շատ դիւրութիւն ,
 Այն հիւանդն որ երէկ բերին հոս մահճով ,
 Տեսէ՛ք ի՞նչպէս ծաղիկ ժողվէ ապահով :
 Եւ այս կայտառ անմեղ տղայքն ի՞նչ սիրուն ,
 Պարեն՝ խաղան ի մէջ մատղաշ մարդերուն .
 Ամենայն ոք հիւսեր պսակ իւր գլխոյն ,
 Բիւր կերպ ծաղիւք՝ որք սարիս գիրկն են լեցուն :
 Հովիւ Տաճատ դեռ նոր ծաղեր առաւօտ ,
 Յայս պարարտ վայր հասուցեր է իրեն հօտ .
 Այժ և մաքին համբոյր ծաղկանց տան սիրով ,
 Եւ իրենցմէ հալածական անեն սով :
 Իսկ մեր Տաճատ մերձ պաղ աղբիւր խաղաղիկ ,
 Նստեր անհող՝ և կը վիշէ զիւր սրինդ .
 Նորա փողի եղերական ձայն ազի ,
 Խորհող Հայու համար է շատ զգալի :
 Իւր Պերճ ընկեր քաղցր ձայնով մեր հին երգեր ,
 Կանչէ , և իւր տան արձաղանք շատ լեռներ .

Զգայուն սիրտ զայս լսէ ոչ իրաւի ,
 Պիտի թորէ յաչաց արատար լի ու լի :
 Յիշէ պիտի մեր Արմենակ նահապետ ,
 Որ սէր կապեց իսպառ պարթեւ սարիս հետ :
 Մինչ իւր անուամբ լեռս Արադած յարջոյնեց ,
 Տեղ մը շերթարով իւր պարարտ կեանք հոս կնքեց :
 Հարկաւ շատ հեղ երբ եկեր է ճոխ մայիս ,
 Առեր է սա իւր ժիր որդին Արմայիս :
 Ամասիան՝ Գեղամ՝ Արաստ միամին ,
 Այցելութիւն բերեր է սա սէգ լերին :
 Այս մեծ քարի շուք նստելով կերին հաց ,
 Փունջ փունջ ծաղիկ նուիրելով միմեանց :
 Եւ այս աղբերցս զըզզուն ջուրն խմելով ,
 Ամենակալ Հօր ձօներ են փառս յղով :
 Մեծ Արմենակ գիտեմ անշուշտ իւր թոռանց ,
 Քաջին Հայկայ պատմեր է վարս գերազանց :
 « Թէ որպէ՞ս նա սուրբ Արարիչն յուսարով ,
 « Բէլ կործաներ իւր լայնալիճ աղեղով :
 « Այն որ անձին լեալ էր միայն ապաստան ,
 « Էւ մտադիր էր կործանել Հայաստան :
 « Մեր գիւցազնւոյն հանդիպելով սլաքի ,
 « Հարեալ 'ի կուրծս՝ ական թօթափ մեռանի :
 « Զօրք վիթխարւոյն՝ չար դիպուածոյս երբ դիպան ,
 « Փախուստս առեալ՝ թողին ազատ Հայաստան : »
 Այս և ասոր նման գործեր յաղթող հօր ,
 Իւր զաւակաց ճառարկեր է աստանօր :
 Հոս Արադած լերան դոցենք պատմութիւն ,
 Որ օրորան լեալ է մեր Հայ քաջերուն :
 Փոխենք ուրեմն ընթացք շուտով մեր գրչին ,
 Թող դժէ դէպս ինչ որ դիպան մեզ յուղին :

Բ. Կրկնազատիկ երեքշաբթի ցորեկին,
 Քարեաւ մնաս Երեւանայ մեր յետին .
 Տալով նստանք ի կառս հետիս ընկերօք,
 Առեալ զչուն ֆանաքեռին ընդ ձեռօք :
 Քանի մը սպայ Հայ պարմանի մեզ հետ մինչ,
 Նոյն շէն կուգան՝ որ ուղարկեն Մկրտիչ .
 Նստեր են ձի Հայաստանի յոյժ կայտառ,
 Որ քալելու տեղ կանեն միշտ խաղ ու պար :
 Կէս ժամէն վերջ հասանք ամէքս ֆանաքեռ,
 Եւ հոն տեղ մեզ ի չու հանող եղբայրներ .
 Գրկախառնեալ մեզ յաջող ելք խնդրեցին,
 Հալոտ աչօք ձիք մտրակեալ գնացին :
 Մի թէ չելին մեր երեքիս եւս աչաց,
 Մարդարտի պէս տաք տաք կաթիլք արտասուաց .
 Ո՞հ որչա՛մի դառն է բաժանման կէտ մարդոյն,
 Լոկ նա գիտէ՝ որ ունի սիրտ զգայուն :
 Դեռ չմեկնած ֆանաքեռի տեղադիր,
 Ամիտի ոճով սակս խնդրողացն առնեմք գիր,
 Երեւանայ արեւելեան կողմն է սա,
 Կէս ժամ հազիւ կայ ի նմանէ բացակայ :
 Մեր Ազդէն այժմ ութսունի մօտ գերդաստան,
 Կան ֆանաքեռ Հայ գիւղիս գիրկ նստկան .
 Երբեմն էր սա պայծառ աւան անուանի,
 Խօսքիս վկայ բերկորներ ցարդ տեսանի :
 Եօթն ուտասի դարու մեծ շարժն մինչ եղեր,
 Այս աւանին չափէն աւել փասեր .
 Քանզի հաղար՝ երկու հարիւր՝ քսան՝ ութ,
 Փլատակօք մարդ է մեռեր՝ չէ այս սուտ :
 Քանաքեռցի Չաքարիա սարկաւազ,
 Հայ պարսմադիր՝ որ ողջ էր նոյն ժամանակ .

Սոյն ազէտիս ականատես է վկայ ,
 Չհամողութիւն իւր վերջի գիրք ցոյց կուտայ :
 Ունին սոքա զոյգ մը սրբատաշ ժամատուն ,
 Բայց ներկայիս մինն հէրիք է գեղացւոյն .
 Նրախայից կայ ոչ յատուկ տեղս դպրոց ,
 Ուստի եղեր ազատ խաղան միշտ փողոց :
 Մատաղ օրեր նոյն դառնուկներն ի զուր տեղ ,
 Խաղ՝ ու ծեծով անցուցանեն իրենց գեղ .
 Խւրաքանչիւր թէ եւ ծնօղ իւր որդւոյն ,
 Տեսնայ վիճակ , բայց չի աներ գթութիւն :
 Ընտիր այդիք հանդերձ տնկօք զանազան ,
 Պարփակեր են ֆանաքեռի ողջ սահման .
 Երեւանայ վիճակին մէջ կարծեմ թէ ,
 Սորա նման ծառադարդ գեղ է՝ և չէ :

Գ. Այս շէն երբեմն ընտիր անձինք Հայ ազգին ,
 Նուիրեր է՝ որոց մինն է Աղասին .
 Այս գիւցաղն շատ գերեաց եզեր գերադարձ ,
 Եւ յօլովի աչաց սրբեր աղի լաց :
 Օքիւղ աղան՝ և ամեհի Հասան խան ,
 Նոր վահանիս հանդիպեր են քաջութեան .
 Հարիւրաւոր ֆիւրա ու Պարսիկ տնաւեր ,
 Աղասիի կարուն թրին լեալ են կեր :
 Հայ կտրճիս լիակատար պատմութիւն ,
 Ականատես մի քաջ հանճար գրեր բուն .
 Վիպագիրն է երեւելին Աբովեան ,
 Որ Աղասին անմահացուց յաւիտեան :
 Կարօն՝ Մուսէն սերտ բարեկամք Աղասուն ,
 Մի թէ չարին նորա նման քաջութիւն .
 Անիի գէպք՝ և մեծ կռիւն սոցա յար ,
 Անմահ արձանս պիտի մնան դարսոց դար :

Ուզող թո՛ղ վերք Հայաստանի մի առնէ ,
Այս քաջ Հայոց դէպքեր ողջ անդ տեսանէ .
Սա սպայներ և Արուսեան գովելին ,
Իւրեանց նախկին օդ Քանաքեռ ծծեցին :
Սեգ Աղաւին , և ժիր Մուսէն իւր ընկեր ,
Դաղարու քուն Քանաքեռ դեղն՝ են ննջեր .
Գրկախառնեալ հարց հետ պառկեր են ապաւն ,
Եւ ըստասեն հասարակաց յարւթեան :
Փղձկմամբ սրտի աւի սոցա ես հոգւոց ,
Հանի նաեւ հառաչելով մի յողւո՛յ . . .
Թէ ընդէ՞ր սոյնք առանց յաջորդ ննջեցին ,
Անտէր Հայուն՝ այլ մի պաշտպան չձգեցին :

Գ Լ Ո Ւ Խ Ի Գ .

Ա. Մեկնիկն մեր ի Քանաքեռայ : և ժամանել մինչեւ ի
Սօխիֆանտալ : Բ. Գնալ Յախթայ և անտի յԵփնովկայ :
Գ. Եփնովկայի ամիտի ստորադրութիւն :

Ա. Ես՝ Մկրտիչ՝ պարոն Գրիգոր միասին ,
Քանաքեռին տալով ողջոյն մեր յետին .
Բաղմեղով կառս հանդերձեցանք դնալու ,
Մինչեւ յԷլար , և գիշերն անդ մնալու :
Երեք մէկէն ձիանք ճեպեն ըշտապով ,
Ձի դէմ ետեալ չուն մեր է շատ ապահով .
Քառորդ մ՝ եկինք՝ իւր դէմք ծածկեց Քանաքեռ ,
Բայց դեռ Էլար ցոյց ետ ոչ մեզ զիւր պատկեր :
Ժամ տաանումէկ երբ ժամացոյց ողջունեց ,
Նոր կայարան զմեզ յիւր ծոցն ընդունեց .
Երեւանայ մինչ Էլարայ կայարան ,
Ողջ ճանապարհ տաան ու վեց վերստ է ըման :

Էլար գիւղն է ի մէջ Կոտայք գաւառին ,
 Վեցն անգամ չորս տունք ընակին գիրկ նորին .
 Ստեփաննոսի անուամբ կայ մի ժամատուն ,
 Ո՛ւր խմբեալ գեղ՝ տայ Բարձրելոյն գոհութիւն :
 Սոյն շինիս գէմն արքունական կայարան ,
 Շինելուն սակս՝ կրէ անուն յիւր վրան .
 Յոգնած գորով՝ եղբայր տեղւոյս վայրագիր ,
 Զկրցայ գրեմ՝ առ այս կալ զիս անբասիր :
 Առաւօտ շուտ զկնի ծագման արեւու ,
 Պատրաստուեցանք Սօխիֆանտալ գնալու .
 Տէրն յուսալով ճանապարհի ձեռք զարկինք ,
 Եւ կայարան անքայլ ոտիւք գրկեցինք :
 (Տփխիսեցի Մինասարեան Հայ սպայն ,
 Իւր ընկերօք մինչ յԱխտայ հետ մեղ եկան .
 Վարաժնունիք՝ Նիգ՝ և Կոտայք գաւառաց ,
 Իշխան էր նա՝ պաշտօնատար՝ նոյն վայրեաց) :
 Հարթ գորով չուն՝ յոգնեցոյց մեղ ո՛չ իսկի ,
 Եւ մեր ձիանք թռչին իբրեւ արծուի .
 Արդ՝ Էլարայ մինչեւ սոյն սա կայարան ,
 Տասն և եօթ վէրստ՝ կէս էր ուղին ամենայն :
 Այս ուղին մէջ տեսինք կային երեք սար ,
 Միմեանց հանդէպ՝ կանանչ հագած յոյժ կայտառ .
 Պայծառ մայիսն իրենց աղէկ մ՝ զարդարել ,
 Վարդի նման տե՛ս որպէ՛ս են փթթեր :
 Մինն է Կիւթան՝ որոյ մի կողմն վարեն վեր ,
 Իբրեւ առու ճեղքուելով փոսացեր .
 Աւանդութիւն սորա ասի թէ «քաջեր ,
 Զայն հերկելով՝ անուն Կիւթան մնացեր» ,
 Երկրորդ կոչի Շամիրամ՝ որ նորա քով ,
 Սակս Արայի եկեր է նա տարփալով .

Պատճառ գալուն խնացուցեր Արային ,
 Բայց չի հասեր իւր բաղձանաց խղճային . . . »
 Իսկ երրորդին «Արայի լեռ անուանեն ,
 Եւ նահապետ հոն բնակեալ աւանդեն .»

Նոյն ողջախոհն Շամիրամայ հետ հոս մարտ ,
 Արեր՝ անկեր՝ ծաղկեր արեամբ իբրեւ վարդ :

Բ. Սօխիֆանտալ ճաշմ , արինք ոչ մեր ողջոյն ,
 Տալով զատուանք ի նմանէ մեք իսկոյն .

Գէմ դրեր ենք կերթանք յԱխտայ հապճեպով ,
 Որ չինի թէ վերջ անձրեւից դառնամք ծով :

Բայց ի՞նչ օգուտ մեր փափագին հասանք ոչ ,
 Կէս ճամբայի մէջ մեզ անձրեւն եղեւ խոչ .

Տարալի պէս իսպառ տեղաց մեր գլխոյն ,
 Այնպէս սաստիկ՝ որ կորուսինք գիտես չուն :

Ինչ եւ իցէ ժամանեցինք կայարան ,
 Եւ սպասեմք մինչեւ կաթիլք տեղի տան .

Սօխիֆանտալ ստանցայէն մինչ Ախտայ ,
 Երկոտաւան եւ կէս վերստ չու հաղիւ կայ :

Ախտայ է գիրկ վարածնունիք դաւառին ,
 Որոյ յետինք Ծաղկունք անուն կնքեցին .

Սոյն սա գիւղի մէջ այժմ պատրաստ մեր Աղգէն ,
 Եօթանասուն տուն կլինի ընդ ամէն :

Իսկզբանէ արհեստիւ են հողագործ ,
 Այլ գիտութեանց ամենեւին կան անւորձ .

Իրենք զիրենք Նոյի դարու մէջ գիտեն ,
 Շատ քրտինքով հաղիւ քիչ հաց կճարեն :

Տեսնան միշտ սոյնք այն նորեկ ազգ Մալական ,
 Թէ ո՞րպիսի կերպ գտեր են գիւրութեան .

Աւանց մեծի աշխատութեան հանգիստ հաց ,
 Դիտեն շահիլ՝ որ այս յայտնի է բաղմաց :

Երկու եղով հերկեն գերկիր՝ թէ չլինի ,
 Նոյա փոխան կարեն լծել՝ էշ՝ և ձի .
 Զգեր են բաց դժուար կիւթան գլխովին ,
 Եւ մերժեր են գործածութիւն Հայ սայլին :
 Պարզ և գիւրին՝ յօրիներ են անոնց տեղ ,
 Որ անասունք երբէք նոյնք չեն ձգեր նեղ .
 Ահա՛ մէն մի այսպէս առեր իւր տալար ,
 Եւ կհերկէ իրեն բաժին արտաւար :
 Իսկ մեր Հայեր՝ Հայկայ օրէն ինչ տեսան ,
 Ուխտեր են որ բնաւ չանեն մոռհան . . .
 Քաշեն այս դառն աշխատութիւն կամովին ,
 Եւ չեն ուզեր փոխել իսպառ ըզձեւ հին . .
 Մի քարաշէն եկեղեցի պատուական ,
 Ունի սա գեղ , որ բերէ փառս իւր անունն .
 Զորս հունձք առաջ խրիմեան Հօր հետ կրկին ,
 Եկեր եմ աստ , բայց նոյն ատէն էր շատ հին :
 Քանի մը տնւոր Ռուսաստանէն Մալական ,
 Սոյն սա գեղին մերձ գաղթական մարդիկ կան .
 Հերկեալ ցանեն Հայոց արտեր գեղեցիկ ,
 Եւ տեարք նոյնն չկարեն հանել երբէք ճիկ :
 Հայաբնակ Քաղքիս անուամբ կայ գիւղ մի ,
 Որ Ախտայու մերձ արեւմուտքն անկանի .
 Զառ ի վայրի մի տակ սոյն չէն շինուեր է ,
 Եւ Հրազտան միշտ առջեւէն անցանէ :
 Նստանք դրօկան Ախտայն իւր տեղ ձգելով ,
 Ելինովկայ երթանք անձրեւ ուտելով .
 Հատանք յայս շէն՝ շուտ ճար տեսանք երթալու ,
 Բայց արդեւ մեղ սո՞՞հարկե՞լ լու ի լու :
 Շատ վշտացանք . . այլ նա երկու պատճառով ,
 Իւր միտք յայտնեց՝ և արար մեղ տպահով .

«Ասաց թէ ձեզ անձրեւ նեղէ չարաչար ,
 Եւ մեր ձիանք այժմ քաղելու չունին ճար :
 Խօսւքս պատուելով հիւր եղէք ինձ այս գիշեր ,
 Արշալուսին ձեզ կուղարկեմ ի չուն ձեր .
 Հոն ապահով գիշեր լուսի փոխեցինք ,
 Եւ մեր խորին յարգանք մարդոյն յայտնեցինք :

Գ. Ելինովկայ հարիւրի մօտ գերդաստան ,
 Բոլոնիոյ երկրէն դադթեալ մարդիկ կան .
 Բայց ոչ կամաւ՝ այլ բռնութեամբ Ռուսաց .
 Զրկուեր են իրենց բնիկ հայրենեաց :
 Զի տէրութիւն այնպէս մի գիրք բռներ է ,
 Որ ցրուելով կուղէ զանոնք Ռուս շինէ .
 Այս պատիժէն չեն զերծ խեղճ վիրք և Հայեր ,
 Ինչպէս նաեւ Լէզկին՝ Պարսիկ՝ Թաթարներ :
 Միայն սա է պարզ նպատակ տէրութեան ,
 Որ հպատակս իւր մի ծուլէ ամենայն .
 «Ասէ այսու խրոխտ մնայ Ռուսաստան ,
 Եւ ի գլուխն իւր դնէ թագ յաւիտեան . . . :»
 Սոյն Մալաիկանք բուռն տէրութեան հրամանաց ,
 Անսալով ոչ՝ մինչ հոս եկին աչք ի լաց . . .
 Շիներ են աստ իրենց համար տեղ և տուն ,
 Գիտեն նաեւ շատ մի արհեստ գոյնզգոյն :
 Շէնս է ի մէջ Գեղարքունի գաւառին ,
 Յարեւմտեան կոյս Գեղամայ քաղցր լճին .
 Պարիլ՝ կայսռիլ վէտ վէտ ալեաց Սեւանայ ,
 Պահեն զգիւղս միշտ խնդութեանց ենթակայ :
 Փչէ սոցա ծովն իւր զեփիւռն անուշիկ ,
 Եւ գոհ կանէ խեղճ գաղթական ընտանիք .
 Այն որ ունի սրտին մէջ խոր տրամուծիւն ,
 Հոս գիպելով մոռնայ իւր ողջ նեղութիւն :

Հազար անգամ այն մարդոյն տամ երանի՜ ,
 Որ այս ծովուս շրջակայներ բնակի . .
 Ելինովկայ բացակայ է Ախտայէն ,
 Եւ տասն ու հինգ վերստ չու ունի ընդամէն :

Գ Լ Ո Ւ Խ Ի Դ .

Ա. Մեկնիլ Ախտայէն . և գնալ ի Սեւան կղզին : Բ. Տե-
 ղադրութիւն նորին : Գ. Թիւ միարանաց Լայն : Դ.
 Անուանի հարք Սեւանայ :

Ա. Առաւօտեան զկնի ծագման արեւու ,
 Հանդերձեցանք գնալ ահա՛ Զպուխու .
 Մինչդեռ տեսի ես Սեւանայ անապատ ,
 Ասի ո՞ տայր ինձ միանգամ գնալ անդ :
 Գոհ եմ փրկիչ փոյթ կատարեց եմ խնդիր ,
 Եւ ընկերներս ձայնիս եղէն ունկընդիր ,
 Հետս առնելով իջանք առ ամին Գեղամայ .
 Նստեալ լոթկան դիմենք կղզին Սեւանայ :
 Հասանք նոյն ուխտ և սուրբ վայրեաց ակնտես ,
 Եղեալ ասի՝ փրկչին իմոյ թէ փառք քեզ .
 Ինչո՞ւ քանի տարուան կարօտս՝ որ առ նա ,
 Մտաւապէս առի այսօր լիացայ :
 Արդ՝ ուրիշ հեղ՝ այս ճամբայէն անց ու դարձ ,
 Արել էի , բայց ներս չէի ոտք կոխած .
 Յովհաննու պէս ձայնակցելով և ես թէ ,
 Ուրախութիւնս այս որ իմն է՝ լցեալ է :
 Տփխիսեցի տէր Սողոմոն սարկաւադ ,
 Ժամէն զկնի մեզ հրաւիրեց յիւր սենեակ .
 Զողանք առ նա ընկերացս հետ միասին ,
 Ուտելով հաց՝ փառս մատուցինք Արարչին :

Մի ժամ և եթ հազիւ եթէ մեք կղզին ,
Անդրաղ կեանս կրցանք վարել խնդաղին .
Պատրաստուեցանք անմիջապէս դուրս գնալ ,
Գնալ և մեր ճանապարհէն ետ չմնալ :

Բ . Դեռ չզատուած կուգեմ դրել քո զիարդ ,
Ո՛վ նազելի Գեղամայ սուրբ Անապատ .

Քո չորս բոլոր պարփակեր է Սեւան լիճ ,
Զոր ի նախնունն քեզ պաշտպան ետ Արարիչ :
Յարեւմտեան դէհն անկանիս նորին դու ,
Եւ ցամաքէն մի վերստ հազիւ կաս հեռու .
Հիմի յապառած քարի վերայ են դրած ,
Ուստի չունիս դնտեղներէն ինչ կասկած :

«Երանի՛ թէ խեղճ կտուցն եւս քեզ նման ,
Դիրք մ' տնենալ՝ որով մնայր անսասան .
Սակայն մի կողմն հող լինելուն աղադաւ ,
Վանայ ծովէն կրէ լկանք ոչ սակաւ :»

Քո շրջապատ տարածութիւն կարծեմ թէ ,
Ընդ ամենայն զոյգ վերստի չափ է՝ և չէ .
Եկեղեցեացէ երեք են թիւք՝ մէկ մէկէն ,
Աղւոր ձեւով ճարտար շիներ սաղաչէն :
Ի սոցանէ աւագն անուն Տիրամօր ,

Կրէ վրան՝ աստ օրհնեն Տէրն ամէն օր .

Կարգաւ սրբոյն Մեղրիկայ և Մաշտոցի ,
Որոց անուն բերէ պարծանք մերս Աղբի :

Սուրբ Կարապետ՝ և Առաքեալք ի կատար ,
Կան քոյդ կղզոյն՝ որոց տօնին անպատճառ .

Ողջ միարանք համախմբին սիրով անդ ,

Եւ կատարեն զտօն սրբոց Չերմեռանդ :

Սուրբ սարգսի անուամբ ունիս մատուռ մի ,

Որ է աւագ եկեղեցւոյն դրացի .

Ուրոյն ուրոյն եկեղեցեացդ տեղադիր ,
 Հէք Տոսպեցին ըստոյգն չկարէ առնել գիր :
 Ինչու մի ժամ շնորհեցիր ինձ քովդ մնալ ,
 Թէ այժմ դրեմ սպրտին մէջ սուտ՝ սխալ .
 Ուստի խնդրեմ ամբիծ Մօրէդ լալադին ,
 Որ այս անգամ ներես հիքոյս յանցանքին :
 Երբ Տէր կրկին ուխտիդ առնէ արժանի :
 Յայնժամ պիտի տեղով դրեմ լի ու լի .
 Որ կարդարով Հայ բանասէր դո՛հ լինի ,
 Եւ ասէ ինձ հողացելոյս ողորմի :

Գ. Վէց վարդապետ՝ չորս սարկաւադ՝ չորս դպիր,
 Կան այժմ Սեւան՝ և օրհնեն Տէրն անձանձիր .
 Սարկաւադաց միջէն մինն էր ազգաւ ֆիւրտ ,
 Աստ առեր էր մկրտութեան սուրբ խորհուրդ :
 Գանի հատ եւս ժիր գործաւոր մարդիկ կան ,
 Որք միաբան հարց զամենայն պէտս հողան .
 Ոմն դռնաբան՝ ոմն ժամակո՛չ՝ ոմն հացթուխ ,
 Միւս խոհարար՝ որոյ աչքունք լեցուեր մուխ :
 Չորս ամյառաջ աստ իբր արօրի լուսաւոր ,
 Փայլէր վարուք Մեւքոն ընտիր ճգնաւոր .
 Առաքինւոյն բարի համբաւ ամէն մարդ ,
 Գիտէ՝ ուստի առնել ի գիր չէ ինձ պարտ :
 Գալուստ անուն տեսի աստ մի վարդապետ ,
 Որ ընթանայ հանգուցելոյն շաղաց հետ .
 Լուսարարի պաշտօն վարէ այժմ Սեւան ,
 Եւ զուր զրոյց խօսիլ չսիրեր իւր բերան :
 Միայն մէկի մ՝ երբ որ խրատ տալ սիրէ ,
 Յայն ժամանակ բերանի կապ կխօլէ .
 Ուրիշ ատեն քաշուէ յիւր խուցն առանձին ,
 Միտ դնելով աղօթից և Նարեկին :

Դ. Այս ուխտս երբեմն ասպնջական մեծ մարդոց,
եղեւ՝ և շատ երանելիք սնան ծոց .

Մաշտոցի պէս առաքինի և սուրբ այր ,
կեցաւ Սեւան՝ և է սմա բարերար :

Զի Մարիամ դուստր Աշոտոյ արքային ,
Որ էր Սիւնեաց քաջ վասակայ նա տիկին .

Յորդորմամբ սա հայրապետին Մաշտոցի ,
Տուն Արարչին կերտեց մեղ աստ հրաշալի :

Իւր յաջորդն եւս տէր Յովհաննէս պատմաբան ,
Հոս մնալով եղեւ նա ճոխ ճարտասան .

Յետ թարգմանչաց՝ վիպագիր հարց շարի մէջ ,
Անուն սորին մի փառաւոր բռնէ էջ :

Պատուական ծեր Մեղրիկ Գէորգ իւր դարուն ,
Յուխտէս առ Հայս հռչակեր է իւր անուն .

Սա վերջ գնաց Կիլիկիոյ Դրազարկ ,
Եղեւ եղբարց որ անդ՝ բարի օրինակ :

Աստ օր անցուց Սարգիս բաբուն Սեւանցին ,
Որ վերջ նստաւ յԱթոռ Հայոցս Լուսատուն .

Հոս կեցեր է պուէս Սարգիս ոմն մեկնիչ ,
Որ պատուեր գինքն Մագիստրոսի քաջ գրիչ :

«Աստ Մխիթար Սեբաստացի աբբոյ հայր ,
Հիւր մնալով իբրթէ տեսեր Տիրամայր .

Նորա յաջորդք այս պատմութիւն լսելով ,
Իւր վարուց մէջ ժողովեր են ընդ գրով :»

Թողում ապա Նորատուացի տէր Յօհան ,
Որ մինչ Լէզկիք կամէին դալ ի Սեւան .

Գերեւ՝ գերվեւ՝ կղզին վախճող բաղմութիւն ,
Սա աղօթիւք ետ զանոնք ողջ կուր ծովուն :

Այս գէպք անցեալ դարու կէս տեղ գիպեցան ,
Զոր առեր գիր Շահխաթունեան սրբազան .

Թէ որ կուզես ձեռք բեր նորա տեղագիր ,
 վերոյիշեալ վէպն լիով անդ ընթերցել :
 Տիփսիսեցի Զաքարիա Գուլապսեան ,
 Պուէտ արհին , երկար կեցեր յայս Սեւան .
 Զմայլելով Գեղարքունոյ վայրերուն ,
 Դրեր նորա . ներկայ՝ անցեալ պատմութիւն :
 Դարուս սկիզբն սորա օրով հասընտիր ,
 երեք բարունք կային Սեւան ճգնակիր .
 Որք են Մակար , Ռափայէլ և Մխիթար ,
 Որ հեշտալեացս կացին սատան մինչ իսպառ :
 Սոցա նման ընտիր արանց օրորան ,
 Հանդիսացեր է միշտ սոյն սա մենաստան .
 Հոս ամբողջենք սրբոյ ուխտիս պատմութիւն ,
 Ճամբորդութեան գրենք դիպուածս մեր իսկոյն :

Գ Լ Ո Ւ Խ Ի Ե .

Ա. Մեկնիլն մեր ի Սեւանայ , և դնալ մինչ ի Տիփիճան , յորտե
 անձրեւ : Բ. Թողուլ մեր զՏիփիճան և դնալ մինչ ի Չախմախի-
 լու : Գ. Բաժանիլ ի Չախմախիլուոյ և ժամանել ի Սարվան :

Ա. Բարեաւ մնաս հրաժարական մեր յետին ,
 Տալով տուինք տեղոյս սուրբ հարց և ուխտին .
 Ըշտապեցինք դուրս դնալու որպէսզի ,
 Էյնէն ի մեզ չդանայ առիթ դանդաւոր :
 Նստանք լոթկան անքայլ ոտիւք անցանք ծով ,
 Չկար սատան մեզ ոչ դնուեղ՝ և ոչ հով .
 Քանի անդամ ծովու պաղ ջուր խմեցինք ,
 Եւ գոհ սրտով Ստեղծողին փառս մատուցինք :
 (Որ կերտեր սա վանայ ծովուն հակառակ ,
 Քաղցր ջուր տալով բանայ մարդոյս անորժակ .

Դակ վանայ ծովն է կարի դառն և աղի ,
 Որով լինի բորակ չափէն աւելի :
 Սեւանայ պէս հանգիստեր եմ քաղցր ջրի ,
 Ինչպէս Նաղիկ՝ Խաչու՝ Սիւփան մի առ մի .
 Բայց սոքա են մէկ մէկ պղտիկ ծովակներ ,
 Եւ Գեղամայ չկարեն լինիլ նոյնք ընկեր) :
 Ելոնք ցամաք ընկերութեամբ միասին ,
 Հետի երթանք առ կառս մեր ինդագին .
 Մեր ձիավար դանդաւորեցաւ ի մէնձ թէ ,
 Չու դնացողն այսչափ երկար ընդատէ :
 Այժմ իմ մեծին , ես ի՞նչ պիտի պատասխան ,
 Տամ՝ կարծեմ թէ սակա ձեր կուտեմ ստատիկ գտն .
 Փոքր ընծայով մի նորա սիրտ շահեցինք ,
 Կառք նստելով շուտ Չպուխլու գնացինք :
 Ելինովկոյ մինչ Չպուխլու կայարան ,
 Տեւեղութիւն՝ տաան և չորս վէրստ է լման .
 Ամենեւին սոյն կայարան չմնացինք ,
 Զի պատրաստ ձի ունէր առեալ գնացինք :
 Չուն կտրելով Տիլիճանին գնանք տես ,
 Սակայն ստատիկ անձրեւաց շիթք նեղեն մեզ .
 Սոյն պատճառաւ Սիմոնովկայ քանի մի ,
 Բոպէ մնալ՝ դրինք արդէն ի մտի :
 Անձրեւ չկտրած դո՛ղ թէ ելանք մեր չուն ոչ ,
 Բայց յուղին նոր մեզ լկելով եղեւ խոշ .
 Ինչ և իցէ շատ նեղութեամբ Տիլիճան ,
 Մուտ գործելով օթեցանք անդ բաւակոն :
 Զի անձրեւի այն շահաւէտ կաթիլներ ,
 Կաշկանդեցին մեզ շուտ դնալ ի չուն մեր .
 Չպուխլուայ քսան վէրստ է Տիլիճան ,
 Խոր պէս դժուար գո՛ղ թէ չկայ երթ դաժան :

Բ. Յետ անձրեւին ձգեցինք նոյն կայարան ,
 Կառք նստելով ողջունեցինք Չուրուստան .
 Տիլիճանէն մինչ Չուրուստան տան և ինն ,
 վերստէ՝ կից հետ մի քառորդ եւս դու նմին :
 Չուրուստանայ ճամբային պէս զուարճալի ,
 Ի կայարանս երեւանայ չիք խսկի .
 Ոտնէն ի վեր իւր զարդարուն լեռնալներ ,
 Նոր հարսի պէս կանանչ սաեայ են հազեր :
 Խոխոնջալով դեռ սրբնթաց ընթանայ ,
 Ինչ տխուր սիրտ իւր ձայն լսէ զուարթանայ .
 Տեսակ տեսակ ջրի թռչունք բաղ ու սաղ ,
 Որպէս լողան մէջ խմբովին կարդ ի կարդ :
 Հայ Չարխէճ գիւղ այս պատուական լերանց զիրի ,
 Ուզեր է , որ իւր հիմն դնեն մեր նախնիք .
 Հանդէպ դեռին Չուրուստանայ խրոխտի ,
 Որ պարելով իւր առջեւէն անցանի :
 Այժմ իւր որդիք թէ եւ ռամիկ՝ այլ սակայն ,
 Վայելեն յար ձրիապէս բնութեան .
 Այն վայելուչ տեսարաներն աննման ,
 Որ թագաւորք՝ նաեւ կայսերք չունին զայն :
 Ժամ մէկն էր որ Չուրուստանայ կայարան ,
 Հասանք , և անդ կամք յարդեցինք միախման .
 Յետ արեւուն կամիմք գնալ մեք աստի ,
 Քարվանսարայ ճոխ ստանցան ուղղակի :
 Թէով հանդերձ մեր նախաճաշն արարինք ,
 Եւ որկորի գծգոհութիւն կարճեցինք .
 Տէրն յուսալով ընկերացս հետ միասին ,
 Կառք նստելով բաժնուեցանք նոյն կէտին :
 Քարվանսարայ ցույ տուաւ մեզ երես իւր ,
 Եւ մի քառորդ հաղիւ պահեց առինքն հիւր .

Քանդի ունէր պատրաստի կառք դնալու ,
 Ուստի վաւթով մեղ ուղարկեց Չախմախլու :
 Տասն երեք վէրստ երեք քառորդ եւս կի'ց հեա ,
 Չուրուստանայ նոր գտանես ըստոյդ երթ .
 Ժամանեցինք հանգստութեամբ կայարան ,
 Եւ իւր ուղին տանն և ութ վէրստ էր ըման :
 Կայարանացս մէջն անկանի Հայ Ախտան ,
 Եւ սորա պէս քանի մ' ուրիշ գիւղք եւս կան .
 Ոմանք Պարսիկ՝ միւս մնացեալք մեր Աղղէն ,
 Որ իւրեանց շէն կերտեր են աստ հին ատէն :

Գ. Սուղ ինչ միջոց հաղիւ կացինք Չախմախլու ,
 Չի Աստաֆան կանչէր զմեղ լու ի լու .
 Չողանք իւր տես տանն և վեց վէրստ կարելով ,
 Դո'գ ձանձրութիւն ամենեւին չկրելով :
 Յուսէնպէյլու և Աստաֆայ զոյգ մակդիր ,
 Որն սիրտդ ուղէ կայարանիս ընթերցի'ր .
 Յուսէնպէյլու ունի սահման ընդարձակ ,
 Շատ բերրի են իւր անդ՝ արա՝ և դաշտորայք :
 Քանի մը Պարսիկ գիւղեր ունի իւր գիրկն սա ,
 Բայց չսերտելով զանունս նոցին մոռացայ .
 Գետ մի ունի իւր անունով Աստաֆայ ,
 Որ գէմ գրեր՝ սիրով առ կուրն ընթանայ :
 Սոյն կայարան թողինք իւր տեղ մեք կրկին ,
 Կառք բազմելով երթանք ի փօլ լանդադին .
 Տասն երկու վէրստ երբ ճանապարհ չափեցինք ,
 Նոյն ժամանակ փօլ կայարան գրկեցինք :
 Անտի դարձեալ վաղվադակի անկանք չու ,
 Չի միտք ունինք գիշեր մնալ Սալախլու .
 Այն միջոցին մեք կայարան հասանք մինչ ,
 Որ արեղակն նոր մար մտած առնէր նինջ :

Սալախը՝ փօլ ստանդայից ճիշտ միշտ ,
 Տանն և չորս վէրստ լոկ ճանապարհ կայ խարոց .
 Աստ լեռ կայ ոչ այլ ունի դաշտ աննման ,
 Եւ պտուղ շատ մէկին քսան տայ փոխան :
 Երկրիս մարդիկ Սալախը՝ փօլ Աստաֆայ ,
 Ողջ սահմանաց Գաղախ անուն տան հիմայ .
 Գաղախ դաւառ չնշմարեցինք երբէք սար ,
 Այլ նոցա տեղ՝ շատ գիւղերու տեսուի շար :
 Շինականաց մեծ մասն Պարսիկ են աղգաւ ,
 Հայք սոցա հետ թէ բաղդատես են սակաւ .
 Զուրուստանայ և Սղնախայ գետոց ջուր ,
 Յայս գաւառէն դիմեն հանդարտ դէպ ի կուր :
 Վերջնոյն վերայ կայ հնդաչեայ կամուրջ մի ,
 Շատ գեղեցիկ՝ շինեալ ձեռամբ ճարտարի .
 Զոյգ մի պանդոկ կայ կամուրջի երկու ծայր ,
 Յորս ուղեւորք կան՝ և անձոնց տան դադար :

ԳԼՈՒԽ Ի Զ .

Ա. Մեկնին մեր ի Սալախըւայ և դնալ մինչ ի Սարվան :
 Բ. Սարվանայ տեղագիր , և դնալ մինչ ի Սօղանլու : Գ.
 Թողուլ զ Սօղանլու և ժամանել ի Տիֆլիս և այլն :

Ա. Դեռեր հանդիստ լուսացուցինք Սալախը ,
 Յետ արեգին հանդերձեցանք Սօղանլու .
 Քսան երեք վէրստ ուղղակի դնացինք ,
 Հազիւ ուրեմն նոր Սօղանլու բռնեցինք :
 Սալախըւէն մինչ Սօղանլու այսչափ չու ,
 Լինելուն սակա՝ արդարեւ է շատ հեռու .
 Քանդի ձիանք անձրեւ և ցեխ ժամանակ ,
 Յողնելով չեն կարեր քալել համարձակ :

Ուստի շինեն մերձ կամուրջ մի կայարան ,
 Որ երիվարք չափէն աւել չվշտանան .
 Երեք ժամու չափ մնացինք Մօղանլու ,
 Պատճառ՝ չկայր պատրաստի կառք գնալու :
 Ձի մեզմէ շուտ՝ այլ ուղեւորք աստ դալով ,
 Քանի մը դրօկայ հեծեր դացեր են փութով .
 Սպասելով՝ ձիանք բերին՝ այժմ պիտի ,
 Նստեալ գնանք դէպ ի Սարվան ուղղակի :
 Վերջի ողջոյն Մօղանլուայ մեր տալով ,
 Նստեցանք կառք մեզ Յիսուսին յանձնելով .
 Տասն և ութ վէրստ՝ կէս ճանապարհ գնացինք ,
 Հաղիւ նոր մեզ Սարվանայ դիրի ձգեցինք :
 Ճանապարհին ցեխ և տիղմ մեզ խոչընդոտ ,
 Եղէն՝ զի խեղճ ձիք չկարէին փոխել ոտ .
 Ստիպուեցանք երկու վէրստի չափ յուղին ,
 Հետի դնալ՝ հետ մեր պարոն Գրիգորին :

Բ. Սարվան գիւղն է դարձեալ տղատ դաշտի մէջ,
 Եւ պտղատու ունի ծառեր իւր չորս խէճ .
 Սարվանայ պէս դիրք գեղեցիկ աննման ,
 Գիւղ թանգադին կայ՝ Գաղախու ողջ սահման :
 Որիդէն զատ ամէն տեսակ սերմունքներ ,
 Տեղս սիրելով բաշխեն առատ պտուղներ .
 Նա մանաւանդ այն աներես Բեճպէլն ,
 Սարվանայ հետ սէր կապեր է առանձին :
 Ձի ամէ ամ վաստակաւոր ժիր մշակ ,
 Մոքօք շահի ուրիշներէն շատ ըստակ .
 Քառուրդի մը չափ հաղիւ Սարվան կացինք հիւր ,
 Մինչ կառավար կաղմեց ձիեր՝ և կառք իւր :
 Թողինք ապա աղւոր Սարվան իւրեան տեղ ,
 Երթանք Կօտիմ ընկերայս հետ միատեղ .

Տասն վերստ և կէս երբ ճանապարհ կարեցինք ,
 Հասանք Կօտիմ՝ և գիշեր լոյս փոխեցինք :
 Կօտիմ՝ Սարվան կայարանից ճիշտ միջէն ,
 Դարիւ դարիւ Ալկէթ վազէ ուխօրէն .
 Ուր մոլոր Կուր կընթանայ հապճեպով ,
 Ուր ապրին մէջ համեղ ձկունք տեսակով :
 Առաւօտեան զկնի ծագման արեւու ,
 Բազմեր ենք կառք՝ պիտի գնանք Սօղանլու .
 Ճանապարհին այսօր դարձեալ սաստիկ ախլմ ,
 Մեր խեղճ ձիանց ըստոյդ քանդեց ուժոց հիմ :
 Ճարահատեալ ես՝ Գրիգոր՝ Մկրտիչ ,
 Իջանք կառքէն՝ որ զօրանան ձիք սուղ ինչ .
 Մի վերստի չափ իբրեւ ծերուկ անճարակ ,
 Ընկերացս հետ հաղիւ դացինք հետեւակ :
 Ինչ և իցէ շատ նեղութեամբ Սօղանլու ,
 Մուտ գործեցինք՝ և կամք ունիմք գնալու .
 Սակայն այսօր սուրհանդակի օր դուրով ,
 Այլ ուղղորդաց ձի ոչ տային հոս փութով :
 (Թէ Կօտիմէն մինչ Սօղանլու ոք չափէ ,
 Տասն ու հինգ վերստ՝ կէս ճանապարհ գտանէ ,
 Բայց փոխյ պէս հարթ և արձակ չէ ուղին ,
 Զի զառիվարք տեղ տեղ լեալ են խոչ սորին :)
 Զի Տփլիսէն չորս հինգ կառքով արքունի ,
 Թղթատարն աստ հասեր՝ պիտի փոյթ մեկնի .
 Ուստի տեղոյս բոլոր կառքեր լծելով ,
 Հանդերձեցաւ գէպ ի Կօտիմ հապճեպով :
 Մեք եւս քաղաք պարապ դարձող էջմէաց ,
 Զթողինք առանց մեղ տանելու գնան բաց .
 Առ այս կորաւ երկու մանէթ երեքիս ,
 Այլ խօսք տուին մեզ տանելու մինչ Տփլիս :

Գ. Սօղանլուայ տալով ողջոյն մեր յետին ,
 Տէրն յուսալով քաղաք կերթանք խնդադին .
 Տասն երկու վէրտ երբ ճանապարհ կտրեցինք ,
 Պայծառ Տփիսիսն ո՛ւր էր՝ դարձեալ դիտեցինք :
 Երեւանցի արդոյ պարոն Աղաջան ,
 Հարցանելով դայինք մինչ յիւր իջեւան .
 Մեզ հիւրընկալ եղեւ սիրով պարմանին ,
 Հռետոր գրչաց գովասանաց արժանին :
 Մայիս երեք Աշխարհմատրեան կիրակին ,
 Հանգչանք ի դիրկ վրացւոց մայր քաղաքին .
 Պարոն Գրիգոր՝ և Մկրտիչ կեցան խան ,
 Առ սիրեցեալն իմ ի սրտէ Աղաջան :
 Ես դնացի առ տէր Մակար սրբազան ,
 Որ ակնապիշ սպասէր իմ դալտեան .
 Համբոյր աջոյն տալով նստայ հանդէպ իւր ,
 Եւ Աթուէն սուի նմա ըստոյգ լուր :
 Ինձ հրամայեց որ չերթամ խան՝ այլ իւր քով ,
 Մնամ՝ և կեանք անցուցանեմ ապահով .
 Ընկերներէս զատուին երբէք իմ հիմայ ,
 Չկամէի , բայց դիպաւ ինձ ակամայ :
 Նոքա խան՝ ես յաջորդարան մնացինք ,
 Այլ ճանճրութիւն՝ ի՞նչ էր բնառ չղդացինք .
 Տեսանէինք մէկ մէկու օր քանի հեղ ,
 Եւ բաժանման կարօտ մեզ չէր ձգեր նեղ :
 Չորս օր այսպէս հիւրընկալեց մեզ Տփիսիս ,
 Պարկեշտ սիրով թէ ընկերներս՝ և թէ զիս .
 Ժամն եկաւ որ վրաստանի մայր քաղաք ,
 Զիս և ընկերքս խրկէ Պոլիս համարձակ :
 Դեռ չբաժնուած լակոնական կարճ ոճով ,
 Զորպէս սորին տեղադրենք քիչ խօսքով .

Թո՛ղ ընթերցող հէք Տոսպեցւոյն չվշտանայ ,
Թէ է՛ր այսպէս արշաւելով ընթանայ :
Ամէն բանի քիչն աղէկ է՝ բանք մեծաց ,
Պէտք է յարգենք , և հանենք ո՛չ ի մտաց .
Երբ դիպի հոս անդրադ դալս իմ կրկին ,
Յայն ժամանակ ուխտեմ գրել լիովին :

Գ Լ Ո Ւ Խ Ի Է .

Ա. Դիրք քաղաքին , Կուր դետ և այլն : Բ. Օրթաճալայի
ստորադրութիւն , և քաղաքի բնակչաց թիւ և այլն :
Գ. Հայոց եկեղեցիք և քահանայք , և երկու բարի և
վատ յատկութիւնք ժողովրդաց : Դ. Երաժշտական ուս-
մանց աղքատութիւն . գրչի տէր անձինք՝ և լրագիրք :
Ե. Մեծ Շինուածք , և Վաճառականք :

Ա. Այս ճոխ քաղաք ձորերու մէջ շիներ են ,
Եւ երկուստեք լեռներ պարիսպ կոսպեր են .
Դուդարք նահանգ սոյն քաղաքաւ յար պիտի ,
Յայլ նահանգաց հանդիսանայ սխրալի :
Խորխտալով կերթայ մէջէն հզօր Կուր .
Դէպ արեւելք՝ առ իւր համեստ Երասխ քոյր .
Իւրաքանչիւր քաղաքացւոյն իւր պաղ ջուր ,
Մատուռակեալ մատուցանէ՝ և տայ դիւր :
Զոյգ հազարէն աստ աւելի կան ջրկիր ,
Որք ձիերով ջուր կտանեն աներ ժիր .
Որովհետեւ թաղերու մէջ խոր՝ աղբիւր ,
Զգոյով սոցին ջուրս ընձեռնէ միայն Կուր :
Գասնի չափ դետի հետ կան ջրաղաց ,
Որ տան ալիւր ազնիւ ինչպէս շարմաղած .
Մեծին Կուրայ յորձանքներով առնեն դարձ ,
Օր մին կաղայ տանն քոռ ցորեան անկասկած :

Զորս կամուրջ կայ դեռի վերայ՝ բայց այն մին ,
 Պարծանք բերէ ողջ վրայուց աշխարհին .
 Տարածութիւն ձիարշաւի մ' չափ լինի ,
 Եւ երկու կողմն ունի խանութ վաճառի :
 Բուն պատճառ սա ճոխ կամուրջի շինութեան ,
 Է հանդուցեալ վարանցով մեծ փոխարքայն .
 Պերճ Տաթի թաղ և Կուկլիայն սովաւ միշտ ,
 Միմեանց ճամբորդ տան և առնեն առանց վիշտ :
 Երկու կամուրջ անդ են՝ ո՛ւր կայ Մտեխ բերդ ,
 Սոքօք կցի Հալվապարն պինդ քաղքին հետ .
 Իսկ չորորդն է Օրթայճալի ճիշտ գլուխ ,
 Որով Նաւթլուղ կապի ամուր ընդ Խարբուղիս :
 Բ. Սորա հանդէս Օրթաճալայն գեղանի ,
 Ի գիրկ Կուրայ ո՞հ , ինչ աղւոր է կղզի .
 Առատորէն մրդաւէտ ծառք գոյնզգոյն ,
 Զօներ շինիս սիրով անմահ բնութիւն :
 Գաղաքացիքն ունին բազումք աստ այդի ,
 Պէտք է խումբ խումբ տես գան ամէն կիրակի .
 Նոյն միջոցին ե՛կ ցնծութեան տեսարան ,
 Տե՛ս դու սոցա՝ թէ որպէ՞ս կան և ցնծան :
 Մանաւանդ երբ Հայ պատանիքն ազգային ,
 Անուշ երգեր եղանակեն ակմբին .
 Հետ քնարի՝ և ջուտակի զուտ ձայնին ,
 Որ զխտեն տալ շատ նոր աշխոյժ լսողին :
 Եւ այս թռչնոց որք ծառերուն կան ի գիրկ ,
 Ո՞ր թռեացէ իւրեանց անուշ դալլայիկ .
 Այն հէք եղբայրն՝ որ ցաւն ինքեան լիկէ միշտ ,
 Հոս եթէ գայ՝ իւր տխրագին մոռնայ վիշտ . :
 Երկու հեղ եօթն հազար կարծեմ գերդաստան :
 Տփխիս քաղաք այժմ բնակիչ մարդիկ կան .

վերի թուէն երկու մասն են Հայորդի ,
 Իսկ միւս մի մասն Ռուս՝ Պարսիկ՝ Վրացի :
 Գերմանցի . Յոյն՝ Հրէայ՝ և Լատին ,
 Եկ'ց սոցա հետ եւս Մալական և Լէզկին .
 Այս ազգերն են այժմ բնակիչք աշխարհին ,
 Ոմն շատ թուով՝ և ոմն քիչւոր ըստ հաշուին :

Գ. Գասն և հինգ եկեղեցի կայ Հայոց ,
 Եւ սուրբ խաչիւ պատկեալ դմբէթք ըստ թուոց .
 Վաթսունի մօտ քահանայ կան ընդամէն ,
 Եւ հարդերձիւք մին շքեղ է միւսէն :
 Եկեղեցիք ունին պայծառ հանդերձանք ,
 Եւ մեր դրչէն վեր են նոցա գեղգեղանք .
 Բայց ի՞նչ օգուտ աստ պարզութիւն սիրեն միշտ ,
 Պօլոյ պէս ոչ պաճուճանայ դնեն միտ :
 Գովեմ սոցա մի յատկութիւն աննման ,
 Որ գո՛գ թէ շատ ետ մնացեր Տաճկաստան .
 Եկեղեցւոյ դռնէն երբ ներս մտանես ,
 Անշուշտ պէտք է գլխոյդ ծածկոց վար առնես :
 Ամառ ձմեռ սովորութիւն նոցա է ,
 Որ ամէն մարդ բացաւ գլխով աղօթէ .
 Եկեղեցիքն երովպացւոց պէսն խկի ,
 Խորդ փռելու սովորութիւն չէ յարդի :
 Մինչեւ ատեան կուղես դնա՛ սօլդ աղբոս ,
 Մէկ մի չկայ՝ որ քեզ լինի խոչընդոտ .
 Տիրոջ հրաման որ առ Մովսէս մտահան ,
 Արարեալ են « թէ տեղս սուրբ է կօշիկդ հան » :
 Սոյն ոա մասին գովելի է Հայաստան ,
 Որ ոտ բռնիկ Տեառն իւր գնայ յանդիման .
 Մի տրացէ յանդէտս մէկի մը թէ դիպի ,
 Ճիշտ գիտեմ որ՝ լինի իւր մեծ խիղճ սրտի :

Պայծառ Տփխիս խնդրեմ ի քէն այս մասին ,
 Լո՛ւր Տոսպեցւոյ քեզ օգտաւէտ խրատին .
 Յեկեղեցին մտած միջոցդ սօլերդ հա՛ն ,
 Նորէն ապա լե՛ր Արարչիդ յանդիման :

Դ. Բիշ կան յայս տեղ Պօլսոյ նման երաժիշտ ,
 Որ շարական՝ և մեղեդին երգեն ճիշտ .
 Ի բաց առեալ տէր Յարութիւն և քանին ,
 Եղանակաւ , այլքն ինձ ըստոյգ նմանին :
 Բայց դրչի տէր գտայ ապտ մարդ բաւական ,
 Որք ծանօթ են մեր ոսկեղէն դպրութեան .
 Բարոյագէտ Շանշեանց Պետրոս պատուելին ,
 Իւր հմտութեամբ յաւելու փառս քաղաքին :
 (Տեսուչ լեալ է սա Ներսիսեան դպրոցին ,
 Եւ ընծայեր շատ աշակերտ Հայ ազգին :
 Ափսո՛ս որ իւր արժէք ոմանք ժխտեցին ,
 Զինքն հանելով դպրոց դո՛ղ թէ կղպեցին . . . :)
 Զայս հետեւեալքս շարակցենք յետ սորին ,
 Որք են բժիշկ Գրիգորեան և Կարնեցին .
 Աղապէկեան՝ Սիմոնեանց և Գարեգին ,
 Զալալ՝ Պատկան՝ Պերճ՝ Իզմիրեանց և Մանտին :
 Զմոռնանք նաեւ նախկին սանուհք Ներսէսի ,
 Որք հմտութեամբ մէկ մէկէն են աւելի .
 Պատճառ նոցա յառաջադէմ քաջ ուսման ,
 Արհի Ներսէսն էր հինգերորդ սրբազան :
 Զի իւր օրով շինեց զայս ճոխ վարժարան ,
 Որ բարեկարգ մեծ քաղաքներ հազիւ կան .
 Հինգ հարիւրէն այժմիկ աւել կայ տղայ ,
 Որ մեծ դպրոցս գրկեր սիրով դաս կուտայ :
 Սորա նման արդիւնաւոր մի դպրոց ,
 Ինձ թուի թէ՛ թանգադին է յՊղզս Հայոց .

Մովաւ պիտի Աշտարակցին դարուց դար ,
 Տփխիսեցւոյց է՝ և մնայ բարերար :
 Քաղաքս ունի երկու հանդէս Ազգային ,
 Որոց անուանք Մեղու՝ Կռուակ յորջորջին .
 Առաջինն է շարաթական լրագիր ,
 Իսկ երկրորդն է ամսօրեայ թերթ մի ընտիր :
 Սոքա երկուք բաւական չափ քաղաքին ,
 Բարոյական կենաց սպաս մատուցին .
 Այն ճոխ լեզուն՝ որ խլեր էր Վրացին ,
 Կրկին ասոնք նովաւ խօսիլ ուսուցին :
 Երկու մամուլ ունին Հայերն այժմ Տփխիս ,
 Մինն Արծրունեոյն է յիշատակ՝ բայց վերջիս ,
 Բարի անուամբ Լեփիանճեանին պարծենայ ,
 Որոյ նման մեր մէջ կարծեմ կայ՝ Հկայ :

Ե. Կան քանի հատ քարվանսարայ անուանի ,
 Որոց նման դեռ տեսեալ չեմ յայլ երկրի .
 Թամամշովին ամենէն է հրաշայլն ,
 Որ դարուց դար բերէ պարծանս կերտողին :
 Շինեալ կայ նա լայնարձակ մի հրապարակ ,
 Եւ չորս կուսէն ունի շուկայ՝ և կրպակ .
 Ո՛ւր կնատին վաճառականք անուանի ,
 Եւ տան տիրոջ՝ ամսէ ամիս շատ ուսայլի :
 Բաւ հանճարեղ վաճառական կան Տփխիս ,
 Որոց համբաւն ուրախութեամբ լցոյց զիս .
 Թողում ամէնքն միայն յիշեմ Միրզայով ,
 Սակա ճոխութեան՝ որ փող ունի միլոնով :
 Մարդիկ ունի նա ի Բիւղանդ՝ յերովսայ ,
 Չեռամբ նոցին ապրանք կառնէ և կուտայ .
 Ռուսիոյ մէջ ծաղկեալ քաղաք որչափ կան ,
 Միրզայովի հետ բանակցին անխափան :

Երանի՞ թէ իւր մեծ համբաւն յիշելով ,
Ազգին բարիս մի ընձեռնէր ջերմ սիրով .
Բնորէր իրեն մի նպատակ առանձին ,
Եւ ձգէր իւր անուն անմահ մէջ Ազգին :
Թո՛ղ յիշէ նա այն փողի տէր սլարոններ ,
Որ այժմ խաղառ մոռացուեր է անուններ .
Այն որ Ազգին հետ բան չունի՝ Ազգն անոր ,
Սին անուն չի դասեր ի շարս փառաւոր :
Ազգ չի մոռնար իւր Ներսէս և Սամուէլ ,
Շահնազարեան՝ Պէղծեան՝ Պօղոս՝ Առաքել .
Թէեւ մեռան՝ բայց անմահ են մէջ Ազգին ,
Ազգի որբոցն օգնելով՝ Ազգ շահեցին :
Անոր համար Հայ Ազգ սոցա յիշատակ ,
Դպրոցաց մէջ տօնէ ամէն ժամանակ .
Ճառով՝ երգով՝ յիշատակաւ կաթողին ,
Պատմելով դործս մատաղ սանուց դպրոցին :
Ուրեմն դուք եւս ո՞վ ձեռնահաս Ազգայինք ,
Յիշեցէ՛ք հեղ մը Հայոց տղայք՝ որբ՝ այրիք .
Նոցա համար հանէ՛ք դանձուց ձեր բաժին ,
Այսու դուք եւս անմահանաք մէջ Ազգին :

* Յիշեալ մեծ անձինքն են . Ա. Ներսէս Կաթողիկոս .
Տիկիսոց դպրոցի հիմնադիրն : Բ. Սամուէլ Մուրատ փա-
րիզու Հայոց դպրոցի բացման պատճառն . բայց աւա՛ղ ,
որ այժմ օտարաց ձեռքն է . . . : Դ. Պէղծեան Յարութիւն
ամիրայն Ազգի անգուղական բարերարն : Դ. Օտեան
Պօղոս բարեպաշտ իշխան Կարակէօսիւկի դպրոցի շա-
րունակութեան պատճառն : Ե. Շահնազարեան Կարա-
պետ հոգեւոյս բարունին , որոյ անուն յայտնի է ամենե-
ցուն : Զ. Հանգուցեալ Առաքել փաշայն . որոյ անուամբ
եւս հիմնեցաւ Շահնազարեան ուսումնարան :

Գ Լ Ո Ւ Խ Ի Ը .

Ա. Օդ քաղաքին . Արհեստաւորք՝ և ցորեկաճաշ նոցին
և այլն : Բ. Սրճարանաց պախաութիւն և գինեւոտանց
առատութիւն . և սիրահարք նոցին : Գ. Թամանաւայի և
գինեւոտանց օգտակար պատուէր : Դ. Կուսանաց վանք :

Ա. Օդ քաղաքին է քաջառողջ իբր Պօլիս ,
Որ բնաւին ցաւուց զինուք չլկեց զիս .
նորա համար երկրիս մարդիկն անմանն ,
Գեղեցիկ են՝ և պնդակազմ՝ սոմենայն :
Տաճկաստանցւոց պէս չեն նիհար՝ ցաւալի ,
Ապա յաջող՝ առայդ՝ զուարթ՝ և արի .
Ազատօրէն ապրելուն սակս սրտմաշ հոգ ,
Ի սոցանէ չկարէ նեղել երբեք ոք :
Քանի հազար կան խանութպանք տեսակաւ ,
Որոց մեծ մասն Հայկայ ճեւեռն են կարգաւ .
Իսկ միւս մնացեալքն են Պարսիկ և վրացի ,
Գերմանացի՝ Յոյն և Լատին ըստ ազգի :
Յորեկուան ճաշն արհեստաւորք խմբովին ,
Հինգ վեց վարպետ աղաքներով ժողովին .
Շուկայի մէջ նստեալ խանութ ուտեն հաց ,
Ինչ որ առձեռն պատրաստեր է Տէր Աստուած :
Անուշ անուշ խմեն գինին կախէթու ,
Եւ ազգային խաղեր կանչեն լու ի լու .
Ամենայն մարդ ազատ է հոն այս մասին ,
Մէկ մի չկայ որ խոչ լինի դէմ նոցին :
Նաեւ ոմանք արքունական մեծ այգին ,
Երթան՝ ճեմեն՝ և ճաշ առնեն միասին .
Կերպ կերպ ծառոց հով շքին տակ նստելով ,
Խմեն գինին՝ կայսր և Հայ Ազգն օրհնելով :

Երկու ժամ չափ տեւէ այսպէս հացկերոյթ ,
 Եւ է նոցա ամէնօրեայ սովորոյթ .
 Նորէն կրկին սկիզբն առնեն առաւուրին ,
 Մինչեւ երկուսն անցանէ ժամ դիշերին :
 Դառնան տներ խմեն տաք թէյ քանի հատ ,
 Ընտանեաց հետ՝ թէ մեծատուն՝ թէ աղքատ .
 Պօլսոյ նման լեղի սուրճին չեն կարօտ ,
 Այլ խմեն թէյ երեկոյ և առաւօտ :
 Քանի մի ձիրք Հայ վարպետացս աստ սլիտի ,
 Ի դիր առնեմ , որք են փառաց արժանի .
 Սոքա ունին ընկերութիւն իրենց մէջ ,
 Որք համքեարաց սիրով լուծեն դատ և վէճ :
 Ամէն վարպետ շաբաթ մի հեղ իւր բաժին ,
 Անկաճ գումար՝ ձօնէ Աղգի տնանկին .
 Որոց շնորհիւ նոյն խղճալիք քիչ ու շատ ,
 Բարւոքելով միան նոցա բարեմաղթ :
 Սոյն համքեարներ երթան՝ բանեն խմբովին ,
 Երբ որ շինուի տաճար՝ դպրոց Աղգային ,
 Ինքնայորդոր աշխատեն անդ ջերմ սիրով ,
 Վարձս ի Տեառնէ՝ և ոչ մարդոց ուղեւով :
 Երբ որ լինի դատիկ՝ ծնունդ մեծ հանդէս ,
 Ե՛կ՝ տե՛ս ասոնց շքեղութիւն դու պէս պէս .
 Թէ որպի՞սի ցնծութեան մէջ կծփան ,
 Վարպետ՝ բանւոր՝ և նորասուս երախտայն :
 Վաթսունի մօտ դրօշակ լինի ընդ ամէն ,
 Որ պարզել ասն մեր Հայ վարպետք նոյն ատէն ,
 Բացուելուն պէս խումբ խումբ երթան նորա տակ ,
 Հետ զարնելով թմբուկ՝ սրինգ՝ և ջութակ :
 Ուրախութեամբ սարսն խաղան շաբ առ շաբ ,
 Երգելով հետ հին նոր երգ երն անդադար .

Որ տսեր են Սայեաթնովայն և Շիրվն ,
 Աղբար Աղամ Թուրինճ՝ Սէյառն ընդ նոսին :
 Այն խնդութիւն որ տեսեր եմ նոցա քով ,
 Չեմ կարեր հոս բովանդակել ընդ գրով .
 Մոցա օգուտ մեծ է դիտեմ քաղաքին ,
 Միմեանց այսպէս սիրել՝ վառք է մեր Աղդին :
 Բ. Ծուլոց համար շատ քիչ կայ տեղս սրճարան
 Ձի մեծ ամօթ կհամարին սոքա զայն .
 Թէ պատահի հոս Պօլսէն ոք այս մասին ,
 Սուրճ չկամած պիտի վաճ , տայ իւր բախտին :
 Այլ նորա տեղ բաղմացեր է գինեատուն ,
 Զոյգ հարիւրի գո՛ղ թէ հասնի թիւ ողջոյն .
 Դատողութեամբս ես իմ այսքան կարծեցի :
 Թէ Պօլսոյ չափ Տփիսիս գինի դործածի :
 Առած լեալ է ի մէջ նոցա թէ օր մի ,
 Անճար տնանկ մը ճաշ արեր է անդինի .
 Աւագ տէրտէրն այս բօթի լուրն երբ լսեր ,
 Ժամատան մէջ ելեր հօտին ծանուցեր :
 Թէ այս ինչ մարդ ճաշ արեր է անդինի ,
 Եւ է նա շատ կարեկցութեան արժանի .
 Տէր ողորմեա խնդրէ ի ձէնջ իցէ՞ թէ ,
 Աստուած զինքն նոյն դառն վիճակէն ազատէ :
 Թէ բաղդատենք Հայ՝ վրացին այս մասին ,
 Սակս գինւոյ մոլի է շատ վրացին .
 Գեղձուկ աղքատ քաղաք կուգայ անկօշիկ ,
 Բայց քամակէն չի ձգեր բաց գինւոյ տիկ :
 Տօթ և ծարաւ երբ զինքն լծեն սաստիկ նեղ ,
 Այն Ժամանակ մի ասղահով ճարէ տեղ .
 Հոն վար առնէ իւր շալակէն գինւոյ տիկ ,
 Եւ ջրի տեղ կանծէ զնա անուշիկ :

Շատ անգամ նա ջուր չի խմեր ժամերով ,
 Այլ քաղցր զինին . զի տիկ պատրաստ կայ իւր քով .
 Թէ վրաց ազգ Սեբաստիայ՝ կամ կարին ,
 Դէպ լինի դալ . ապրիլն է շատ դժուարին :
 Զի չունին նոյնք բերք խողողոյ կամ այգի ,
 Եւ սովոր են կիսել զհայն անգինի .
 Բայց սոքա որ տղայ տղայ հետ կաթին ,
 Զայն ուսեալ են . չեմ կարծեր որ անդ շահուն :
 Այս ախտ վրաց առ Հայս ոմանս ներմուծան ,
 Զի հետ նոցա կենակցելով փոյթ ուսան . .
 Վատ մոլութիւն չուզեր բնաւ վարժապետ ,
 Առանց անոր ունի բաղում՝ աշակերտ :
 Տեսեր եմ ես Տփլիսոյ մէջ որ կայ մարդ ,
 Կենաց համար կոնծէ դինի շատ գաւաթ .
 Տեսի այլ ոմն որ գովեշու կոտոշով ,
 Խմէ գինին , և դարձեր է գինոյ ծով . . :
 Գ. Թաւմանտային է այս յանցանք թո՛ղ լսէ ,
 Բաղմականաց շատ աւելի չըստիպէ .
 Ապա թէ ոչ այն սխրալի ցնծութեան ,
 Գալի և կռիւ կյաջորդէ անխափան :
 Մի՛ կաղաչեմ կայտառ Տփլիս այս ախտին ,
 Տաս քեզ դերի . . այլ լեր յաղթող դու նմին ,
 Ժուժկալութեան դատով նորա գլուխ չար ,
 Հա՛ր՝ ու կոտրէ՛ . և բնաւին մի՛ խղճար :
 Յիշեա՛ որ նա երբեմն բերաւ ջրհեղեղն ,
 Եւ սուրբ Դովտին գործել տուաւ այն եղեռն .
 Ասորոց մեծ թաղաւորին քանդեց տուն ,
 Եւ սպանեց Հողեփեռնէս մէջ քնոյն :
 Զար Հերովդէս նովաւ կորոյս խելք գլխոյն ,
 Եւ հատ զարեւ Մեծին ի ծնունդս Ամբողւոյն :

Քանի՛ չարիք առթեր է սա աշխարհի ,
 Որ չեմ ուզեր գրեւ ես աստ մի առ մի :
 Լիկ սա կասեմ . զի է կենաց թշնամի ,
 Եւ նմա ո՛վ խուսիկ արկանէ խելք չունի .
 Զդէ՛ եղբայր գինովութիւն դու մեկդի ,
 Եւ մի՛ լինի՛ր նմա սարուկ և գերի
 Խնդրեմ ուրեմն լուր Տոսպեցւոյ խրատին ,
 Եւ արա գինդ՝ զարդ պահէ քոյդ աւանձին .
 Խմէ՛ գինին երեք չորս հատ քեզ անուշ ,
 Բայց նայէ որ՝ չտանէ գլխէդ նա քո զուշ :
 Թէ որ պահես դու այս պատուէրս օգտակար ,
 Հարստութիւն հիւսէ պսակ քեզ պայծառ .
 Որդւոյ որդի յաջողութիւն դարաւոր ,
 Մնայ ձեր տուն՝ և ցեղդ լինի փառաւոր :
 Իսկ եթէ ոչ՝ մերժես իմ խօսքն ունայն տեղ ,
 Այդ ծուռ ընթացք օրմը քեզ անշուշտ ձգէ նեղ .
 Գիտեմ՝ այն օր խրատս պիտի յիշես փոյթ ,
 Բայց խղճութիւն քեզ կաշկանդեր ի՞նչ օգուտ . . . :
 Դ. Կուսանայ վանք մի կայ Տփլիս՝ որ հայ կոյս ,
 Սուտ աշխարհէս փախուստ առեալ տայ անդ խոյս .
 Մերկանայ զարդ և պաճուճանք իւր անձին ,
 Եւ նուիրէ զինքն երկնաւոր փեսային :
 Պահէ ամուր կնիք մաքուր կուսութեան ,
 Եւ կուտայ զինքն խստակրօն ճգնութեան .
 Նարեկ՝ Սաղմոս լինին նմա յար ընկեր ,
 Եւ սուրբ մատենք կան պատրաստ իւր առ ընթեր :
 Նոքօք առ Տէր քաղկատարած աղօթէ ,
 Իւր՝ և Ազգին ձօնել բարիս՝ աղերսէ .
 Իւր սիրասուն ընկերաց հետ անխափան ,
 Ժամա առեն Տեառն օրհնելու կվտ թան :

Հողեւոր մօր կուսաստանին կայ պատկառ ,
Եւ չի առնէր նորա հրաման ոտնահար .
Այժմ հողեւոր մայր նոյն ընտիր կուսանաց ,
Է ի սեպուհ՝ և ճոխ ցեղէն Բէհպուլթեանց :
Քանի չափ կան այս կուսանք նոյնք բոլոր ,
Են տոհմական ծնողաց զաւակ փառաւոր .
Միայն սա կայ՝ որ անօժիտ աղքատ կոյս ,
Վանքի կանոն ներս չառնելով՝ ձգէ դուրս :

ԳԼՈՒԽ ԻԹ .

Ա. Միքայէլ մեծ իշխան . Մտեալ բերդի սուրբ Շուշանի
գերեզման կայն : Բ. Հայոց գերեզմանատուն , հաց ու
տոլք , և սղաւորք : Գ. Աղլիկ ծնողաց ցաւ , ստակով
կին առնել՝ իրաւ առ այնպիսիս : Դ. Քարերար վաւ
քանցով , դպրոց , Եւրոպացի տարազի սիրահարք , և
հանքային ջուրք :

Ա. վրաստանայ ընդհանրական փոխարքայն ,
Կայսեր եղբայրն է Միքայէլ մեծ իշխան .
Բոլոր կովկաս և Ռուսաց Հայաստան ,
Մինչ կասպից ծով՝ յարդեն սորա սէգ հրաման :
Ասոնք ամէն մեծ իշխանիս կան հլու ,
Եւ ո՞վ կարէ դէմ նորա ճիկ հանելու .
Տափի թաղն է իւր հոյակապ արքունիք ,
Որ երբեմն հօտս դարմանէին անդ հովիւք :
Վրաց ազգի Մտեալ բերդի ժամատան ,
Մէջ թաղեր են՝ վարդանայ դուստր սուրբ Շուշան .
Որ Տէր Սիսուս չուրանալու փոխարէն ,
Սպանուեր է իւր ամբարիշտ կենակցէն :
Շնորհիւ Քրիստոս այժմ իւր շիրիմն հիւանդաց ,
Տայ դիւրութիւն լսաւ հշգրիտ պատմողաց .

Փղձկեամբ սրտի չողաց սմա այցելու ,
 Եւ չկարացի առանց լալ ետ դառնալու :
 (Յիշեալ իւր առաքինի ցեղ՝ և հայր ,
 Որք մեր Ազգին կեանս տուին դար առ դար :)
 Սոյն հոյակապ եկեղեցին Ռուսներ ,
 Վրաց ազգէն ձրիաբար ձեռք ձգեր .
 Պարսպապատ կացուցեր են անուանի ,
 Եւ թնդանօթք իւր իրր դադան ամեհի :
 Տօն օրեր երբ կատարեն մէջ մեծ հանդէս ,
 Շատ թնդանօթք անտի նետեն դէն ու տէս ,
 Այն վիթխարի զանգակաց ձայն՝ նոցա հետ ,
 Լսող ունիւր խլացնեն գիտցի՛ր սերտ :
 Ռուսիոյ արծուակիրն արքունի ,
 Հոն դելիլուով ի՞նչ աղւորիկ ծածանի .
 Քանի հատ եւս մեծ տէրութեանց կան բացուած ,
 Որք են Պարսից՝ Եւրովպացւոց՝ և Տաճկաց :
 Հարժապար որ կուր բաժաներ մեկուսի ,
 Այս նազելի շէն կրէ այժմ՝ յիւր դրկի .
 Վրաց բոլոր հին արքունի պալատներ ,
 Հարժապարայ լարաբաժին են անկեր :

Բ . Յայս կողմն է մեր գերեզմանոցն աղգային ,
 Որ է շնորհ՝ բարձր Բեհպուլթեանց մեծ ցեղին .
 Շիներ են հատ մի ժամատուն ի միջի ,
 Յոր հանապաղ վասն մեր Փրկիչն զենանի :
 Շիրիմատանս մէջ կայ լաւ մի ճաշատուն ,
 Որոյ վերայ քանի մը հարիւր բաղմութիւն .
 Կառնէ , երբ որ ուղարկաւորք մեռելին ,
 Չկնի թաղման կան աստ ամէնք . և խմբին ,
 Ննջեցելոյն տան պատրաստած բարութիւն ,
 Հոս ակնքեալ ուտէ եկող բազմութիւն .

Եւ խմելով անուշ դինին կախէթու ,
 Տան զողորմին հանգուցելոյն լու ի լու :
 Թէ և այսու ննջեցելոյ հալոյ՝ եղբարոյ ,
 Քանի հարիւր մանէթ գնայ ի ձեռաց .
 Բայց ի՞նչ օգուտ սովորութիւն քաղաքին ,
 Չայն պահանջէ , ուրեմն պէտք է որ տուփին :
 Այն եղբայր որ կենդանութեան մեռելին ,
 Չէր ճանաչեր , որոյ կին էր՝ կամ որդին .
 Այսօր եկեր բազմեր սեզան աւաթիկ ,
 Ուղածին պէս կուտէ՝ խմէ հանդարտիկ :
 Դառնանք աստի ննջեցելոյն գնանք տուն ,
 Այս ի՞նչ է , ո՛հ , այսչափ կանաց բազմութիւն .
 Պառաւ մեռեր՝ ամէնքն ահա՝ սեւ հագեր ,
 Եկեալ են որ միթիթարեն իւր հարսներ :
 Տասն աւուր չափ պէտք է այնքան բազմութիւն ,
 Մնալով անդ տան խղճալեաց ճանճրութիւն ,
 Կուլան՝ սակայն արտօսը չկայ՝ զի պառաւ ,
 Ամենայն ոք ասէ շատ լաւ՝ որ մեռաւ :
 Յետ տանն աւուր պառաւու թող և հարսներ ,
 Պէտք է արտփեն բարեկամս և ծանօթներ .
 Որք սեւ հագած՝ քանի օր է իւրեանց տուն ,
 Թողեալ եկին , և լացին մահ պառաւուն ,
 Բայց օրէն չէ՝ այն սեւ լաթով տուն դառնան ,
 Այրս պէտք է նոր լաթ առնեն՝ ու դնան :
 Սովաւ նոցա տասնապատիկ լինի ծախք ,
 Քան թաղման օր՝ որ հաց կերին բաղմականք :
 Գ. Մեռելծախուց ծախքէն կարի աւելի ,
 Մախուց դիպի՝ ով որ աղջիկ մի ունի .
 Վայ , այն եղբոր որ չորս հինգ հատ աղջիկ կայ ,
 Այն խղճալիքն ինչպէս՝ պիտի իրկան տայ :

Թէ պատրաստի ունի մանէթ շատ հազար ,
 Նոյն միջոցին փեսայ ճարէ անպատճառ .
 Իսկ թէ չեղաւ՝ իւր աղջկունք պիտի տուն ,
 Մ'ան՝ և շան՝ իւրեանց մատաղ կուսութիւն :
 Թէ և աղջիկ շատ համեստ՝ և հօր որդի ,
 Անմեղութեամբ օր անցուցեր յաշխարհի .
 Սակայն փեսայն նորա վարուց չէ կարօտ ,
 Այլ լոկ փողի , ուրեմն իրեն մեծ ամօթ :
 Փողն առնելով ո'չ ապաքէն դու նորա ,
 Ակնարկութեան պէտք է մնաս ենթակայ .
 Այն ժամանակ տամ ոչ տիտղոս քեզ իրկան ,
 Այլ լինիս մի բախտախնդիր մուրացկան :
 Ձի Տէր կացոյց Ազամ կնոջ իւր իշխան ,
 Եւ ոչ նորա ստրուկ ծառայ անպիտան .
 Դու տիրական հրաման կոխես սակս փողին ,
 Եւ կամովին կնոջդ լինիս աղախին . . . :
 Ձէ կաղաչեմ սիրուն եղբայր՝ առնկդ ինձ տո՛ւր ,
 Խեղճ Տոսպեցւոյն մտիկ արա՛ աղերս լուր .
 Եթէ մարդ չես՝ քեզ մարդ չաներ նորա փող ,
 Իսկ եթէ մարդ՝ այդ մտածմունքդ ուրեմն թո՛ղ ,
 Փնտռէ քեզ կին բարի ծնողաց մի աղջիկ ,
 Լաւ անարար՝ որ քեզ անէ երջանիկ .
 Յոյսդ Աստուծոյ վերայ՝ և ոչ փողին դի՛ր ,
 Բե՛ր համեստ հարադ՝ և նորա հետ կենակցի՛ր :
 Սրբեա՛ նորա հօր տան թափած արտասուք ,
 Ես յուսով եմ՝ վերջ բարեբախտ լինիք դուք .
 Երբ Տէր Աստուած ահանայ ձեր սէր հոգեւոր ,
 Ձեզ օրհնելով փութով առնէ փառաւոր :
 Ուրեմն խնդրեմ ի քէն աղնիւ իմ եղբայր ,
 Մինչ կին առնես՝ մի՛ պահանջե՛ր հետ կաշտու .

Կոխեա՛ զայդ դէշ սովորութեան գլուխ չար ,
Օրինակաւդ լե՛ր հայրենեացդ բարերար :

Դ. Բարերար բառն երբ յիշեցի միտս փութով ,
Եկաւ ահա՛ մեծ փոխարքայն վարանցով .

Որ Տփլսիսոյ բարերարաց առջին ,
Սա բռնէ տեղ՝ ըստ պատմութեան քաղաքին :

Այն Տափի թաղն՝ որ երբեմն խաչն արածէր ,
Նախապէս սա իւր մեծ պալատ հոն կերտէր .

Եւ տեղացիքն հեռեւելով իշխանին ,
Պլանով՝ անդ տուն շինելու ձեռք զարկին :

Քիչ միջոցի մէջ հոյակապ շատ տներ ,
Իւրոյ հանին երեւելի ճարտարներ .

Մէջ ձգելով լայն և ազատ փողոցներ ,
Եւ տան նոցա շուք վարսաւոր նոր ծառեր :

Արքունական քանի մը դպրոց կայ Տփլսիս ,
Յորս կրթին անդ մատաղ մանկունք քաղաքիս .

Պէս պէս ուսմունս Եւրովպիոյ մեծ ազգաց ,
Որոց համբաւ տիեզերս է հռչակուած :

Մասնաւորացն եւս գիշերօթ դպրոց կան ,
Ջալալեանցին ամենէն է պատուական .

Քանի մը լեզուս ալժմ՝ տղայոց դաս կուտան ,
Որ կարող չէ՛ տալ Մուրատեանց վարժարան :

Ունի Տփլսիս հազարէն շատ ձիու կառք ,
Որ երթ և եկք տանեն բերեն համարձակ .

Տեղս մուտ գտեր եւրովպական փափկութիւն ,
Վախենամ թէ՛ սա քաղաքին քանդէ տուն :

Հին զգեստներն առաջ շինուէր քիչ փողով ,
Բայց ներկայիս առ այն պիտի փող յղով .

Թէ ափսոսաց Հայ կին իւր այր՝ և որդին ,
 Պէտք է ձգէ նոր տարազն և հագնէ հին :
 Գողութեան է արժանաւոր հանքային ,
 Տաք ջուր տեղւոյս՝ որ կայ ի մէջ քաղաքին .
 Բղիի այս ջուր նարդանդակի ճիշտ տակէն :
 Ուր քաղաքին բաղանեաց խումբ կան ամէն ,
 Տեղւոյս աղքատ իւր լուաց սա տաք ջրով ,
 Առանց ծախսոյ գիտէ լուալ անխռով .
 Գրիչ բաւէ գոցէ՝ շինիս վայրադիր ,
 Դէպ ի Պօլիս ուղին գիպուածս ա՛ռ փոյթ գիր :

Գ Լ Ո Ւ Յ Լ .

Ա. Թողուլ զՏփիսիս և զնալ մինչ ի Մծիխիթայ : Բ. Մըծ-
 խիթայի տեղագիր՝ և զնալ մինչ Ախրքքալակ : Գ. Թողուլ
 զԱխրքքալակ և ժամանել ի Պէլակօրի : Դ. Գնալ ի Ամու-
 նէթ և գիտուածք հեղեղին և այլն :

Ա. Ընկերացս հետ մայիս ութին հինգշաբթի ,
 Հանդերձեցանք զնալ Բիւզանդն ուղղակի .
 Խրաքանչիւր ոք ի մէնջ մեր սուրբ ողջոյն ,
 Նուիրեցինք մեզ հիւրընկալ Հայերուն :
 Բարեաւ մնաս մեր մատուցինք քաղաքին ,
 Տէրն յուսարով նստանք ֆուրկուն խնդադին .
 Մեզ ի պատիւ ինն հատ ընտիր բարեկամ ,
 Ուղարկաւորք հանդիսացան գո՛գ մի ժամ :
 Մինչ Տփիսիոց ողջունէինք վերջի ծայր ,
 Մեզ գինեաւուն մը քովս փութացէք հրաւէր տայր .
 Կայտառ ծառոց իւր շքին տակ թափեցինք ,
 Միմեանց կենաց վերջի գինին խմեցինք :
 Հրաժարական սիրոյ համբոյրն իրարու ,
 Տարով ահա՛ պատրաստուեցանք զնալու .

Երբեանցի արդոյ պարօն Աղաջան ,
 ինձ բարերար հանդիսացաւ նոյն ժամայն :
 Զի հիւքոյս անդ զուարթ սրտիւ տուաւ ձօն ,
 Ի պէտս ուղին արծուակիր ինն կառպօն .
 Գոհարերան առաքինւոյն օրհնեցի ,
 Հաղար բարիւ երկնից նմա մաղթեցի :
 Մինչ այս մինչ այն՝ եկաւ հասաւ բաժանման ,
 Կէտ՝ մեղ Պօլիս , նոցա Տփլիս նոյն ժամայն .
 Միմեանց կրկին վերջի համարս մատուցինք ,
 Լալոտ աչօք նստանք փութկուն դնացինք :
 Մի թափածու մեծ խաչ տեսինք յուղին մեր ,
 Կանգնեալ յանուն Նիկողայոս մեծ կայսեր .
 Հոս պատմեցին թէ կայսր ձիէն անկեր վար ,
 Եւ խաչս անկեր իւր պատմագիր գարուց դար :
 Հանդարտ կերպով հակառակ կողմ կուրայ հեռ ,
 Ի սիրտ ուրախ շարունակենք այժմ մեր երթ .
 Քսան վերատի չափ ճանապարհ երբ գացինք ,
 Հին Մծխիթայն ո՛ւր էր աչօք գլխեցինք :
 Բ . Այս Մծխիթայն երբեմն լեալ է օրորան ,
 Ծիրանածին արքայորդւոց վրաց տան .
 Նաեւ նոցին կաթողիկոսք յայսմիկ վայր ,
 Նստելով կեանս անցուցեր են քանի մը դար :
 Եւ իւր մէջի սա հոյակապ սուրբ տաճար ,
 Մեր պատմութիւն կ'հաստատէ անպատճառ .
 Բայց ներկայիս մի փոքր աւան դարձեր է ,
 Քար սիրան անգամ սորա վերայ արտապուէ :
 Յարեւելեան կողմն աւանիս տարի ծայր ,
 Տեսանի անդ մի քարաշէն մեծ տաճար .
 Յրդ՝ է նա մայր եկեղեցին վրացւոց ,
 Հին ատեն վիրք ատո ձօնէին զոհս կուոց :

Մինչեւ երեկ օրիորդ կոյս սուրբ Նունի ,
 եւ քարոզեաց հոս զանաւն Տեառն Յիսուսի .
 Գակեց բոլոր կռատուններ նաեւ սա ,
 եւ շինեց տուն անմահ էին մշտակոյ :
 Նախ քան շինումն անկեց աստ մի խաչափայտ ,
 Որուն ծածկէր լոյս արեղին ճառագայթ .
 Մարդիկ երկրիս սքանչելեացս երբ դիպան ,
 Իսպառ իսպառ չար կռռքերէն հեռացան :
 Սրդ՝ սա դողով ի շէնս կուսին անդրանիկ ,
 Սորին տակս մայր մակդիր տան իւր վրայիք .
 Սովորաբար վրաց վանքերն ամենայն ,
 Սորա նման լերանց կատար շինեալ կան :
 Արաքլի գետ որ կովկասից վար կուգայ ,
 Մծխիթայի մօտ ըշտապէ գիրկ կուրայ .
 Համբոյր ավանց նորին ձօնէ ջերմ սիրով ,
 Կուխտէ իսպառ անրած կերպով մնալ քով :
 Թողինք աւան իւր սահմանօք մեք շխտակ ,
 Ելեալ գնացինք հիւր առ փոքրիկ մի գետակ .
 Իւր ավանց մերձ մարդերաց մէջ մեր կայքեր ,
 Վար առնելով՝ անդ մնացինք նոյն գիշեր :
 Առաւօտ շուտ մայիս իննին ուրբաթ օր ,
 Տէրն յուսալով չուն ձեռք առինք անդանօր .
 Նոյն երեկոյ Սխրքալակ մեզ կանչեց ,
 Հիւրասիրեալ արշալուսին ուղարկեց :

Գ. Վերջի բարեւ մեզ հիւրընկալ Հայ գեղին ,
 Տալով՝ դարձեալ սկիզբն արինք նոր ուղին .
 Դէպ ի Գորի հեծեր կերթանք ուղղակի ,
 Տեսէ՞ք ինչպէ՞ս սար ձոր կանանչ հագել ի ,
 Կտիր կտիր արօտական կով՝ ոչխար ,
 Սա հովտաց մէջ որպէ՞ս ճեմեն շար առ շար .

Հարիւրաւոր պաղ աղբրկունք միաբան ,
 Զովացնեն իւրեանց ջրով սոյն սահման .
 Նոցա ծարաւն հալածելէն զինի ,
 Զըզըզալով դիմեն ի կուրն շեշտակի :
 Հասանք Գորի՝ բայց կացինք ոչ ի միջի ,
 Զի տակաւին պայծառ արեւ մտել չի .
 Օժանդակին կուրայ չողանք ընդ ավով ,
 Եւ գիշերն անդ լուսացուցինք ապահով :
 Գետիս վերայ կայ նոր փայտից կամուրջ մի ,
 Եւ մի եւս գիւղ հինգ վեց տնւոր վրացի .
 Այս գետ հարաւ լերանց կողից կըզխի ,
 Եւ Գորվոյ վար կուր դիմելով ամիրտի :
 Սորա պէս եւս լիախով կովկաս լեռներէն ,
 Լնթանայ կուր՝ և զատուի ոչ իւր մօտէն .
 Լիախով գետէն միւս օրն անցանք մէկալ կոյս ,
 Դէպ ի Սուրամ երթանք յԱստուած կալեալ յոյս :
 Երեկոյին հետ արեւու մրափման ,
 Սուրամ կարգաց մեզ հրաւեր առժամայն .
 «Թէ եկէ՛ք քովս՝ հիւր կացն՝ք ինձ այս գիշեր» ,
 Արշալուսին ելէք՝ գնացէ՛ք ի չուն ձեր» ,
 Նորա հրաւեր յօժար սիրով յարգեցինք ,
 Քով դիմելով գիշեր լուսի փոխեցինք .
 Երկուշաբթի մինչ արեգակն ծնանէր ,
 Յայն միջոցին չուն մեզ հանդէպ ելանէր ,
 Վերջի բարեւն մեզ հիւրընկալ աւանին ,
 Տալով զատուանք ի նմանէ խնդազին .
 Մտադիր եմք դնալ մինչեւ ի Մօլիթ ,
 Եւ մեր ակրաստն անդ տետելու գրինք միտ :
 Առ ավի ջրոյն՝ տնկոյց ներքեւն անուշիկ ,
 Նստեալ սիրով կերինք հանդարտ մեր հացիկ .

Զոյդ ժամու չափ անցուցինք կեանս աստանդ ,
 Հանդերձեցանք ապա անտի Պէլակօր :
 Զորերու մէջն ընկերացեալ հեռ գետին ,
 Տաղ երգելով չուն թլպատենք ցնածագին .
 Զուարթ սրտիւ Պէլակօրի բռնեցինք ,
 Քով մնարով խաւար լուսի փոխեցինք :
 Դ. Երեքշաբթի զկնի ծագման արեւու ,
 Մտադիր եմք մինչ Սիմոնէթ գնալու .
 Բայց ի՞նչ օգուտ մեր նպատակ մնաց տեղ ,
 Զի արդիւնց մեզ կատաղի յորդ հեղեղ . :
 Վասնզի ահա՛ երկնից կամարն սեւ ամպով ,
 Կէս ժամու մէջ պարփակեցաւ շատ շուտով -
 Ահա ելի ձայն որոտման երբ դուչեց ,
 Գո՛գ կենդանոյն մեզ գերեզման հրաւիրեց :
 Վերջ հրբնկէց կայծակ նմա յաջորդեց ,
 Խժաւ յանտառ՝ և ահ դողով մեզ ճզմեց .
 Զկնի սոցա շիթք անձրեւաց տասուկաղին ,
 Մեր միութեան մէջ բաժանման խոչ արկին :
 Մի արտավար ի մէնջ առաջ չորս ֆուրկուն ,
 Զարկին անցան մեծ հեղեղատ մի խօլոյն .
 Մեր ֆուրկունճին և երկուք եւս իւրեան հեռ ,
 Զանք արին որ նոցա շաղկէն չմնան ետ :
 Մե՛ղք հազար որ գաղան հեղեղն ամեհի ,
 Մեր ուղին դէմ պարխապ քաշեց չեշտակի .
 Արդեւ զմեզ նոյն օր չգնալ Սիմոնէթ ,
 Եւ ետ դարձոյց ճանապարհէն չորս հինգ վերստ :
 Մի վրացույ խանութ գտանք մութ իրր բանտ ,
 Եւ նոյն գիշերն անճարացեալ կացինք անդ .
 Յորդ անձրեւէն խանութի տախտ թրջուեր ,
 Զոր տեղ մը չկայր՝ որ գնէինք գլուխ մեր . : :

Ամենեւին քուն տեսին ոչ մեր աչքեր ,
 Խորհէինք թէ ի՞նչ եղէն մեր ընկերներ .
 Նոյն խղճալիքն այլ մեզ համար լացեր են ,
 Ասելով թէ « հեղեղին որս դացեր են : »
 Շատ նեղութեամբ անցաւ ի մէջ այն գիշեր ,
 Նախ քան զարեւն ելեալ երթանք ի չուն մեր .
 Փափագէինք կարօտակէզ ի սրտի ,
 Իցէ՛ տեսնամք մեր ընկերներ կենդանի :
 Ինչպէս որ մեք՝ արդ նոքա եւս մեր նման ,
 Մեզ փնտռելու համար ահա՛ կուգան ման .
 Երբ ողջանգամ պատահեցանք միմեանց ,
 Շատ խնդութեանց աղայի պէս ելանք լաց :
 Այն սուրբ փափագ որ բոլորիս տեսուէր քով ,
 Ո՛հ կարող չեմ զայն բացատրել աստ դրով .
 Իմ ասածներ կհաստատէ անշուշտ նա ,
 Որ այսպիսի դէպքի եղեր հնթակայ :
 Մեր փութկունքու պղտիկ եղբայր Նիւլմահմատ ,
 Երբ որ տեսաւ կենդանի իւր հարազատ .
 Անկաւ վզնով՝ և զինք գրկեց ջերմ սիրով ,
 Ի՞նչ ազնիւ էր եղբայրական իւր դորով :
 Մարդարտի պէս հատիկ հատիկ իւր աչկունք ,
 Ո՛հ ինչ աղւոր թորացնեն արտասուք . :
 Այսպիսարար ուրախութեամբ միարան ,
 Սիմոնէթին ըսկսեցինք գալ ճամբան .
 Մեր նախաճաշն հոն առնելէն զկնի ,
 Բարձինք կերթանք ի ֆիւթայիսն ուղղակի :



ՔԼՈՒԽ ԼԱ.

Ա. Թողու՛լ զՔիւթայիս և գնա՛լ ի փոթի . և անտի ի շո-
ղենաւն : Բ. Պարի՛լ թլրին ձկանց և այլն . ժամանե՛լ ի
Պաթու՛մ՝ և անտի ի Պոնտոս : Գ. Պոնտոս ելանե՛լ զուրս
և գառնալ կրկին ի Նաւն՝ ժամանե՛լ ի Քրասոն՝ և անտի ի
Սամսոն : Դ. Թողու՛լ զՍամսոն և ժամանե՛լ ի Կ. Պօլիս և այլն :

Ա. Քիւթայիսու մէջ մեր խմլով այս անգամ,
Հազիւ եթէ հիւր մնացինք հինգ վեց ժամ .
Երեկոյի ժամ զարկոցին անկանք չու ,
Եւ փափաղինք մինչեւ Մարան գնալու ,
Ողջոյն գիշերն կռիւ արինք ուղին հետ ,
Եւ մեր աշկունքն այլ իւրեանց քուն դրին ետ .
Երբ որ աշխարհ արշալուսին պերճ դալուստ ,
Տօնախմբէր՝ նոր մեք Մարան արինք մուտ :
Քանի մի ժամ հազիւ աւան պահեց մեզ ,
Հանդերձեցանք գնալ ապա փոթին տես .
Նստանք նաւակ մի պատրաստի վրացի ,
Անքայլ ոտիւք փոթ կվազենք շեշտակի :
Մինչ աւանին մեր ջերմ բարեւ ձօնեցինք ,
Գիշերի ժամ չորան անցեր էր վճռեցինք .
Առաւ տարաւ մեզ սենեակ մի մեր նաւորդ ,
Եւ գիշերին անդ անցուցինք մնացորդ :
Մայիս ամսոյ տաան և վեցին երբ շաբաթ ,
Յաղթանակաւ նկուն առնէր հէք ուրբաթ .
Մեք եւս նոյն օր ընկերութեամբ միասին ,
Փօթայ տուինք հրաժարական գլխովին :
Չոգանք անտի նոր շոգենաւ մի պզտիկ ,
Որ տեսակաւ էր ամուր և գեղեցիկ .
Սէգ Ռիոնին գիրկ բազմեր է պատրաստի ,
Եւ սրինգով իւր ճամբորդաց բարբառի :

«Թէ եկէ՛ք քովս զձեզ տանեմ՝ ի Պաթում ,
 «Անցուցանեմ գոռող Սեւ ծովն անտրտում » .
 Չողանք առ նա տեղ մի գտանք ապահով ,
 Հոն օթելով ողջունեցինք զՍեւ ծով ,
 Դէմ դրեր ենք կերթանք Պաթում խաղաղիկ ,
 Եւ կիչէ մեզ զեփիւռն իւրեան հով հեղիկ .
 Մանտրիկ ալիք ծովուն խայտան շար առ շար ,
 Հետ միմեանց առնելով միշտ խաղ ու սլար :

Բ. Թլբին ձկունք ութ ինն մէկէն խմբովին ,
 Կայտուելով առաջնորդեն մեր նաւին .
 Նաւի շրթանց իւրաքանչիւր չուական ,
 Կայներ դիմէ խաղ սլար սոցին անխափան :
 Գիտես եթէ գնացից նաւին նախանձին ,
 Նորա համար արդեւելու աշխատին .
 Անթարթ կերպով մեր լուսոյ լիճ խաղ սոցա ,
 Տեսանելով խնդութեանց մէջ կծփայ ,
 Վասնայսորիկ սատարութեամբ բերանին ,
 Ամենայն ոք փառս առաքէր Անեղին .
 Զի վասն մարդկան զայս ամենայն տռնելով ,
 Լցոյց սլապէս լուզականօք սլարապ ծով ,
 Մարդիկ տեսէ՛ք խնամք ձեր հօր Բարձրելոյն ,
 Եւ օրհնէք միշտ նորա պայծառ սուրբ Անուն .
 Զլինի եթէ անոր բոլոր երախտիք ,
 Մոռանալով լինիք որդիք տմարդիք :
 Նա ամենայն քոյգ հողալով պէտք կարիք ,
 Պատրաստեց նախ՝ որ դիւրութեամբ ապտ ապրիք .
 Դու որ ամէն զայս բարիս միշտ վայելես ,
 Ի սուրբ սրտէ պէտք է քո տէր յար օրհնես :
 Օրհնեա՛ դառնուի որ հանգերձեալ բարութեան ,
 Առաքինեաց փառացն առնէ քեզ արժան .

Արդ՝ այսպիսի զբօսանքս քոյժ բաղում ,
 Կրկին անգամ ողջունեցինք զՊաթում :
 Նոյն քաղաք մեզ երեք չորս ժամ հագլու թէ ,
 Այս անգամիս հիւրասիրեալ կշահէ ,
 Ինչո՞ւ գիշեր մեծ շոգենաւ փոխուելով ,
 Կերթանք Պոնտոս ահա՛ հեզիկ զեփիւռով :
 Յետ սուրբ զենման պատարագին կիրակի ,
 Մեր շոգենաւ հասաւ հանգէպ Պոնտոսի :
 Խարխախ նետեց քանի ժամ քով կեցաւ հիւր ,
 Եւ քաղաքին հետ արար նա շատ առտուր :

Գ. Ելինք ցամաք պերճ Պոնտոսին շոգանք տես ,
 Վազվազակի հարցեալ գաի ծանօթներս ,
 Ընկերացս հետ հետեւելով ես նոցա ,
 Կայտառ Պոնտոս մինչ երեկոյ պուտայ :
 Տունք ապա անկեղծ զողջոյն մեր յետին ,
 Մեզ մեծարող նոյն տիրապահ քաղաքին :
 Դարձանք անտի և միափանք շոգենաւ ,
 Մինչ ծերունի արեւ կրկին մանկացաւ :
 Երկուշաբթի երբ ժամացոյց հինգ զարկաւ ,
 Մեր շոգենաւն նոր կապանքէն արձակուաւ :
 Սիգադէնաց այժմ՝ Գրասոն արչաւէ ,
 Եւ ո՞վ է՝ որ իւր ժիր ընթացս արդելէ :
 Հասանք քաղաք՝ բայց նախ քան դայն արեւ մար ,
 Մուտ գտեր էր՝ և իբր Յոնիան կխորտայր :
 Քանի մի ժամ զինք զիտեցինք մութ աչքով ,
 Ի վերջ ապա դէպ ի Սամսոն շոգանք ծով :
 Մեր կապուտակ երկնից կամարն ո՞հ ինչոյէս ,
 Զուտ աստեղաց տեսանեմք նոր զհանդէս :
 Բիւրք բիւրոց թուով ոչ դան ի հաշուի ,
 Մեր Ստեղծողէն զարդ կացուցան գիշերի :

Տէր իմ որդէ՞ս առանց իւղի և ձիթոյ ,
 Պատրաստեր ես՝ որ լոյս ձօնեն յար մարդոյ ,
 Այս սղայծառ ասող յատուկ դիտես մեր նաւին ,
 Նշանացի ճամբայ բանայ առանձին :
 Եւ մեր նաւի մեծ նաւապետ նստեր է ,
 Նորա լնթացք նայելով նաւ կշիտիէ .
 Փառք քո անուան Աստուած հզօր և գթած ,
 Որ ծովու մէջ տառ ուղղեցոյց նաւորդաց :
 Ինչ և իցէ երեքշաբթի առաւօտ ,
 Արեւ ծագին հետ Սամսոնայ չողանք մօտ .
 Վեց ժամու չափ խարխախ ձգեց կեցաւ անդ ,
 Հանաւ շատ բեռ՝ առաւ փոխան հակ և մարդ :
 Դ. Կէս օրէն ետք թողինք Սամսոն և պիտի ,
 Ինապօլի երթանք առանց արդելքի .
 Տէրն յուսարով չուոյն սկիզբն արարինք ,
 Անքայլ ոտիւք գիշեր մինչ լոյս գնացինք :
 Մայիս քսան չորեքշաբթի ցորեկին ,
 Հասանք հանդէպ ինապօլայ քաղաքին .
 Մէկ երկու ժամ նորա գիմայ չողենաւ ,
 Խարխախ ձգեց՝ և գնացից կանդ առաւ :
 Մակոյկներով ընդունէր իւր ագահ փոր ,
 Կերպ կերպ ապրանք երկրին թէ վատ՝ թէ աղւոր .
 Դեռ շատ մակոյկ բեռինս բարձած կայներ են ,
 Տատարկելու համար կարգի սպասեն :
 Ես այլ սլարապ չմնալուս աղաղաւ ,
 Քրասօնէն աստ որչափ մեզ դէպք դիպաւ .
 Դրի առի՝ որ չլինի թէ ունայն տեղ ,
 Արանեղով թիւն մեզ ճղմելով ձգէ նեղ :
 Վերոյիշեալ երկու տող բան երբ պրծայ ,
 Տեսի որ նաւն չուակունաց լուր կուտայ .

Դուրս դարձողներ մինչ փողի ձայն լսեցին ,
 Անմիջապէս նստան մակոյի դնացին :
 Հոն շագենաւն ժողովեց յինքն տաք շողին ,
 Եւ հաւասար մեքենայից ետ բաժին .
 Նոքա երբ որ այս պարզեւէն կշտապինդ ,
 Վայելեցին՝ աշխատելու զրին միտ :
 Նորա համար շատ ժամերով անխափան ,
 Աշխատեցին գիշեր մ' և ողջ տունջեան .
 Մաքառելով ընդ Սեւ ծովու դռն ալեաց ,
 Շողենաւին չու կյորդեն սրնթաց :
 Քսան և մէկ մայիս ամսոյ հինգշաբթի ,
 Ժամ մէկն անցեր է գրեթէ գիշերի .
 Նոր ներս մտանք մեք բերանից նեղուցին ,
 Եւ երկուստեք տանք բարեւ ճոխ վտարին :
 Մեր աչաց դէմ բիւր հրադ և լապտեր ,
 Վառուած կան ո՞հ սա հոյակապ սլալատներ .
 Մաքսի դիմաց հասեալ խարիսխ ձգեցինք ,
 Եւ նոյն գիշերն անդ խաղաղիկ ննջեցինք :
 Երբ ընդ գրկեց քսան երկու թիւ մայիս ,
 Ոտք Տոսպեցւոյն ողջունեցին մեծ Պօլիս .
 Գնացինք մաքս մեր մանտր մունտր աշեցին ,
 Նուէր մ' առեալ փութով զմեզ ճամբեցին :
 Զոգայ անտի Սիւմպիւլի խան դէպ ուղիդ ,
 Եւ կալայ վերջ Ղալաթիոյ զշաւիդ .
 Մտի տուն Տեառն հանդէպ փրկի պատկերին ,
 Ծունր կրկնեցի մեր կենարար Արքային :
 Փղձկեալ սրտիւ իմ գոհութիւն մատուցի ,
 Զի շնորհիւ իւր չտեսինք վնաս ինչ յուղի .
 Այլ լինելով ողորմելոյս սահապան ,
 Հատոյց դարձեալ զիս ի Պօլիսն անսասուն :

Իմ սիրական հարք և եղբարք միասին ,
 Տեսանելով փառս ձօնեցի Արարչին .
 Ողջոյն սիրոյ տալով նոցա նստեցայ ,
 Դիտոյս եկած դիպուածս նոցա մերկացայ :
 Հինգ վեց ամիս Թափառական եղկելիս ,
 Այսպիսաբար կեանս անցուցի մեծ Պօլիս .
 Յետոյ չոգայ փոքր Հայաստան ուղղակի ,
 Ստուգաբար գրել զորպէսն իմս Ազգի :



ՅԱՆՆ

ՅԱՌԱՋԱՐԱՆ . — ԵՐԵՍ Գ .

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՄԱՅՐ ԱԹՈՌՆ ԱՐԱՐԱՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ա .

Ա . Կ . Պօլէն մեկնիլ , Պոնտոս ժամանել և անցադիրն առնել : Բ . Դէպ 'ի Պաթում երթալ , Վլէտէմիր շողեւնաւի գնացք և Սեւ ծովու կատաղութիւն : Գ . Պաթում հասանել և քաղաքին ստորագրութիւն : — Երա . 1 :

ԳԼՈՒԽ Բ .

Ա . Պաթումէն մեկնիլ , Սեւ ծովու ալեկոծութիւն և փոթ ժամանել : Բ . Դիրք քաղաքին և Ռիոն դէտ : Գ . Թիւ բնակչաց , հին ամրոց և հեռագիր : — Երա . 3 :

ԳԼՈՒԽ Գ .

Ա . Օդ քաղաքին և դորտոց բազմութիւն : Բ . Խողք , պաշարումն փոթայ ի ջրոց : Գ . Սաստիկ հով , մտածմունք և աղօթք : — Երա . 9 :

ԳԼՈՒԽ Դ .

Ա . Մեկնիլն մեր 'ի փոթայ և Մարան ժամանել : Բ . պատրաստութիւն ուղին : Գ . Ստորագրութիւն աւանին , թիւք տանց , ոչխարաց սակաւութեան պատճառն և : — Երա . 12 :

ԳԼՈՒԽ Ե .

Ա . Մեկնիլն մեր 'ի Մարանայ յարթ ուղիք Կուպլիցքայի և խիտ անտառք : Բ . Քիւթայիս ժամանել և ստորագրութիւն նորին : — Երա . 16 :

Գ Լ Ո Ւ Խ Զ .

Ա. Հրաժարիլ 'ի Քիւթայիսայ և ժամանել մինչ 'ի Սուրամ : Բ. Սուրամայ ստորագրութիւն : Գ. Ճալայ ուշանալու պատճառ : Դնալ մինչ Օրկորէֆ : և տկարութիւն : Գ. Միայն գնալ մեր 'ի Գորի : — Երս. 21 :

Գ Լ Ո Ւ Խ Է .

Ա. Գորուայ ստորագրութիւն : Բ. Ընկերացս գալուստ և մեկնիլն մեր ի քաղաքէն : Գ. Գնալի Գարսղաճ և տնտի յԱխրքալակ : Դ. Թողուլ զԱխրքալակ և ժամանել 'ի Տիւխիս : — Երս. 23 :

Գ Լ Ո Ւ Խ Ը .

Ա. Մեկնիլն 'ի Տիւխիսայ ուղտովք և ստորագրութիւնը նոցին : Բ. Գալ 'ի Զալիքասան : Գ. Բացօթեայ լինիլն մեր՝ յորդ անձրեւ և աղօթք : Դ. Մարդստիրութիւն զթած Հօր՝ և դէպք ուղտոց : — Երս. 29 :

Գ Լ Ո Ւ Խ Թ .

Ա. Զախմախլու ժամանել, սրանեղութիւն մեր, զխել միայն 'ի կայարան և դանդաղիլ 'ի վերայ ուղտապանաց : Բ. Վրէժխնդրութիւն մեծաւորի տեղոյն սուպարսիս, և հանդերձիլ 'ի Քարվանսարայ : Գ. Քարվանսարայ ժամանել և տեղեկագիր նորին : Դ. Գնալ 'ի Զուրուստան և վայրագիր նորին : — Երես 35 :

Գ Լ Ո Ւ Խ Ժ .

Ա. Մեկնիլն 'ի Զուրուստանայ և ժամանել 'ի Տիւիճանքանք կառապետին և յուսակառուր վիճակ մեր : Բ. Ներկայանալ Տեսուն և աղօթել վասն յաջողութեան : Գ. Մեր ծանուցումն և հիւրանէր Հայու պատրաստութիւնն : — Երես 38 :

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ա. Տիվիճանայ ստորագրութիւն : Բ. Ուսման անտարբե-
րութիւն՝ և առաջարկութիւն առ Մայր Աթոռն վասն
հոգ տանելոյ ուսման : Գ. Շինութիւնք՝ հեռագիրն և:
Դ. Մեր հարցական եղանակաւ քարոզ՝ ժողովրդոց ծա-
րաւն առ այն և քահանայի հիւրասիրութիւն : — Երա. 44:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ա. Մեկնիլ ՚ի Տիվիճանայ, և գնալ ՚ի Սիմոնովկայ : Բ.
Ստորագրութիւն Սիմոնովկայի և գնալ ՚ի Զպուխու : Գ.
Հիւրասիրութիւն քահանային և տեղագիր գիւղին : Դ.
Գնալ Օրտակիւ և ստորագրութիւն Սեւանայ ծովուն :
— Երես 49 :

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ա. Ստորագրութիւն Շաղկոցաձոր գաւառին : Բ. Օրտակ-
լու ժամանել՝ գնալ յեկեղեցին և ողորմելի մերկութիւն
նորին : Գ. Թիւ քահանայից, ժամասացութիւն դպրաց,
չիրխը գեղջն և հողագործք : Դ. Պանդխտութեան փնտ-
տմանց գաւառաց՝ ծառադուրի վիճակ գիւղին, հիւրա-
սէր երեցփոխան և:
— Երես 54 :

ԳԼՈՒԽ ԺԴ.

Ա. Գնալ ՚ի Կոտայք գաւառ. անտի ՚ի Քանաքեռ : Բ.
Երթալ յԵրեւան և անտի ՚ի սուրբ Էջմիածին : Գ. Մեր
նկատմամբ կաթողիկոսի դիրք, Նորին հարցմունք և մեր
պատասխան : Դ. Մերժումն կարեւոր խնդրանացս, առ
մեզ ստիպանալիք, և միտիւթարել զմեզ հարց : — Երես 59:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Ա. Մարդասիրական գորով վեհախառն և քաջալերու-
թիւն նորա առ նուաստս և:
Բ. Տաճկաստանցի Հայոց
մասին կաթողիկոսի հետ մեր խօսակցութիւն : Գ. Օգտա-

կար առաջարկութեամբ խնդիր խմբի նմանէ և բացա-
սական Նորին : Դ. Դիրք վանուց և ճարտարապետ նո-
րին : — Երես 64 :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ .

Ա. Եկեղեցին ուր լինէն , Պարթեւ զանգակատան հիմ-
նադիրք : Բ. Եկեղեցւոյ ստորագորութիւն և ոմանց կա-
թողիկոսաց դործք : Գ. Թանկադին զարդք Աթոռին ,
Ախմէօն և Ղուկաս կաթողիկոսաց դործք : — Երես 69 :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է .

Ա. Արտաքին տեսք վանուց , վեհարան և սինօդ : Բ.
Թանգարան և Ուսումնարան , թիւ մանկանց և կարգադ-
րութիւն նոցին : Գ. Հարաւ կուսէ շինութիւնք , սեղա-
նատունք և միաբանութեան սենեակք եւ : — Երես 74 :


Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը .

Ա. Ղազարապատի ստորագորութիւն : Բ. Միաբան հարց
որքանութիւն : Գ. Աթոռէն դուրս շինութիւնք , հան-
դուցեալ հայրապետք Գայիանէի վանուց , լիճն և ան-
տառ , և վազարչապատ քաղաք եւ : — Երես 78 :



Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՅԵԶՄԵԱԾՆԷ Ի Կ. ՊՕԼԻՍ



Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ .

Ա. Թողուլ զիջմիածին և գնալ յԵրեւան : Բ. Յովհան-
նէսեանց եղբարց հիւրասիրութիւն եւ : Գ. Բարեմաղ-
թութիւն իմ առ Տէր՝ վասն վարձատրութեան նոցին .
և այլոց նոյնպիսեաց : — Երես 84 :

ԳԼՈՒԽ Ի.

Ա. Երեւանայ ստորագրութիւն , դիրք տեղւոյն է : Բ.
Բերք , կրպակք , եկեղեցիք է : Գ. Բերդ , կլինայն , և
Շահրխարցւոյ դէպք : — Երես 88 :

ԳԼՈՒԽ ԻԱ.

Ա. Մասիս լեռի ստորագրութիւն է : Բ. Նոյի գոհ , և
ցրուիլ կենդանեաց է : Գ. Դէպք Արտաւազդայ : Դ.
Ջրհեղեղի ժխտողք , Ջգօն Սուրբ Յակոբայ ջանք , և վեր-
ջին շարժն Մասիս լեռին : — Երես 92 :

ԳԼՈՒԽ ԻԲ.

Ա. Արադած լեռին ստորագրութիւն : Բ. Թողուլ զերե-
ւան և դնալ 'ի Քանաքեռ և տեղագիր նորին : Գ.
Քանաքեռի դիւցադներ : — Երես 96 :

ԳԼՈՒԽ ԻԳ.

Ա. Մեկնիլն մեր 'ի Քանաքեռայ , և ժամանել մինչեւ 'ի
Սօխի՝ քանառալ : Բ. Դնալ յԱխթայ և անտի յԵլինովկայ :
Գ. Ելինովկայի ամբոյի ստորագրութիւն : — Երես 101 :

ԳԼՈՒԽ ԻԴ.

Ա. Մեկնիլ Ախտայէն , և դնալ 'ի Սեւան կղզին : Բ. Տե-
ղագրութիւն նորին : Գ. Թիւ միաբանաց է : Դ. Ան-
ուանի հարք Սեւանայ : — Երես 106 :

ԳԼՈՒԽ ԻԵ.

Ա. Մեկնիլն մեր 'ի Սեւանայ , և դնալ մինչ 'ի Տիլիճան
յորդ անձրեւ : Բ. Թողուլ մեր զՏիլիճան և դնալ մինչ
'ի Չախմախլու : Գ. Բաժանել 'ի Չախմախլուայ և ժա-
մանել 'ի Սալախլու : — Երես 110 :

ԳԼՈՒԽ ԻԶ.

Ա. Մեկնիլն մեր 'ի Սալախլուայ և դնալ մինչ 'ի Սարլան :
Բ. Սարլանայ տեղագիր , և դնալ մինչ 'ի Սողանլու : Գ.
Թողուլ զՍողանլու և ժամանել 'ի Տիլիխ է : — Երես 114 :

ԳԼՈՒԽ ԻԷ.

Ա. Դիրք քաղաքին, Կուր գետն : Բ. Օրթաճալայի ստորագրութիւն, և քաղաքի բնակչաց թիւն : Գ. Հայոց եկեղեցիք և քահանայք, և երկու բարի և վատ յատկութիւնք ժողովրդոց : Դ. Երածչտական ուսմանց աղքատութիւն, զրջի տէր անձինք և լրագիրք : Ե. Մեծ շինուածք և վաճառականք : — Երս 118 :

ԳԼՈՒԽ ԻԸ.

Ա. Օդ քաղաքին, Արհեստաւորք և ցորեկաճաշ նոցինն : Բ. Արճարանաց պակասութիւն և գինեւանց առատութիւն և սիրահարք նոցին : Գ. Թամանտայի և գինեմուլից օգտակար պատուէր : Դ. Կուսանաց վանք : — Երս 124 :

ԳԼՈՒԽ ԻԹ.


Ա. Միքայէլ մեծ իշխան. Մտեխ բերդի սուրբ Շուշանի դերեզմանն : Բ. Հայոց դերեզմանատուն, հաց ուտողք, և սգաւորք : Գ. Աղջիկ ծնողաց ցաւ, ստակով կին առնել խրատ առ այնպիսի : Դ. Բարերար վարանցով, դպրոց, Եւրոպացի տարացի սիրահարք, և հանքային ջուրք : — Երս 129 :

ԳԼՈՒԽ Լ.

Ա. Թողուլ զՏիֆլիս և գնալ մինչ 'ի Մծխիթայ : Բ. Մըծխիթայի տեղագիր և գնալ մինչ Ախլըքալակ : Գ. Թողուլ զԱխլըքալակն և ժամանել 'ի Պելաիորի : Դ. Գնալ 'ի Ախմեթ և դիպուածք հեղեղին : — Երս 134 :

ԳԼՈՒԽ ԼԱ.

Ա. Թողուլ զՔիւթայիս և գնալ 'ի Փօթի, և անտի 'ի չողենաւն : Բ. Պարիլ թլբին ձկանց : Գ. Ժամանել 'ի Պաթուս : Դ. Պոնտոս՝ ելանել դուրս և դառնալ կրկին 'ի նաւն, ժամանել 'ի Քրասոն և անտի 'ի Սամսոն : Դ. Թողուլ զՍամսոն և ժամանել 'ի Կ. Պօլիս : — Երս 140 :



ԳԻՆ 6 ՂՐԾ



0003984
0003992
0003993

